

Ա. Դ. ՏԵՐ-ԳՐԵԼՈՒԳՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
VI-VIII ԴԱՐԵՐՈՒՄ



ԵՐԵՎԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Ազգային Ակադեմիա

ԿՈՄԻԿԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱԿԱՏԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԱՏԵՏՆԵՐԻ

Ա. Ե. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ


## ՀԱՅԱՍՏԱՆԻ VI—VIII ԴԱՐԵՐՈՒՄ

(ԱՐԱԲՈԿԱՆ ՆՎԱԶՈՒՄՆԵՐԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ԵՎ  
ՏԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ)

A ii  
83821



ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀԲԸ ԾՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
1996



Տպագրվում է Հայաստանի ԳԱԱ պատմության և առելեագիտության  
ինստիտուտների գիտական խորհուրդների ուղղմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմ. զիտ. թեկ. Վ. Ա. Տեր-Ղեկինյանը  
Կիրը հրատարակության և երաշխափուրել գրախոսներ՝ ԳԱԱ ակադեմի-  
կոս Հ. Մ. ԲՈՐԻԹԻՑՅԱՆԸ և պատմ. զիտ. դոկտոր Վ. Մ. ՎԱՐԴԻՅԱՆՅԱՆԸ

### ՏԵՐ-ՂԵԿԻՆՅԱՆ Ա. Ն.

Տ 457 Հայաստանը VI—VIII դարերում (Արարական նր-  
վաճումներին նախորդող և տիրապետության հաստատ-  
ման առաջին շրջանում) / Պատմ. խմբ.՝ Վ. Ա. Տեր-  
Ղեկինյան /, ՀՀ ԳԱԱ պատմ., արևելագիտ. ին-տներ:  
— Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, 192 էջ,  
1 նկ.:

Աշխատությունը նվիրված է Հայաստանի VI—VIII դարերի  
պատմությանը: Տարբեր սկզբնաղբյուրների հիման վրա շարադր-  
ված է Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի արարական  
նվաճումներին նախորդող ժամանակաշրջանում, պարսկա-բյուզան-  
դական մրցակցությունը, Հայ ժողովրդի ազատազրական պայքարը,  
նաև Հայաստանի վերջնական նվաճումը արարների կողմից: Նկա-  
րադրված է Հայաստանի անտեսական և քաղաքական ծանր կա-  
ցությունը, խալիքայության քաղաքականությունը Հայաստանում:  
Նախատեսված է բնիթերցող լայն շրջանների համար:

Տ 0503020913  
703(02)-96

ԳՄԴ 63.3(2Հ) 42

ISBN 5-8080—0328-8

ԱՐԱՄ ՆԱՀԱԳԵՏԻ ՏԵՐ-ԳԵՎՈՆԴՅԱՆ  
(1928—1988)

Մեզանից անժամանակ հեռացած ՀՀ ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտների բազմամյա աշխատակից Հայագետ-արաբագետ Արամ Տեր-Ղեղոնդյանը ծընվել է Կահիրեռում 1928 թվականին՝ 1948 թ. ներգաղթել է Հայաստան: 1954-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, աշակերտելով մեծանուն Հայագետ-էկզպարան Հրաչյա Աճառյանին և այլ անվանի Հայագետների: 1958-ին նա ավարտեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան, ուսումնառությունն անցկացնելով Լենինգրադում, ակադ. Հովսեփ Օրբելու դեկանարությամբ:

Արամ Տեր-Ղեղոնդյանը արևելյան և եվրոպական մեկ տասնյակ լեզուների իմացությամբ ու պատմաբան-բանասերի խոր գիտելիքներով զինված, թողել է գիտական պատկառելի ժառանգություն: Մի ամբողջ երեսնամյակի ընթացքում նա իր հիմնարար աշխատություններով նոր մակարդակի բարձրացրեց Հայաստանի պատմության մի մեծ ժամանակաշրածի ուսումնասիրությունը:

Թե՛ իրեն անձ, թե՛ իրեն քաղաքացի և գիտնական Արամ Տեր-Ղեղոնդյանը այսօր էլ հիշվում է որպես ինքնատիպ մի դեմք: Նա կարողացել էր լավագույնս յուրացնել այն ամեն օգտակարը, որ տվել էր Կահիրենի միջնակարգ դպրոցը, Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և Լենինգրադի արևելագիտական դասական դպրոցը: Նրա աշխատությունները, որ ընդգրկում են Գ—ԺԴ դարերը, վե-

բարերում են պատմությանն ու բանասիրությանը, աղջուռ-ռազմականն ու վիմագրությանը (բնդշանուր առմամբ՝ 7 դիրք և հարյուրից ավելի գիտական հոդվածներ՝ գրված անհրաժեշտ խորությամբ և գիտական միծ բարեխղճությամբ):

Ա. Տեր-Ղեոնդյանը բացառիկ կարևորություն էր տալիս սկզբնադրյուրների ուսումնասիրությանը՝ իրեն պատմափուռության հիմք: Այս բնագավառում նա շարունակեց ու զարգացրեց անվանի արարագիտ Հ. Նալլանդյանի ստեղծած ավանդությունները: Փաստորեն, այս երկու գիտնականների շրնորդիվ է, որ արարական աղբյուրների թարգմանությունն ու ուսումնասիրությունը մեզանում դրվեց գիտական լուրջ հիմքերի վրա: Դրա արտահայտությունը եղավ «Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին» արժեքավոր մատենաշարի «Իրն ալ-Ասիր» (Երևան, 1981) հատորը: Դեռևս անտիպ են Ա. Տեր-Ղեոնդյանի գրեթե երկու հատոր կազմող թարգմանություններ՝ քաղված Թ—Ժ գարերի արար պատմիչների և աշխարհագիրների երկերից:

Ա. Տեր-Ղեոնդյանի անխոնջ շանքերի շնորհիվ է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում ստեղծվել Արևելյան աղբյուրագիտության բաժինը, որի հիմնադիր-վարիչը եղավ ինքը, այս պաշտոնը վարելով մինչև իր կյանքի վերջը:

Դեռևս 60-ական թվականներից սկսած, Ա. Տեր-Ղեոնդյանը լրջորեն հետազոտում էր Հայոց պատմության մի կարևոր ժամանակաշրջան՝ Հայաստանը և նրա հարարերությունները արարական աշխարհի հետ միջին դարերում («Արարական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում», 1965): Նա աստիճանաբար մոտենում էր իր գիտավոր նպատակին՝ աղբյուրագիտական հարուստ հիմքի վրա, հայ և օտար հեղինակների նորագույն աշխատությունների օգտագործմամբ, Հայաստանի և Արարական խալիֆայության փոխհարարերությունների պատմության կերտմանը: Այս աշխատանքը հանդիսացավ Ա. Տեր-Ղեոնդյանի գոկտորական թեզը՝ «Հայաստանը և Արարական խալիֆայությունը» (1977, ոռուերեն) խորագրով: Այստեղ նորովի է արր-

վում գարաշրջանի բազմաթիվ բարդ ու խրթին հարցերի պատճությունը, Հայաստանի կիսանկախ վիճակը է դարի 40—90-ական թվականներին: Հստակեցված է Հայաստանի, իրեւ Արարական խալիքայության մաս կազմող մի երկրի կարգավիճակը Բ.—Թ դարերում, նրա տեղը «Արմինիա» կուսակալության մեջ, Հայաստանի պահպանած ներքին ինքնավարության տարրերը Ամենայն խորությամբ բացահայտված է «Հայոց իշխան» պաշտոնի էությունը և դրա զարգացումը գարերի ընթացքում, քննության առարկա ևն գարձել խալիքայության և Հայ ազնվականության փոխարարերությունները, Հայերի ապստամբությունները արարական տիրապետության դեմ, Հայաստանում ստեղծված արարական ամիրայությունները, զրանց թողած հետքերը Հայաստանի ներքին կյանքում: Ա. Տեր-Ղեոնդյանի այս աշխատության հիմնադրությները տարիներ անց տեղ գտան նաև «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակի երկրորդ հատորում, ամբողջացնելով Հայոց պատճության ավելի քան երկդարյան մի փուլ:

Ա. Տեր-Ղեոնդյանի գիտական վաստակի մի կարենոր բաժինը Հայ մատենագիրների երկերի աշխարհաբար թարգմանությունն ու ուսումնասիրությունն է, առաջին հերթին երկու մեծ պատմիչների՝ Ագաթանգեղոսի և Ղեոնդի: Սա հենց այն աշխատանքն էր, որ կարող էր իրականացնել Հայագետ-արարագիտը: Բացի Ագաթանգեղոսի նշանավոր «Հայոց պատճության» գրաբարից աշխարհաբար թարգմանությունից (1977, ամբողջականը՝ 1983 թ.), Ա. Տեր-Ղեոնդյանը Հայտնարերից ու Հրապարակեց Ագաթանգեղոսի պատճության արարական թարգմանության լիակատար ընագերը, ուսումնասիրեց նրա մինչ այդ անհայտ հատվածն ու իրականացրեց դրա գիտական հրատարակությունը (1968): Վերջապես, 1987-ին լույս ընծայեց Ղեոնդի պատճության իր աշխարհաբար թարգմանությունը:

Ա. Տեր-Ղեոնդյանի շատ հոգվածներ հրապարակվեցին Մոսկվայի և Լենինգրադի գիտական պարերականներում,

ինչպես նաև «Revue des Etudes Arméniennes» հանդեսում:

Գիտական հետազոտություններին զուգահեռ Ա. Տեր-Ղեոնդյանը երկար տարիներ դասավանդում էր Երևանի պետական համալսարանում, պատրաստելով արևելագետներին ուր սերունդ, օգնելով նրանց գիտական առաջին փորձերին:

Պատմական գիտությունների զոկառը, պրոֆեսոր Ա. Տեր-Ղեոնդյանը արևելագիտության մեջ ունեցած իր մեծ ավանդի համար բարձր գնահատականի էր արժանացել նաև Խորհրդային Միության և արտասահմանի գիտական խոշոր կենտրոնների կողմից: 1973 թ. անվանի Հայագետ-բյուզանդագետ Նինա Գարսոյանի անգլերեն թարգմանությամբ Լիսարոնում Հրատարակվեց նրա «Արարական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում» աշխատությունը: Նա քննությած էր Հայկի գիտության պատմության ինստիտուտի պատվագոր անդամ, իսկ 1986 թվականին՝ Հոռմի «Տիրերինա» ակադեմիայի թղթակից անդամ:

Իր կյանքի վաթուններորդ տարում հանկարծաման եղած գիտնականը թողել է նաև անտիպ աշխատություններ: Բացի արար մատենագիրների երկերի թարգմանություններից, Ա. Տեր-Ղեոնդյանն սկսել էր «Հայաստանը և արարական աշխարհը է—ժօդ դարերում» մեծածավալ աշխատության շաբաթանքը, մի զործ, որ պիտի հանդիսանար Հեղինակի տասնամյակների հետազոտությունների ամբողջացումը: Աշխատանքը պետք է ընդորկեր մարզպանական շրջանից մինչև օսմանյան տիրապետության հաստատումը Հայաստանում, ներառելով ոչ միայն արարական տիրապետության շրջանը, այլև Բագրատունյաց Հայաստանը, Զաքարյան իշխանականությունը, Կիլիկյան Հայաստանը և այլն: Ընդ որում, Հեղինակը նպատակ ուներ անդրադառնալու Հայ-արարական թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ մշակութային բազմազան հարաբերություններին այդ ամբողջ ժամանակաշրջանում:

Ա. Տեր-Ղեոնդյանը հասցրեց շաբաթել նախատեսված աշխատության առաջին հինգ գլուխները միայն, շաբաթ-

բանքը հասցնելով մինչև Բ դարի 40-ական թվականները:

Ներկա աշխատանքը, ի տարրերություն «Հայաստանը և Արաբական խալիֆայությունը» գրքի, շարադրված է միանգամայն այլ մոտեցումով։ Այստեղ զուգահեռաբար ներկայացվում է Հայաստանի և Խալիֆայության, Հայերի և արաբների պատմությունը, առավել մանրամասնորեն է անդրադառնությանը այս երկուսի շփման կետերին, փոխհարաբերություններին։ Չնայած երկու աշխատությունները գրվել են մոտավորապես 10—15 տարվա տարբերությամբ, խնդրո առարկա ուսումնասիրությունում շրջանառության մեջ են դրված մի շարք նոր աղբյուրներ և ուսումնասիրություններ։ Քանի որ աշխատության այս հատվածը բավականաշատ ամբողջական է, նպատակահարմար գտանք, հաշվի առնելով նրա զիտական արժեքը, այն հրատարակել այնպես, ինչպես որ թողել էր հեղինակը։

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,  
արևելագիտության ինստիտուտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՆԱԽԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՆԱԽԱՌԴՅՈՂ  
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

**1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱԶ ՄԻՋԱՎԱՐԹՈՒՄ (Դ—Է ԴԱՐԵՐ)**

Սասանյան Պարսկաստանի (Դ դարի վերջին տասնամյակիների) գրոհը դեպի Հայաստան և Հարակից երկրներ արմատապես փոխեց քաղաքական իրազրտմանն այդ երկրներում։ 387 թ. կնքված Հռոմեա-պարսկական պայմանագրով նա ստացավ Մեծ Հայքի թագավորության մեծ մասը։ Մեծ Հայքից խլվեցին ու Հարակից երկրներին միացվեցին որոշ նահանգներ<sup>1</sup>, իսկ 428 թ. վերացավ Հայոց Արշակունյաց թագավորությունը<sup>2</sup>։ Դ դարի վերջերին վիրքը դարձավ Պարսկաստանին Հարկատու Հպատակ երկիր, ուր թագավորի կողմին նստում էր բգեշխը (պիտիաշխ), որը հսկում էր նրան<sup>3</sup>։ 523 թ. վիրքը դարձավ մարզպանություն<sup>4</sup>։ 387-ից Աղվանքն ընկավ Սասանյան Պարսկաստանի տիրապետության տակ և հիմնականում կառավարվում էր պարսիկ մարզպանի կողմից, որը նախ նստում էր Կապաղակում (Ռստանի մարզպան), ապա 462-ից՝ Պարտավում<sup>5</sup>։ Ըստ էության 462 թվականից, բայց վերջնականապես 510-ին վերջ տքրվեց Աղվանքից թագավորների ձեռական իշխանությանը։ Այս ընթացքում վերացավ նաև Մազքթաց Արշակունիների թագավորությունը մերձկասպյան շրջաններում<sup>6</sup>։

Մեծ Հայքի մեկ հինգերորդը զիշելով Հռոմեական կայսությանը, Սասանյան Պարսկաստանն իր ձեռքում պահեց

Մեծ Հայքի շորս Հինգերորդ մասը<sup>7</sup>, ամբողջ Վիրքը, Աղվան-քը, մերձկասպյան շրջանները՝ ճորտա պահակով ու Դարրամ-դով միասին: Հոսմի (Հետագայում՝ Բյուզանդիայի) ձեռքում, բացի Մեծ Հայքի մեկ հինգերորդից, մնաց նաև Լազիկան:

Մերձկասպյան շրջանները գտնվում էին ուղղակի Տիգ-րոնի Հսկողության տակ: Կալվատ և Հատկապես Խոսրով Ա Անուշիրվան արքաների օրոք ամբությունների մի ամբողջ շարք կառուցվեց Դարրամդում: Փայտակարանում կհնու-րոնացած էին Սասանյանների Հիմնական ռազմական ուժե-րը: Սակայն այս ամբողջ ռազմական Համակարգի հսկողու-թյունը իրականացվում էր Սյունյաց կամ Միսականի իշխան-ների կողմից: Սասանյանները Սյունյաց իշխաններին էին Հանձնել նաև Հայկական Արցախ նահանգի կառավարումը, որն այդ ժամանակից կոչվեց Փոքր Սյունիք կամ Միսական ի Կոտակ<sup>8</sup>:

Հայաստանը մարզպանության շրջանում միշտ էլ պահ-պանել է իր ներքին ինքնավարությունը, ի հեճուկս Սասան-յան արքաների, որոնք փորձեցին այն վերացնել: Հազկերտ Բ-ի Հայոց ինքնավարությունը վերացնելու փորձը Հանդի-պեց Վարդանանց ապստամբությանը, որը թեև Հաջողություն-շունեցավ, սակայն վահան Մամիկոնյանի ապստամբությու-նը պսակվեց Հաղթանակով՝ Նվարսակի պայմանագրով (484)<sup>9</sup>, ուր սրբագործվեց Հայաստանի ինքնավարության սկզբունքը: 428-ից մինչև 572 թ. Հայաստանն ունեցել էր թե՛ պարսիկ, թե՛ Հայ մարզպաններ, ինչպես Ե գարում՝ վա-սակ Սյունին<sup>10</sup>, Սահակ Բագրատունին<sup>11</sup>, Վահան Մամիկոն-յանը<sup>12</sup>, Զ գարում՝ Վարդ Մամիկոնյանը<sup>13</sup> (պատրիկ) և Մժեժ Գնունին<sup>14</sup>:

Սակայն Հայաստանի բյուզանդական մասում Հուստի-նիանոս Ա կայսրը իր մի քանի հրովարտակներով վերացրեց ներքսագույն Հայքի (Բարձր Հայք) և Հատկապես սատրա-պտթյունների (Ծոփք) ներքին ինքնավարությունը<sup>15</sup>, և Հայ նախարարական տները քայլացվեցին: Այս քաղաքականության Հետևանքով Զ գարում Հայ նախարարներն ու եկեղեցին որոշ շափով Հակվեցին գեպի Սասանյան Պարսկաստանը<sup>16</sup>:

Հայաստանը միշտ էլ (Արտաշեսյան թագավորության ժամանակաշրջանից մինչև ԺՄ դարը) գերիշխող դիրք ուներ Վիրքի, Աղվանքի և մերձկասպայան շրջանների նկատմամբ և հատկապես Հայ եկեղեցին (վաղ միջնադարում), որին հնաթակա էին այդ երկրների եկեղեցիները:

Զ դարի ասորի պատմիչ Զաքարիա Հոնետորը վկայում է. «Հյուսիսային շրջանում կան Հինգ Հավատացյալ ժողովուրդներ, որոնք ունեն բանշորս եպիսկոպոս և իրենց կաթողիկոսը Դիմումում է՝ Պարսկական Հայաստանի գլխավոր քաջարության հրենց (առաջին) կաթողիկոսի անունը Գրիգոր էր, արդար և Հայտնի մի մարդ»:

Ապա Գուրգանը (Վիրքը), Հայաստանում մի երկիր և իր լեզուն Հունարենի նման է և ունի քրիստոնյա թագավոր, որը ենթարկվում է Պարսկաստանի արքային:

Ապա Առան երկիրը Հայաստան աշխարհում, իր լեզվով, Հավատացյալ ու մկրտված մի ժողովուրդ և ունի իր թագավորը, որը Հայատակ է Պարսկաստանի արքային:

Ապա Սիսական երկիրը իր լեզվով, Հավատացյալ մի ժողովուրդ, քայլ այնտեղ ապրում են նաև Հեթանոսներ:

Բազգուն (Բաղասական) երկիրն իր լեզվով, որը միանում է ծովին և տարածվում մինչև Կասպից դարպաները Հոների երկրում»<sup>17</sup>:

Հայաստանի գերակշիռ դերը շեշտվում էր նաև նրանով, որ Սասանյան Պարսկաստանի գեմ ապստամբությունների (451, 481—484, 572 թթ.) ժամանակ Հայաստանն էր այն Հիմնական ուժը, որի շուրջն էին Համախմբվում վրցիներն ու աղվանները:

Հայ եկեղեցու Հեղինակությունն ու գերակայությունը Հարեւան երկրների եկեղեցու նկատմամբ պայմանավորված էր այն բանով, որ դեռ Պ դարի սկզբներին Գրիգոր Լուսավորչի գործունեության շնորհիվ և Տրդատ Պ թագավորի հրամանով Հայաստանում քրիստոնեությունը դարձավ պետական կրոն, և Հայաստանը դարձավ այն օջախը, որտեղից նոր կրոնը ներթափանցեց Վիրք<sup>18</sup>, Աղվանք<sup>19</sup> և մերձկասպայան շրջանները<sup>20</sup>:

իր ժամանակին անգնահատելի ծառայություն մատուցեց նաև Մեսրոպ Մաշտոցը: Հայ պետականության հոգեվարքի պայմաններում (387—428) ստեղծելով և հիմք դնելով զարգացած հայ մատենագրությանը, նա միաժամանակ օժանդակեց վրաց<sup>21</sup> ու աղվանից<sup>22</sup> գրերի ստեղծմանը:

Կ. Կեկելիձեկի վկայությամբ վրաց մատենագրությունը Ե—Ը դարերում հայ մատենագրության ազդեցության տակ է զարգացել, նույնիսկ 607 թ. եկեղեցական խզումից հետո<sup>23</sup>:

Կ. Տրեվերի կարծիքով է զարում արդեն աղվանից եկեղեցին, որ ենթակա էր հայ եկեղեցուն, հայերենն էր օգտագործում իրեն ժամանացության լեզու, և անհնարացան աղվանից գրերը<sup>24</sup>: Ուստի հայերենը եկեղեցական ու գրական լեզուն էր Աղվանքում:

Շուտով առաջացան գավանարանական վեճերը, և Հայաստանն ու հայ եկեղեցին կրկին գլխավոր շարժիչ ուժերն էին այս երկրամասում:

Քաղկեդոնում 451 թ. տեղի ունեցած շորորող տիեզերական ժողովում ընդունվեց, թե Քրիստոսը մարդկության տարիներին ուներ երկու քնություն՝ աստվածային և մարդկային, որն ընդունեց Հունաց եկեղեցին<sup>25</sup>: Սակայն առաջացավ երկարնակ ուսմունքի դեմ մի ընդդիմադիր Հոսանք՝ միաբնակները, որոնք ընդունեցին Քրիստոսի միայն աստվածային քնությունը, այն որդեգրեցին Եգիպտոսի զպտի եկեղեցին, ասորի միաբնակ Հակոբիկ եկեղեցին և Հայոց եկեղեցին՝ իրեն ենթակա վրաց և աղվանից եկեղեցիներով:

Բարեկեն Ա. Ոթմսեցի կաթողիկոսի օրոք 506 թ. վրաց ու Աղվանից կաթողիկոսների մասնակցությամբ Գլինէ՛ Ա. Ժողովը մերժեց քաղկեդոնականությունը<sup>26</sup>: Այսպիսով, Հայոց եկեղեցին ավելի սահմանակատվեց Բյուզանդիայի պաշտոնական եկեղեցուց (373 թ. Հայոց նորբնաիր կաթողիկոսներին ձեռնադրվելու համար Կեսարիա շուղարկելուց հետո), և շեշտվեց նրա աղքային ինքնուրույնությունը. դա առավել ընդունվեց 556-ին Ներսիս Բ Բագրեանդեցու օրոք գումարված Դիլինի Գ ժողովում, որ հայ եկեղեցին ասորի միաբնակների

Հետ մեկտեղ դատապարտեց քաղկեդոնականությունը<sup>27:</sup>  
Սակայն քաղկեդոնականության դիմ պայքարից առավել  
զրատապ էր Հայ եկեղեցու դիմադրությունը ասորի նեստորա-  
կան եկեղեցու ոտնձգություններին:

Հենվելով Սասանյան Պարսկաստանի հովանակորության  
վրա, ասորի նեստորական եկեղեցին ձգտում էր իր գողա-  
փարական ազգեցությունը տարածել Հայաստանում և միր-  
բում, որը, սակայն, չեղորացրեց Հայ եկեղեցին իր Համառ  
պայքարով։ Այդ գոտեմարտը սկսվեց Եղարի ՅՈՒ-ական թր-  
վականներին, բնդզրկեց ամբողջ Զ դարը և թուլացավ ու մտ-  
րեց միայն Է դարի սկզբին<sup>28:</sup> Դրանից հետո, Զ դարի վեր-  
շին և է դարում, սրվեց Հայոց եկեղեցու պայքարը քաղկեդո-  
նականության դիմ, որը շատ երկար տևեց։

Այս Հանգամանքը, երբ Հայաստանը քաղաքական, եկե-  
ղեցական ու մշակութային մասարեզզներում գերակշռություն  
ուներ իր անմիջական հարեանների նկատմամբ, իր արտա-  
հայտությունը՝ գտավ նաև արարական տիրապետության ժա-  
մանակաշրջանում։

## 2. ՀԱՅԱՑ ԽԾԽԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

387 թ. ստեղծված քաղաքական իրադրությունը Հայաս-  
տանում և Հարակից երկրներում արմատապես փոխվեց 572—  
591 թթ. բյուզանդա-պարսկական պատերազմի հետեանքով,  
որի առիթը 571—572 թթ. Հայերի ապստամբությունն էր  
Սասանյան Պարսկաստանի դիմ։

Դեռև 560-ական թվականներին Սասանյաններն սկսել  
եին կրոնական անհանդուրժողություն ցուցաբերել և Հար-  
կերը բարձրացնել Հայաստանում։ 571-ին ապստամբական  
տրամադրություններ կային Հայաստանում, և Հայ նախա-  
րարներն ու եկեղեցին սկսեցին բանակցություններ Բյու-  
զանդիայի Հուստինոս Բ կայսեր հետ։ 572-ին Խոսրով Ս Ա-  
նուշիրվանը զորք ուղարկեց Հայաստան, սակայն Հայ ապրս-

տամբների զորքը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, Հաղթեց պարսիկներին, և սպանվեց Սուրեն մարզպանը<sup>29</sup>. Սակայն անխուսափելի պարսկական նոր ներխուժման պայմաններում Վարդան Մամիկոնյանը, Հովհաննես Բ Գաբեղենացի կաթողիկոսը և մի խումբ նախարարներ Կոստանդնուպոլսում, Հուստինոս կայսեր ստիպմամբ, ինչպես և օդնություն ստանալու հույսով, ընդունեցին քաղկեդոնակություն<sup>30</sup>:

572 թ. Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև սկսվեց պատերազմը, որը փոխնիվոխ Հաշողություններով շարունակվեց երկար ժամանակ: Բյուզանդական զորքի կազմում Վարդան Մամիկոնյանը շորս տարի կռվեց պարսիկների դեմ: Սակայն 590 թվականին պարսիկ զորավար Վահրամ Զուրինի (Որմիզդ Դ արքայի դեմ) ապստամբության հետևանքով Բյուզանդիան գերակշռություն ստացավ<sup>31</sup>: Սպանված Որմիզդի դեռատի որդի Խոսրով Բ-ը օգնություն խնդրեց Մավրիկիոս կայսրից, և բյուզանդական զորքը, որի կազմում էր նաև Մուշեղ Մամիկոնյանի գլխավորած Հայկական զորքը, 591 թ. պարտության մատնեց Վահրամ Զուրինին<sup>32</sup>: Նույն տարում կնքվեց պայմանագիր, ըստ որի Հայաստանի մեծագույն մասը (մինչեւ Դվինի մոտ գտնվող Աղատ գետը) անցավ Բյուզանդիային: Պատերազմից հետո Մուշեղ Մամիկոնյանից Կոստանդնուպոլսում կայսրը պահանջեց ընդունել երկար բնամակունքը, սակայն նա մերժեց<sup>33</sup>:

Հստ Հովհաննես Գրասիանակերտցու, Հայաստանի Տուրուբերան, Տայք նահանգներն ամբողջովին և Այրարատի մեծ մասը կցվեցին կայսրությանը: Կազմավորվեցին նոր վարչական միավորներ: Պոնտոսը Տրապիզոն կենտրոնով կոչվեց «Մասն Մեծ Հայոց», նախկին ներքին Հայքը (Բարձր Հայք), որը Կարսոն նահանգն էր, «Մեծ մասն Մեծ Հայոց»: Տուրուբերանը (Բասինից մինչև Ասորեստանի՝ Վերին Միջագետքի սահմանը) կոչվեց «Մեծ Հայք»: Այրարատի բյուզանդական մասը՝ «Ներքսագոյն Հայք, իսկ Տայքը՝ «Խորագոյն Հայք»: Փոքր Հայքի Հարավային մասը Մե-

Միտինե կենտրոնով կոչվեց Առաջին Հայք, Փոքր Հայք-  
րի հյուսիսային մասը Սերաստիա կենտրոնով՝ Երկրորդ  
Հայք, Կապագովկիան Կիսարիա կենտրոնով՝ Երրորդ Հայք<sup>34</sup>:  
Չորրորդ Հայքը Մարտիրոսպոլիս (Նիբրկերտ) կենտրոնով մը-  
նաց անփոփոխ:

Բյուզանդիան իրեն միացրեց Վիրքի մեծ մասը, սակայն  
Տփղիսը մի փոքր տարածքով մնաց Ասսանյան Պարսկաս-  
տանի կազմում:

Մավրիկիոսը, ելնելով մոլեռանդ քաղկեդոնականության  
դիրքերից, բացասական վերաբերմունք ուներ Հայաստանի  
նկատմամբ: Թեև Հայկական զորքը նախ վարդան Մամի-  
կոնյանի, ապա Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ կրա-  
վել էր Պարսկաստանի դիմ, և Հայերը որոշ հույսեր ու-  
նեին, բայց նա հույն կառավարիչներ<sup>35</sup> նշանակեց Բյուզան-  
դական Հայաստանում, որոնց նստավայրն էր Կարին-Թեո-  
դոսուպոլիսը: Մավրիկիոսը փորձեց ճնշում գործադրել Գիբ-  
նում նստազ Մովսես Բ Եղիսաբեդու վրա՝ պահանջելով բն-  
դունել Երկարնակ ուսմունքը, սակայն, եթե վերջինս մնաց  
անդրդիմի, պարսկա-բյուզանդական սահմանի մոտ՝ Ավտ-  
ոնում, Հաստատեց Հակաթոռ քաղկեդոնական աթոռ, որ նրա-  
նեց Հովհաննես Բագրատոսցին<sup>36</sup> (509—610):

Ինչ վերաբերում է Վիրքին, ապա Մավրիկիոսը վրաց  
իշխան (Էրիսմթավար) ճանաչեց Գուարամին<sup>37</sup>, որը խոս-  
րովյան տօնմի ժառանգական իշխանության հիմնադիրը դար-  
ձավ Վիրքում: Այսուեղ արդեն կային Հայ եկեղեցուն շեն-  
թարկվելու տրամադրություններ, որոնք, անկասկած, քաջա-  
լերվում էին Բյուզանդիայի կողմից: Հետագայում, 607-ին,  
վերջնական խզում տեղի ունեցավ Հայ և վրաց եկեղեցիների  
միջն<sup>38</sup>. Կյուրիկոնը դարձավ Հայ եկեղեցուց անկախ վրաց  
կաթողիկոս:

Մավրիկիոսի Հակամմիաբնակ քաղաքականությունից  
տուժեցին նաև ասորիները: Եղիսիա քաղաքում, կայսեր Հրա-  
մանով, տեղի բյուզանդական զորավարը 400 ասորի վանա-

կանների գցեց քաղաքից դուրս գտնվող մի փոսի մեջ, ուր բոլորը մահացան: Նրանք պատժվեցին միայն այն բանի համար, որ Հրաժարվեցին ընդունել Քաղկեդոնի ուսմունքը<sup>39</sup>:

Մավրիկիոսի՝ հայ նախարարական տները քայլայելու և Հայաստանը ուղամիկ տարրից զրկելու քաղաքականությունն իր արտահայտությունն է գտել այն նամակում, որ, ըստ Սեբիոսի, նա ուղարկել էր Պարսից Խոսրով արքային. «Մի խոտոր և անհնագանդ ազգ կա մեր մեջ և պղտորում է: Բայց եկ ես իմը ժողովեմ և Թրակիա գումարեմ (Հավարեմ), իսկ դու քոնը ժողովիր և Հրամայիր Արևելք տանելի եթե մեռնեն, ապա մեր թշնամիները մեռած կլինեն և, եթե սպանեն, մեր թշնամիներին կսպանեն և մենք խաղաղությամբ կապրենք, քանզի, եթե դրանք իրենց երկրում մնան, մենք Հանգիստ շնոր լինի»<sup>40</sup>:

Մավրիկիոսի այս քաղաքականության դեմ ընդլացեցին Հայ նախարարները և որոշեցին ապստամբել ու վերականգնել Հայոց թագավորությունը. «Ապա դարձյալ միաբանեցին Հայոց մնացյալ նախարարները և որոշեցին հունաց թագավորի ծառայությունից դուրս գալ և իրենց համար թագավոր նատեցնել, որ այլևս իրենց չվիճակի մեռնել Թրակացից կողմերում, այլ ապրել ու մեռնել իրենց աշխարհում»<sup>41</sup>:

Այսպիսով, Մարզպանական Հայաստանը վերչնականապես սեղմվեց Վասպուրականի և Այրարատի Ոստան գավառի սահմաններով: Բանն այն է, որ Սյունյաց իշխան Վահանը, գեռես 571-ի ապստամբության նախօրեին, Խոսրով Բ-ի թույլտվությամբ Սյունիքը (Արցախով միասին) բաժանեց Դվինի դիվանից և իրեն առանձին շահը հնթակա դարձավ Ատրպատականի շահրմարին (սպահպետին)<sup>42</sup>: Ուստի Պարսկական Հայաստանում դրության տեր մնացին Բագրատունիները: Հայոց մարզպան դարձավ Սմբատ Բաղմահաղթ Բագրատունին (591—600)<sup>43</sup>, որը Սասանյանների արքունիքում մեծ հեղինակություն ուներ և զբաղվում էր նաև Հայկական, նույնիսկ եկեղեցական գործերով: Ենթադրվում է, որ 601-ից մինչև 620-ական թվականները Հայոց մարզպանն էր Դավիթ Սահառունին<sup>44</sup>:

Այսպիսով, Զ դարի վերջին և է դարի սկզբին Հայաստանի ներքին քաղաքական կյանքում մեծ փոփոխություններ կատարվեցին: Ե—Զ դարերում Մամիկոնյան և Սյունյաց նախարարական տոհմերի կատաղի մրցակցության փոխարեն սկսվեց Մամիկոնյանների և Բագրատունիների քաղաքական խմբավորումների ուժեղ մրցակցությունը, որը է դարում վերջացավ Բագրատունիների Հաղթանակով:

Հայաստանում և Վիրքում կատարված փոփոխություններին զուգահեռ, 590-ական թվականներին Աղվանքում և Կատարվեցին որոշ տեղաշարժեր: Հայ նախարարական «Գարդմանա տեր» տոհմը, որը հիշված է Գանձամակում, Զ դարի վերջին հանդիս եկավ Միհրական (հետագայում՝ Միհրանյան) անվամբ և սկսեց տիրել Աղվանքում: Նբանցից առաջինը, որ Երանշահիկ (Առանշահիկ) տիտղոսն էր կրում՝ Վարագ-Տրդատն էր (591—636), որի նստավայրը Պարտավն էր, պարսիկ մարզպանի և Աղվանից կաթողիկոսի կողքին<sup>45</sup>:

Երբ 602 թվականին սպանվեց Մավրիկիոսը և կայսր դարձավ Փոկասը, նորից բորբոքվեց պարսկա-բյուզանդական պատերազմը: Խոսրով Բ-ը, իր թե Մավրիկիոսի սպանության վրեմբ լուծելու համար, 604 թ. գրոհեց զեպի արևմուտք: Գրավիլով Հայաստանի բյուզանդական մասը և առաջ խաղալով, պարսից զորքը 619 թ. մի կողմից Եգիպտոս, մյուս կողմից՝ Քաղկեդոն, Մարտարայի ափը հասավ: Հերակլ կայսրը (610—641) կազմեց ընտիր բյուզանդական զորք և 622-ից սկսեց հակահարված տալ թշնամուն. Փոքր Ասիայի ու Հայաստանի վրայով մտնելով Վերին Միջազգետք, 627-ին Նինվեի մոտ ջախչախեց Խոսրովի զորքը<sup>46</sup>: 628-ին Խոսրով Բ-ը պալատական զավագրության զո՞ գնաց, և որդին՝ Երոյեն 629 թ. Հերակլի հետ կնքեց պայմանագիր, որով հիմնականում կրկնվեցին 591 թ. պայմանները:

Սակայն քաղաքական պայմանները նույնը չեն 629 թվականին, քանզի այս պատերազմում, թեև Հաղթող, Բյուզանդիան լրիվ հյուծվել էր, և Հերակլը, խոհեմարար, ի տար-

բերություն Մավրիկիոսի, ճանաչեց Հայաստանի ինքնավարությունը, Բյուզանդական Հայաստանում նշանակելով Հայ կառավարի՝ Մժեծ Գնունուն<sup>47</sup>, որը Հայոց իշխան էր կոչվում:

Մժեծ Գնունին Հերակլի դեմ կազմակերպված գավադրության առթիվ մեղադրելով նաև զորավար Դավիթ Սահմառնունուն, ձերբակալեց նրան և ուղարկեց Կոստանդնուպոլիս: Սակայն Դավիթը, սպանելով իրեն հսկող պահապաններին, փախավ Հայաստան և սիրաշահելով Հայոց զորքը, հարձակվեց Մժեծի վրա, սպանեց նրան ու դարձավ սպարապետ: Հայ նախարարների խնդրանքով կայսրը նրան նշանակեր «իշխան ի վերայ ամենայն աշխարհաց»<sup>48</sup>, այսինքն՝ Հայոց իշխան, շնորհելով նաև կուրապաղատ տիտղոսը: Նա հիշվում է Մթենի 639 թ. արձանագրության մեջ. «իշխանութեան Դաւթի ամենագով պատրկի կուրապաղատի և սպարապետի հայոց և ասորւոց»<sup>49</sup>:

Պարսկաստանի դեմ պատերազմելու ժամանակ, երբ 627-ին բյուզանդական և թյուրքուտ-խազարական զորքերը պաշարել էին Տփղիսը<sup>50</sup>, պարսիկների հետ քաղաքը պաշտպանող Սահմանոս Ա-ը (600—627) սպանվեց, և կայսրը նրա փոխարեն նշանակեց Ատրներսի (Ադարնարսի) Ա-ին (627—639): 629 թ. պայմանագրով Վիրքը ամբողջությամբ (Տփղիսով) անցավ Բյուզանդիային: Երբ Հերակլը 627-ին հասավ Աղվանք, նրա հետ լավ հարաբերություններ հաստատելու համար, Աղվանից իշխան վարազ Գրիգորը քաղկեդոնական ծեսով մկրտվեց<sup>51</sup>: Թեև Մովսես Կաղանկատվացին վկայում է, որ նա մկրտվեց Աղվանից Վիրք կաթողիկոսից<sup>52</sup>, և այս դեպքում խոսքը քրիստոնյա դառնալու մասին է: Բանն այն է, որ դրանից առաջ Աղվանքին անծանոթ չէր քրիստոնեությունը, գուցե և հավանական համարենք առաջին տեսակենոր:

Հերակլը կամեցավ կրոնական հարցերում ևս լիզու գրտնել Արևելքի միարնակ եկեղեցիների հետ: Կոստանդնուպոլսի Մերգիս պատրիարքը, Հերակլի օժանդակությամբ, 638 թ.

2-29  
11/483821



առաջարկեց միակամությունը<sup>53</sup> Հաշտեցնելու համար երկար բնակներին ու միաբնակներին։ Ըստ նոր ուսմունքի՝ Քրիստոսն ուներ երկու բնություն, բայց մեկ կամք։ Այդ ուսմունքը առաջարկվեց նաև Հայ եկեղեցուն և մոտավորապես 633-ին Եղբ կաթողիկոսը, Մժեծ Գնունու ստիպումով, Թիոդոսուագուստ ընդունեց միակամությունը<sup>54</sup>, Սակայն Հայաստանում դա բնդունվեց որպես երկարնակության դավանում, և պայքար սկսվեց Եղբի դեմ, որը զիմավորում էր Հովհաննայրավանեցին (Մայրագումեցի)<sup>55</sup>:

Ավելի նպաստավոր էր գրությունը Պարսկական Հայաստանում։ Սասանյան պետությունը, Խոսրով Բ Ապրուեզի սպանությունից հետո, շորս տարում (428—432) ունեցավ 10 արքաներ, իսկ դեռաստի Հազկերտ Գ-ը, երբ արքա Հրոշակվեց, Հազիվ ինք տարեկան էր Պետության մեջ զերիշխող էին կենտրոնախույս ձգտումները և նահանգները ինքուրույնություն ունեին<sup>56</sup>։ Նման պայմաններում Կավատ Բ Շերոյին Սմբատ Բագմահաղթի որդուն՝ Վարագափիրոցին նրանակեց մարզպան<sup>57</sup>, որը շատ լայն ինքնավարություն վայելեց իր իշխանության շրջանում։ Հայոց սպարապետն էր Թիոդորոս Ռշտունին։ Ըստ երեսութին, որոշ հակասություններ կային այս երկուսի միջև, քանզի, երբ Թիոդորոս Ռշտունու միջնորդությամբ կաթողիկոս ընտրվեց Քրիստոնիոր Ա Ապահունին (628—630), Վարագափիրոց Բագրատունին բարեփեց նրան Հրաժարվել<sup>58</sup>, որովհետև իր Համաձայնությամբ չէր ընտրվել։

Վարագափիրոց Բագրատունին և Ատրպատականի մարդպան Խոռոչ Որմիզդը թշնամական Հարաբերությունների մեջ էին։ Վերջինիս օգնում և Վարագափիրոցի դիմ լարում էր Մժեծ Գնունին։ Դավագրություն կազմակերպվեց Վարագափիրոցի դեմ, և վերջինս, զգուշացված լինելով, մոտավորապես 633-ին հեռացավ Տարոն, ուր բանակցություններ վարելով Հերակլի հետ, գնաց Կոստանդնուպոլիս և ստացավ պատրիկ տիտղոսը<sup>59</sup>։

Այսպիսով, Հայաստանի երկու հատվածները 628 թվա-

կանից ստացան ինքնավարություն, ընդ որում Պարսկական Հայաստանն ուներ լայն, իսկ Բյուզանդական Հայաստանը՝ համեմատաբար նեղ շրջանակներով, որը հող նախապատրաստեց երկրում նոր իրադարձությունների ժավակմանը:

Եթե 639 թ. Հայոց զորքն ընդվզեց Գալիթ Սահառունու դիմ ու հեռացրեց նրան, երկրում անորոշ գրություն ստեղծվեց: Սերեսոս այսպիս է պատկերում Հայաստանի վիճակը. «Եվ բոլոր ազատներն անմիաբան լինելով Հայոց երկիրը կորստյան մատնեցին: Բայց միայն Իշտունյաց գավառի աստվածասեր և քաջ իշխան Թեոդորոսն անդադար իր երկրի զորքերը կազմակերպում էր և օր ու գիշեր իր հմաստության շնորհիվ պահպանում էր (երկիրը) և ոչ քիչ վնասներ էր պատճառում թշնամիներին»<sup>60</sup>:

Պարսից Հայաստանի սպարապետ և իրական մարզպան Թեոդորոս Ռշտունին ամբողջությամբ նվիրվեց Հայաստանում կայունություն հաստատելու գործին: Օգտվելով այն հանգամանքից, որ Բյուզանդիան, Յարմուքի ճակատամարտում (636) ջախջախիլ պարտություն կրելուց հետո նույնիսկ չփորձեց որևէ զիմագրություն ցույց տալ Արարական խալիֆայությանը, թողնելով, որ նվաճվեն իր բոլոր արևելյան նահանգները, իսկ Սասանյան Պարսկաստանը 637-ին Կադիսիայի պարտությունից հետո միայն անվանապես գոյցություն ուներ, Թեոդորոս Ռշտունին, Հավանարար նախարարների և եկեղեցու համաձայնությամբ, իր իշխանության տակ վիրցրեց նաև անորոշ վիճակում գտնվող Բյուզանդական Հայաստանը, և այսպիսով միավորվեց Հայաստանը: Դա պատճական մեծ իրադարձություն էր Հայոց վաղ միջնադարի պատմության մեջ:

Արշակունյաց թագավորության (Մեծ Հայքի) 387 թ. երկիրեղկվելուց և 591 ու 629 թվականների բաժանումներից հետո, առաջին անգամ Հայաստանի երկու մասերը զարձան մեկ ամբողջություն, որը պետք է կոչել Հայոց իշխանապետություն: Հետագայում կտեսնենք, որ 640-ի արարական առաջին արշավանքի նկարագրության ժամանակ Սերեսոս

Թեսոգորոսին կոչում է «իշխանն Հայոց մեջտունեաց տէրն»<sup>61</sup>, երբ դեռ Բյուզանդիայի կայսրը նրան սպարապետի ու պատրիկի պատիվը չէր տվել։ Ուստի աներկրայօրեն կարելի է շեշտել, որ Հենց 639 թվականին, երբ նա միավորեց Հայաստանի երկու մասերը, հայ նախարարները և եղբ Ա. Փարամենակերտացի կաթողիկոսը նրան ճանաշել էին «իշխան Հայոց» և բնականարար՝ սպարապետ։

Այսպիսով, Հայաստանում ստեղծվեց յուրահատուկ քաղաքական իրադրություն, երբ միացյալ Հայոց աշխարհը, որը վայելում էր լայն ինքնավարություն, դարձավ մի կիսանկախ և անկախ իշխանապետություն։ Հետագայում, 640-ի արաբական արշավանդի ժամանակ, Հայաստանում չկար ո՛չ բյուզանդական, ո՛չ էլ պարսկական կայազոր, քանզի Յարմուքի և Կաղիսիյայի խայտառակ պարտություններից առաջացած խուճապի ազգեցության տակ Հայաստանից հեռացել էին թե՛ բյուզանդական, թե՛ պարսկական կայազորները։ Ուստի 639 թ. Հայաստանում չի եղել ոչ մի օտար կայզոր։

Պետք է ավելացնել, որ 639 թվականին ոչ միայն Հայաստանը թեսոգորոս մեջտունու ջանքերով միացավ ու քաղաքական ինքնուրուցնություն ձեռք բերեց, այլև Վիրքը իշխան (Էրիսմթավար) Ստեփանոս Բ-ի<sup>62</sup> (639—663), Աղվանքը Ջունչիր իշխանի<sup>63</sup> (637—669) օրոք ազատվեցին Բյուզանդիայից ու Սասանյան Պարսկաստանից ունեցած կախվածությունից։

Հայաստանը շրջապատող երկրներում է դարում արմատական փոփոխություններ կատարվեցին։ Անհետացած Սասանյան Պարսկաստանի և թուլացած Բյուզանդիայի փոփոխեն հանդես եկան նոր ժողովուրդներ, նոր պետություններ, որոնք փոխեցին քաղաքական փոխհարաբերությունները։ Հարավում հանդես եկան արարեները (633-ին), Հյուսիսում՝ Կովկասում, հայտնվեցին խազարեները<sup>64</sup> (է դարի կեսին), որոնք ունեցան իրենց պետությունը։ Բալկաններում հաստատվեցին Բյուզանդիային թշնամի սլավոնները, ապա 660—

670-ական թվականներին ասպարեզ իշան բուլղար-թյուրքե-  
րը և կազմեցին Բուլղար-Ալավոնական պետություն<sup>65</sup>։  
Սակայն այս ամենի մեջ Հայաստանի քաղաքական  
ճակատագրի վրա առավել մեծ ազդեցություն ունեցավ ա-  
րաբների և Արաբական խալիֆայության հանդես գալը։

## Ա.ՐԱԲՆԵՐԻ ՀԱՆԴԵՍ ԳՈԼԸ

1. ՀԵԹԱՅԹԱ Ա.ՐԱԲՆԵՐԻ

Արաբների և Արաբական խալիֆայության հանդես գալը ամբողջովին փոխեց քաղաքական իրազրությունը Մերձավոր և Միջին արևելքում։ Խալիֆայության ի հայտ գալը արգասիք էր Արաբիայում դարերի ընթացքում կատարված ներքին փոփոխությունների։

Արաբական թերակղզում հնագույն պետությունը ստեղծեց մի ինքնուրույն սեմական ժողովուրդ եմենում։ Մ. թ. ա. թ—ը դարերում առաջացավ Սարաւ<sup>1</sup> (նույնանուն ցեղի անվամբ) թագավորությունը, որի մայրաքաղաքը ժամանակի ընթացքում դարձավ Մարիբը։ Այդ թագավորությունը կարեվոր դեր է կատարել Հնդկաստանի և Հին արևելյան աշխարհի ու Հելլենիստական Արևելքի միջև որպիս տարանցիկ առևտության կենտրոն։ Մ. թ. ա. 6 դարում ձևավորվեցին վաղ ստրկատիրական Սարաւ, Մարին (Մինա), Կաթարան և Հադրամատը քաղաքական միավորները։ Ավելի ուշ՝ մեծացավ Մուքարրիր կոչվող թագավորների Հեղինակությունը՝ ի հաշիվ ցեղացին կարգերի։

Մ. թ. ա. 8 դարում եմենի մի մասում առաջացավ Հիմյար<sup>2</sup> (համանուն ցեղի անվամբ) թագավորությունը, որը թեև տարածվեց ի հաշիվ Սարայի, սակայն, մ. թ. 8 դարի վերջում Սարայի, Աքսումի (Եթովպիա) և Հադրամատի միացյալ ուժերից պարտություն կրեց։ Բայց 7 դարում այնքան

ուժեղացավ, որ ամբողջ Եմենը, ինչպես նաև բուն Արարիա-  
յի որոշ մասերը նրա տիրապետության տակ էին: Մայրաքա-  
ղաքն էր Զաֆարը:

Հին Եմենի սեմական ժողովուրդը ինքնուրույն էր իր  
լեզվով (կոչվում է Հարավարաբերեն), գիր և գրականու-  
թյամբ (արծանագրություններ), մշակույթով ու կրոնով:

Մոտավորապես 525-ին Եթովպիայի Աքսում թագավո-  
րությունը<sup>3</sup> նվաճեց Հիմյար երկիրը՝ վերացնելով նրա պե-  
տականությունը: Մոտ 575-ին Սասանյան Պարսկաստանը  
դրավեց Եմենը<sup>4</sup>:

Այդ ժամանակներում արդեն սկսվել էր արար վաշկա-  
տուն ցեղերի ներթափանցումը Եմեն<sup>5</sup>, և այս ժողովրդի մը-  
շակույթը որոշ շափով ազդեց նաև աշխարհից մեկուսացած  
արար ցեղերի վրա<sup>6</sup>:

Մահմեդականության երկան գալով Եմենը ներգրավվեց  
նորակազմ խալիֆայության մեջ: Արարերենի տարածումը  
և մզեց Հին Եմենի լեզուն, որը թեև մի քանի դար դիմա-  
գրեց: Ավելի շուտ նահանջեց Եմենի հեթանոսական կրոնը:

Բուն արար ցեղերը հիշված են դեռևս ասորեստանյան  
ու բարելական արձանագրություններում (Թ—Զ դր. մ. թ. ա.)  
և Աստվածաշնչում<sup>7</sup>: Նրանց հիշում են նաև Հին Հունական  
մատենագիրները: Սակայն այդ ցեղերը դարեր շարունակ  
մեկուսացած են եղել Հին արևելքի զարգացած երկրներից:

Չոր անապատի վաշկատուն արարը զեռ ջնագույն դա-  
րերից ձգտել է դիմի Հյուսիսի բարերեր երկրները (Ասորիք,  
Միջագետք), քանզի մյուս երեք կողմերից ծովով էր շրջա-  
պատված: Այս ձգտումը հստակորեն արտահայտվեց Հելե-  
նիստական ժամանակաշրջանում (Դ դ. մ. թ. ա.—Դ դ.  
մ. թ.), երբ արտագաղթի հետևանքով կազմավորվեցին մի  
շարք մանր քաղաքական միավորներ, որոնց բնակչությունն  
արարական ժագում ուներ, սակայն տիրապետող լեզուն ա-  
րամեական բարբառներն էին, իսկ մշակույթը՝ Հիմնականում  
Հելենիստական:

Հենց Արարիայի Հյուսիսարևմտյան մասում (այժմյան Հորդանանի հարավում) մ.թ.ա. Դ դարում առաջացավ Նարաթեական թագավորությունը, որի մայրաքաղաք Պետրան<sup>8</sup> աշբի էր ընկնում ժայռափոր շենքերով։ Այս թագավորությունը 106 թ. (մ.թ.) վերածվեց Հռոմեական նահանգի։

Այժմյան Իիրանանի արեելյան (Բեկատա) և Ասորիի ուրոշ մասերում (Կելեսիրիա) ձևավորվել է էր Խոտրեական թագավորությունը՝ Քաղկիս<sup>9</sup> (այժմյան Հայկական Այնձար զյուղի մոտ) մայրաքաղաքով, որը մ.թ.ա. Բ դարից մինչև 63 թվականը հպատակ էր Հռոմին։

Դամակոսից գեպի արեելք, մ.թ.ա. Բ Հազարամյակում, անապատի մեջտեղում, առաջացավ Պալմիրա<sup>10</sup> (Արամ Թագմոր) քաղաքը։ Սակայն նույն Հազարամյակի վերջին էլ կործանվեց Ասորեստանի կողմից, ապա վերականգնվեց Խորացելի Սողոմոն թագավորի ջանքերով՝ մ.թ.ա. Ժ դարում։ Որպես միջազգային տարանցիկ պոևտրի կենտրոն, ծաղկման գագաթնակետին հասավ մ.թ. Ա—Դ դարերին, երբ ինքնավար նահանգ էր Հռոմեական կայսրության կազմում։ Դ դարի 60-ականներին դարձավ անկախ պետություն, Օդենաթ թագավորի օրոք, իսկ նրա հաջորդ՝ Զենորիա թագուցուարիներին (266—272) Պալմիրան տիրեց ամբողջ Առաջավոր Ասիային և Եգիպտոսին։ Սակայն 272 թ. պարավեց Հռոմից, իսկ 273 թ. ապստամբությունից հետո Հիմնովին կործանեցին Հռոմեացիները։

Մեծ Հայքի հարավ արևմուտքում Եգեսիա մայրաքաղաքով ստեղծվեց ասորական Օսորյենե<sup>11</sup> թագավորությունը, որ տիրապետող տոհմը սերում էր արարական Օրբոյի ցեղից։ Սա գոյատեսեց մ.թ.ա. 132 թ. մինչև մ.թ. 216 թվականը, կործանեցին Հռոմայցեցիր։

Մեծ Հայքին հարավից հարակից Միգդոնիա<sup>12</sup> (Արվաստան, ասոր. Բեթ Արարայե) նահանգում, որը մ.թ.ա. 88 թ. մինչև մ.թ. 37 թ. գտնվել է Մեծ Հայքի կազմում, ապրել էն արարական ցեղեր։ Ըստ երեսոյթին այս ժամանակից են սկիզբ առնում Հայ-արարական առաջին հարաբերություն-

ները և, հայանաբար, Միգդոնիայի արարներն էին, որ (ըստ Պլուտարքոսի) Տիգրանակերտի ճակատամարտում կովում էին Մեծն Տիգրան Բ-ի զորքի կազմում<sup>13</sup>: Ակներենորեն սրանց է, որ ճանաչում են Ե դարի Հայ մատենագիրները տաճիկ անվամբ, իսկ երկիրը կոչում Տաճկաստան<sup>14</sup>:

Արարներ կային նաև Տիգրիսից արևմուտք ընկած Հատրա<sup>15</sup> քաղաքում և Հատրենի փոքր թագավորության մեջ, որը մտնում էր Մեծն Տիգրանի կայսրության մեջ: Այս քաղաքը գոյատեսեց մինչև Դ դարը (մ.թ.): Այստեղ մշակույթը հելլենիստականի և պարթևական իրանականի խառնուրդ էր:

Այս բոլոր իշխանությունները (թագավորությունները), որոնք հելլենիստական ժամանակաշրջանում այս կամ այն շափով ընակեցված էին արարներով, նրանց լեզուն արտմերենն էր և հետագայում ձուլվեցին արամեական զանգվածի մեջ: Ուստի Արարիայի մշակութային մակարդակի վըրա մեծ ազդեցություն չունեցան, բացի նարաթեական թագավորությունից, որի (արամեական գրից ծագած) այրութենը հիմք դարձավ արարական գրի հնագույն ձևի առաջացման<sup>16</sup>:

Արար ցեղերի արտահոսքը շարունակվեց նաև Գ—Է դարերում, սակայն վերջիններս պահպանեցին իրենց լեզուն, թեև գտնվում էին ասորական մշակույթի ազդեցության տակ:

Մոտավորապես Գ դարի վերջին Ասորիի Հարավ արեելքում գտնվող Հառուան շրջանում հաստատվեց Ղասսան<sup>17</sup> ցեղը, որն ընկավ այստեղ հաստատված Սալի՛ ցեղի (որը մոտ մեկ հարյուրամյակ իշխան): Միքանական տակ: Հավանաբար Գ դարում Ղասսան ցեղը տապալեց Սալի՛ հիներին և դարձավ իշխող: Այս ցեղի արարները, թեև յուրացրին ասորերենը, սակայն պահպանեցին արարերենը: Նրանք ընդունեցին նաև քրիստոնեությունը՝ հետևելով ասորիների միաբնակ ուսմունքին: Ե դարի վերջին Բյուզանդիան ճանաշեց Ղասսան ցեղում տիրապետող Զաֆն տոհմի իշխանությունը: Այս վարչաքաղաքական միավորը սահմանային բըրդեշության դեր է կատարում՝ Բյուզանդիայի սահմանները

պաշտպանելով՝ Սասանյան Պարսկաստանի Հարձակումներից:

Ղասսանիների ուժեղացման շրջանում հայտնի դարձակ Հարփս Բ իրն Զաքարական (529—569), որը Հուստինիանոս Ա-ի կողմից նշանակվել էր Ասորիքի բոլոր արար ցեղերի ֆիլարքոս և պատրիկ, որովհետև աչքի էր ընկել Բյուզանդիայի սահմանների պաշտպանության Համար մղված մարտերում: Նրա որդին՝ Մունզիր Գ-ը (569—581), թեև պայքարեց Սասանյան Պարսկաստանի դիմ, սակայն, մեղադրվելով դավագրության մեջ, 581-ին ձերբակալվեց և արսորվեց: Մինչև է դարի սկիզբը Ղասսանիներին ենթակա էին մի քանի օվասիաններ և ցեղեր: Ժամանակի ընթացքում Զաֆնիների նրստավայրը դարձել էր Զաքարիան: Ղասսան ցեղի բրիստոնյա արաբները ասորի միարնակ Հակոբիկ Համայնքի մաս կազմելով, Հայ-ասորական-զպտական ընդհանուր ճակատի մեջ էին գտնվում բյուզանդական պաշտոնական երկարնակ եկեղեցու ոտնձգությունների դեմ մղված պայքարում:

Սասանյանների իշխանությունը զավթելու հետ (226) միաժամանակ Տաննուխ ցեղը Հաստատվեց Միջագետքի Հարավարեմտյան կողմերում՝ կենտրոն ունենալով Հիրա քաղաքը<sup>18</sup>, որը ենթակա էր Սասանյան Պարսկաստանին՝ կատարելով սահմանային բգեշխության դերը: Տաննուխ ցեղի արաբները, տիրապետող Լախմ տոհմի գլխավորությամբ, պատերազմներ մղեցին Կենտրոնական Արարիայի Քինզի թագավորների և Բյուզանդիայի դիմ: Լախմ տոհմից Մունզիր Գ-ը (505—554) 544-ին Հաղթեց Բյուզանդիային ենթակա Ղասսանիներին, սակայն տասը տարի անց պարտվեց նրանցից: Նրա որդի Ամր իրն Հինդը Հայտնի էր որպես առար Հեթանոս բանաստեղծների մեկնասաւ Թեև Տաննուխ ցեղի անդամներն ընդունել էին նեստորական դավանանքը, այսուհանդերձ Լախմ տոհմը Սասանյանների վախից մնացել էր Հեթանոս: Եթե նրանց իշխան նուման Գ-ը (580—602) բացահայտորեն դավանեց քրիստոնեությունը, զրկվեց իշխանությունից և Հիրայում պարսիկ մարզպան նշանակվեց:

Այս երկու իշխանությունների արարները հավատարիմ մնալով մայրենի լեզվին և սերտորեն կապված լինելով բուն Արարիային, նպաստեցին բյուզանդական, Հունական և պարսկական մշակութային ավանդների Արարիա ներթափանցմանը<sup>19</sup>, Նրանց երկուսի արքունիքներն էլ հեթանոս արար բանաստեղծների ժամագրավայր-հավաքավայրերն էին և դա նպաստեց արար բանավոր բանաստեղծական արվեստ դարձացմանը:

Ե դարից մինչև է դարի սկիզբը բուն Արարիայում որոշ տեղաշարժեր կատարվեցին. արարական ցեղերի մեջ շերտավորում առաջացավ: Յեղի վերնախավը իր կենցաղով տարրերվում էր Հասարակ անդամներից: Տեղի ունեցավ ցեղային կարգերի քայլքայում: Ստրուկներին օգտագործում էին անասնապահության մեջ:

Հատկանշական երեսը էր Ե դարում Քինդա<sup>20</sup> թագավորության ծնունդը Կենտրոնական Արարիայում, որը ենթակա էր Եմենի Հիմյար թագավորությանը: Նրա Հիմնադիրն էր Հուչըրը, որն ազգական էր Հիմյար թագավորական տոհմին: Նրա թոռ Հարիսի օրոք (489—529) այս թագավորությունը հզորացավ: 529 թ. նա գրավեց Լախմիների մայրաքաղաք Հիրան, սակայն նույն տարում էլ պարտվելով Մունզիր Գ-ից, սպանվեց: Հարիսի որդիների օրոք պետությունը բաժան-բաժան եղավ, և Զ դարի կեսին Քինդան իր տիրույթների մեծ մասը կորցրեց: Այս տոհմի ներկայացուցիչներից հեթանոսական շրջանի հայտնի բանաստեղծ Իմրու ալ-Կայսը փորձեց Բյուզանդիայի Հուստինիանոս Ա կայսեր օգնությամբ վերականգնել կորած թագավորությունը, սակայն թունագորվեց կայսեր կողմից: Քինդայի տիրակալները կոչվում էին մալիք (թագավոր), որն արարներն ընդհանրապես օգտագործում էին օտար թագավորների դեպում:

Արարիայում, Եմենի Հիմյարական թագավորության վերացումից (525) և Քինդայի քայլքայումից (Զ դարի կես) հետո, առավել հս բարձրացավ Հիշազի դերը թագավական կյանքում<sup>21</sup>:

Բանն այն է, որ Արաբիայում երկրագործությունը ցածրը մակարդակի վրա էր: Այն զարգացած էր միայն Եմենում, որը հայտնի էր Մարիբի ջրամբարով: Արաբի հիմնական զբաղմունքը անասնապահությունն էր: Արհեստները նախնական աստիճանի վրա էին. զարգացած էին միայն Եմենում: Սակայն առևտուրը որոշակի զարգացում ապրեց ոչ միայն Հին Եմենում, այլև Հիջազի քաղաքներում և հատկապես Մեքքայում է դարի սկզբին:

Հիջազի երեք քաղաքները՝ Մեքքան, Յասրիրը (Մադինա) և Թափփը<sup>22</sup> գտնվում էին զարգացման տարրեր մակարդակների վրա:

Մեքքան, որի շրջակայքը չոր ու քարքարոս էր, իր զարգացմամբ պարտական էր այն բանին, որ գտնվում էր տարանցիկ առևտորի ճանապարհի վրա<sup>23</sup>: Մեքքայի վաճառականները ձմեռը քարավաններ էին տանում դեպի հարավ՝ Եմեն, իսկ ամառը զեպի Հյուսիս՝ Պաղեստին, Ասորիք, Եգիպտոս և Նույնիսկ Միջագետք: Արար պատմիչների վկացությամբ Մեքքայի բնակիչների համար առևտուրը բարեկեցության միակ աղբյուրն էր: Իսկ թ դարի արար պատմիչ Վակիդին Կուրայշը կոչում է «վաճառականների ցեղ»<sup>24</sup>:

Առևտորի մեջ օգտագործվում էին բյուզանդական ոսկեգրամք, սասանյան արծաթը և Եմենի հիմյարական դրամը՝ Մեքքայում զարգացած էր վաշխառությունը:

Կուրայշի վերնախավը կազմող Ռոմայա (Օմայան) տոհմը, որի անդամները հայտնի վաճառականներ ու վաշխառուներ էին, միաժամանակ զեկավարում էին բոլոր մեծ առևտորական քարավանները: Նրանք, բացի առևտորի շնորհիվ ձեռքը բերած հարստությունից, ունեին մեծ թվով ըստրուկներ և մեծաքանակ անասուններ: Ոչ մի արար ցեղի վերնախավ այդքան զոր ու հարուստ չէր:

Հիջազում Կուրայշի հակառակորդն էր Յասրիրը (Մադինա), ուրեմն ապրում էին Առու և Խազրաջ ցեղերը, որոնք սակայն, իրար մեջ ունեցած վեճերի պատճառով ի վիճակի չէին որևէ կերպ թուլացնելու Կուրայշի հեղինակությունը:

Սակայն այլ էին Մեքքայից հարավ գտնվող Թափիք քաղաքի տեր Սակիք ցեղի վերնախավի տրամադրությունները, քանզի, մասնակցելով Մեքքայի առևտրական գործառնություններին, Կուրաշչի հայ Հաշվի էր նստում։ Թափիքը Հիշազի միակ քաղաքն էր, որ շրջապատված էր այդիներով ու բանջարանոցներով<sup>25</sup>:

Մեքքայի հեղինակությունը տարածվում էր ամբողջ Արարիայի վրա, որովհետև նրա սրբավայր Քաարան (Սև քարը) բոլոր արարների ուխտավայրն էր։ Արարիայում տարածված բազմաստվածության<sup>26</sup> մեջ գլխավոր աստվածը Ալահն էր, որը Հիշազի աստվածն էր իր երեք դիցուհի դուստրերով՝ ալ-Ռուզզան (ամենակարող) Մեքքայի դիցուհին էր, ալ-Լատը (աստվածուհի, սիմական էլատը)՝ Թափիքի և Մանատը (Ճակատագիր)՝ Յասրիրի դիցուհին։

Մեքքան ժամագրավայրն էր նաև արար բանաստեղծների, որոնք ամեն տարի հավաքվում էին Ուբաղի (Մեքքայի մոտ) տոնավաճառին և մրցում իրար հետ<sup>27</sup>։

Արարիայում, բացի Հեթանոսական կրոնից, տարածված էին նաև Հրեական կրոնը (Հուդայականությունը) և քրիստոնեությունը։ Յասրիրում կային Հրեա երեք ցեղեր, որոնք հարուստ էին և ազգեցիկ<sup>28</sup>։ Հրեաներ կային նաև Հյուսիսում՝ Խայրար, Տաբուր, Մակնա վայրերում։ Մակայն այս կրոնը մեծ տարածում գտավ Հատկապես Եմենում, ուր Հրեաները հաստատվել էին գեռնս մեր թվականության առաջին դարերին։ Աստիճանաբար Եմենի ժողովրդի ոջ վերնախավի մի մասն ընդունեց Հուդայականությունը<sup>29</sup>։ Զ դարի առաջին քառորդում Եմենի Հիմյար թագավորության վերջին տիրակալ Զու Նուվասը, ընդունելով Հուդայականությունը որպես պաշտոնական կրոն, Նաշրանում հալածեց քրիստոնյաներին, որն առիթ դարձավ Եթովպիայի կողմից Եմենի գրավմանը 525 թ., Բյուզանդիայի գրդմամբ։

Քրիստոնեությունը, բացի վերոհիշյալ Ղասսանիների և Հիրայի արարական իշխանությունների մեջ տարածված լինելուց, ընդունվել էր նաև Եմենում։ 356-ին արիստական

Կոստանդիոս կայսրը Եմեն էր ուղարկել Թեոփիլոս Ինգոսին, որը եկեղեցիներ կառուցեց Ազնենում և այլուր Սա, ըստ երեվութին, Պարսկաստանի Հետ մրցակցության պայմաններում Եմենում ազգեցության դուի ստեղծելու ձգտման արտահայտություն էր Եմենի Նաջրան քաղաքում և զարուցրիստոնեությունը տարածեցին միարնակ ասորիները: Այստեղ կային նաև նեստորականներ: 525-ին Եթովպիհայի կողմից Եմենի նվաճմամբ թուլացավ Հուդայականությունը, ուժեղացավ քրիստոնեությունը և Հայութեան միարնակությունը<sup>30</sup>: Բուն Արարիայում կային քրիստոնյա ցեղեր, ինչպիսիք էին Բարբր և Տաղիբիրը:

575 թ. Սասանյան Պարսկաստանի կողմից Եմենի նըլվաճմամբ զրադաշտականությունը որոշ շափում տարածում գտավ այնտեղ<sup>31</sup>:

Հետաքրքրական է, որ արարական Հեթանոսական կրոնը ծագեց մի կրոնական ուսմունք, որը Հրեական և քրիստոնեական միաստվածության ազգեցության տակ միաստվածություն էր դավանում: Դրանք կոչվում էին Հանիֆներ<sup>32</sup>:

Ե դարի վերջից մինչև է դարի սկիզբը զարգացավ արարական բանավոր բանաստեղծությունը<sup>33</sup>, իսկ Գ դարում՝ սաղմնավորված արարական գիրը (նարաթիական գրից ծագած), Զ դարի վերջում այն արգեն կազմավորված էր<sup>34</sup>:

Այսպիսով, Արարիայի պատմության Հեթանոսական շրջանում (արարներն այն կոչում են ջահիլիյայի՝ տգիտության շրջան) ստեղծված իրազրությունը կարող էր Հիմք դառնալ պատմական անակնկալ երեւյթների առաջացացման:

Զ դարի վերջին և Է դարի սկզբին Արարիայում ձևավորված Հասարակարգը պայմանականորեն բնորոշվում է որպես նախնական ստրկատիրական Հարաբերություններ<sup>35</sup>:

Ստեղծվել է այնպիսի իրազրություն, որ այդ նախնական աստիճանի Հետամնաց, ցեղային կարգերից դեռ լրիվ շագատված Հարաբերություններն այլևս չեին կարող Հարաբենել զարգացած Հասարակական Հարաբերություններ ունե-

յող Առաջավոր Ասիայի երկրների անմիջական հարևանությամբ:

## 2. ՄԱՀՄԵԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻ ԽԱ ԽԱԼԻՖԱՅԻԹՅՈՒՆ

Նման պայմաններում Արաբիայում ծնունդ առավ մի նոր կրոն, որը միավորեց արաբական ցեղերին՝ ստեղծելով մի ռազմատեսնշական պետություն, որը հետագայում կոչվեց Խալիֆայություն:

Նոր կրոնի առաջացմանը նպաստեցին մի քանի նախադրյալներ: Խնչպիս տեսանք, Զ գարի վերջին և է գարի սկզբին Արարիայում տեղի ունեցան ցեղերի ներքին հասարակական խմորումներ: Շատ կարևոր էր, ինչպիս ասից, Հին Եմենի և Պաստանի ու Հիրայի ազգեցությունը<sup>36</sup>: Կուրայշ ցեղի վերնախավը ձգում էր գերիշխանության ոչ միայն Հիշազում, այլև ամբողջ թերակղզում: Այդ ժամանակ տուժեց Ասորիից ու Պաղեստինից Եմեն հասնող քարավանային մայրուղիով տարանցիկ առևտուրը, քանզի Սասանյան Պարսկաստանը գրավելով Եմենը, մոտավորապես 575-ին Հընդկաստանից հարավային ճանապարհով ընթացող առևտուրական ուղին շեղեց դեպի Պարսկաստան<sup>37</sup>: Առևտուրական Կուրայշ ցեղը պետք է ելք գտներ դուրս գալու այդ ճգնաժամից:

Մահմեդականության առաջացմանը նպաստեց նաև այն պարագան, որ եթե գարեր շարունակ Արաբիան մնացել էր անձեռնմխելի (նույնիսկ մ.թ.ա. 24 թվականին էլիոս Գալւլոսի գլխավորությամբ Հոռմեական գորամասի Արաբիա ներթափանցելու փորձը ձախողվել էր)<sup>38</sup>, ապա Եմենի իրարետեր Եթովպակիայի գրավումը 525-ին և Սասանյան Պարսկաստանի նվաճումը 575-ին, պետք է որ անհանգստացնեին արաբական ցեղերին և ստիպեին միավորվելու՝ արտաքին ներխուժումից պաշտպանվելու նպատակով:

Ի վերջո, կարևոր գեր կատարեց նաև կրոնական գործոնը: Հուդայականությունը (Հրեական կրոնը) և քրիստո-

նեռությունը տարածվելով Արարիայի որոշ վայրերում, թե՛  
չընդունվեցին բոլորի կողմից, սակայն զրանց աղքեցության  
տակ, նաև Հակագրվելու համար անհրաժեշտ էր ստեղծել  
մի նոր արարական կրոն:

Այսպիսով, մահմեդականության առաջացումը Հրատառ  
պահանջ էր արարական ցեղերի համար:

Ինչպիս արդեն ասվեց, նախքան նոր կրոնի հանդիս  
դալը, Արարիայում առաջացել էր Հանիֆների աղանդը, որը  
կողմնակից էր միաստվածության և դիմ էր Հեթանոսական  
բազմաստվածության:

Մահմեդականության մարդարե Մուհամմադը<sup>39</sup> ծնվել է  
մոտ 570 թվականին: Նա Կուրայշ ցեղի Հաշիմի Համեստ  
տոհմից էր: 25 տարեկանում ամուսնացել էր 50-ամյա այրի  
Խագիշայի հետ: Երիտասարդ Հասակում առնտրական գոր-  
ծերով շատ էր հանապարհորդել և ծանոթացել բրիտանյա  
վանականների հետ, որի ապացույցը Բահրա վանականի  
հետ հանդիպելու զրույցն է<sup>40</sup>: 610 թվականին, երբ 40 տա-  
րեկան էր, ըստ նրա կենսագրի, մի ձայն էր լսել, որը նրան  
ներշնչել էր քարոզել: Նա սկսեց իր գործունեությունը՝ քա-  
րոզելով վրեժինդիր ալլահին անվերապահորեն հնագանդ-  
վելու կրօնը՝ իսլամը (նշանակում է հնագանդություն) և  
նրա առաքյալին (ռասուլ) ճանաչելու պահանջը: Սակայն  
Կուրայշ ցեղում իշխող Օմայան տոհմը Արու Սուֆիանի գոր-  
խավորությամբ հալածեց նրան ու նրա հետեւրդներին, ո-  
րոնց մեջ էին նաև ապագա խալիֆաներ Արու Բաքրը (նրա  
աները), Օմար իրն ալ-Խաթթարը, Օսման իրն Աֆֆանը (նր-  
ա փեսան) և Ալին (Հորեղբորորդին ու փեսան): Ի վերջո,  
622-ին, մոտավորապես 200 հետեւրդներով հեռացավ, զաղ-  
թեց Յասրիք (Մագիսա), ուր իշխող Առա և Խազրաջ ցեղերը՝  
Կուրայշի թշնամիները, սիրով բնդունեցին նրան, քանզի  
նախապես համաձայնության էին եկել Այս զաղթը (արար-  
հիրա) հետագայում մահմեդական թվականության սկիզբը  
դարձավ<sup>41</sup>:

Մուհամմադը Յասրիքում դարձավ քաղաքապետ,  
Հիմնեց մահմեդական համայնք, որի մեջ մտնում էին

Մերքայից գաղթածներն ու Յասրիբի նորահավատները և պայքարեց Մերքայի դիմ: 624-ին Մուհամմադի զինված շոկատները Բաղր վայրում հարձակվեցին Ասորիբից Մերքա վերագրածող քարավանի վրա և հաղթեցին մերքացիներին: Թեև 625-ին Ուչուգում մահմեդականները պարտվեցին, այսուհետեւ 627 թ. մերքացիների տասը հազարանոց զորքը (գաշնակիցների հետ միասին), երբ պաշտեց Յասրիբը, մահմեդականները հաղթեցին:

Այստեղ Մուհամմադը, հակասությունների մեջ լինելով հրեական Յ ցեղերի հետ և կասկածելով, որ նրանք կապ ունեն Մերքայի հետ, մեկ-մեկ հեռացրեց կամ ոչնչացրեց նրանց: Մուհամմադի հայտնությունները (որոնք հետագայում դարձան Ղուրանի հիմքը) արգեն ոչ թե զուտ կրոնական (ինչպիս Մերքայում էր), այլև տարբեր բնույթի հարցեր էին շոշափում: Աստիճանաբար կարգավորվեցին նաև հավատացյալների կրոնական պարտավորությունները (ազոթք, ծոմ, ուխտագնացություն Մերքայի քարան և այլն):

628 թ. Մուհամմադը (1400 հետեւորդներով) Մերքայում օժայան Արու Սուֆիանի հետ պայմանագիր կնքեց, ըստ որի նոր կրոնը հավասար իրավունքներ ունեցավ հեթանոսականի հետո իսկ 630 թ. Մուհամմադն իր (10 հազարանոց զինված կողմնակիցներով) մտավ Մերքա, կործանեց հեթանոսական կուռքերը և դարձավ Արարիայի տերը, քանզի շուտով թիրակզու տարբեր մասերը նրան հպատակություն հայտնեցին: Մուհամմադը իրեն ենթարկեց նաև Թահիֆ քաղաքը: Ապա պայմանագիր կնքեց նաշրանի քրիստոնյա համայնքի<sup>42</sup>, Ալլայի (Կարմիր ծովի ափին) քրիստոնյա իշխան Յուհաննայի (Հովհաննես)<sup>43</sup>, ինչպիս նաև հրեաներով բնակեցված վայրերի հետ<sup>44</sup> երաշխավորելով նրանց հավատքի աղատությունը՝ զլիահարկի ու բնահարկի դիմաց: Պայմանագիր կնքեց նաև Պարսից ծոցի վրա գտնվող Հաջարի զրադաշտականների հետ<sup>45</sup>:

Մուհամմադը մեռավ 632 թ., սակայն նրա հիմնած պետությունը երկար գոյատևեց: Նա թողեց թե՛ Մերքայում, թե՛ Մադինայում հաղորդած իր հայտնությունները (որոնք,

ըստ նրա, ի վերուստ էին իշեցված), որոնք հետագայում ամբողջությամբ (Օսման խալիֆայի օրոք, 644—656) դրի առնվեցին<sup>46</sup> և այն կոչվեց Ղուրան՝ բաղկացած 114 սուրաներից (գրլուխներ): Ղուրանում տեղ են գտնել Հին Կտակարանի (Աղամ, Նոյ, Արրաջամ, Խաչակ, Հակոբ, Հովսեփ և այլն) և նոր Կտակարանի (Հովհաննես Մկրտիչ, Մարիամ, Հիսուս) գործող անձինք: Նոր կրոնը շատ բան ժառանգեց արարական հեթանոսական կրոնից. բավական է հիշել, որ հեթանոս գլխավոր աստված ալլահը դարձավ՝ նոր կրոնի միակ աստվածը: Բացի այդ, հեթանոսական ուխտավայր Մերքայի բարան մնաց նոր կրոնի ուխտավայրը:

Մահմեդականությունը<sup>47</sup> հավատացյալից պահանջում է հիմնականում հինգ, բայց իրականում վեց պարտավորություններ՝ վկայություն (շկա աստված, բացի ալլահից և Մուհամմադը նրա առաքյալն է), աղոթք, ծում (ուամմադան ամսին), ուխտազնացություն Մերքա և զարատ կոչված բարեգործական հարկի վճարում: Սակայն ամենակարևորը վեցերորդն է՝ պայքարը անհավատների, բազմաստվածյանների (մուշրիբուն) գեմ, որի մեջ մտնում են քրիստոնյաները (մինչև մահմեդականության վերջնական հաղթանակն ամբողջ աշխարհում): Ղուրանում մի ամբողջ գլուխ այդ մասին է (Զղջան սուրա, թ): Այս պայքարը ստացավ շիհադ<sup>48</sup> անունը: Աշխարհը բաժանված է երկու մասի՝ Դար ալ-Խուլամ, այսինքն՝ իսլամի երկիր և Դար ալ-Հարբ՝ պատերազմի երկիր (ոչ մահմեդական երկրներ), որ պետք է հարկատու դառնան կամ ոչնչացվեն: Այս կրոնական պարտականությունը կատաղի մոլեռանդությամբ համակեց արար ուազմիկներին, որոնք ատելությամբ էին լցված ոչ մահմեդականների նկատմամբ:

Հենց Մուհամմադի անմիջական հաջորդ Արու Բաքրի օրոք (632—634) արաբական զորքերը 633-ին դուրս եկան նվաճելու և անհավատալի արագությամբ կազմավորվեց մի լայնածավալ պետություն: Խալիֆա (հաջորդ, Մուհամմադի հաջորդ) անվանումից, որը կրեց Արու Բաքրը, այս պետությունը կոչվեց Խալիֆայություն:

Բանն այն է, որ այս արագընթաց նվաճումներին օժանդակող շափականց նպաստավոր պայմաններ կային, որոնք կարելի է բաժանել ներքին և արտաքին բարենպաստ ազդակների:

Ներքին ազդակներից առաջինն էր մահմեդականության հանդես գալը և նրա դրոշի ներքո արաբական ցեղերի միավորումով միաձույլ, մարտունակ արաբական պետության գոյացումը 630-ին<sup>49</sup>:

Երկրորդը կրոնական մոլեռանդությունն ու խանդավառությունն էր, որն առավել ևս բորբոքվում էր՝ հանուն կրոնի «անհավատների» դեմ սրբազն պայքարի (շիհագ) գաղափարի<sup>50</sup>:

Ապա պետք է նշել արաբական զորքի արտակարգ շարքաշությունը և արագաշարժությունը: Նա բյուզանդական ու պարսկական զորքերի նման ծանր գումակներ շեր տանում<sup>51</sup>:

Վերջապես արարի համար նվաճումը գաղթի մի նոր ձև էր: Մոտավորապես մեկ հազարամյակ (մ.թ. ա. Գ դարից մինչև մ. թ. է դարի սկիզբ) արարը իր աղքատիկ թերակրդուց գաղթել էր, ինչպես տեսանք, հարմարվելով տվյալ երկրի պայմաններին: Այժմ նա պետք է նվաճեր ու գաղթեր՝ հաստատվելով նվաճված երկրում որպես տեր:

Սակայն շատ ավելի կարևոր և վճռական էին արտաքին նպաստավոր պայմանները.

Նախ բյուզանդապարսկական երկարատև պատերազմները (572—591, 602—628, մոտ 45 տարի) լրիվ արյունաքամ էին արել երկու հզոր պետությունները<sup>52</sup>, որոնց ուժասպառ և խանդավառությունից զուրկ զորքերը բացարձակապես ի վիճակի շեին դիմադրելու 633-ին մի կողմից Պաղեստին ու Ասորիք և մյուս կողմից՝ Միջագետք ներխուժած արաբներին:

Բացի այդ, Բյուզանդիան ներսից լրիվ քայքայված էր<sup>53</sup>: Բյուզանդական կայսրությունը և եկեղեցին, որոնք ընդունել էին Քաղկեդոնի ժողովի երկարնակ ուսմունքը<sup>54</sup>, հալածում

էին (Հաստկապես Հուստինոս Ա. և Հուստինիանոս Ա. կայսրերի օրոք և Հետո) միաբնակ ուսմոնքը դավանող ժողովորդ ներին՝ Եգիպտոսի զպահներին, Ասորիթի և Վերին Միջազգեարի ասորիներին և Հայերին, որոնք ատելությամբ էին լցված Բյուզանդիայի գեմ: Ղպտիները և ասորիները նույնիսկ օգնում էին արարներին՝ դորս քշելու ատելի բյուզանդացիներին: Նույն տրամադրություններն ունեին նաև Պաղեստինի և այլ վայրերի Հրեաներն ու սամարացիները, ուրոնք խիստ հալածանըների էին ննթարկվել:

Ինչ վերաբերում է Սասանյան Պարսկաստանին, ապա 628-ին Խոսրով Բ-ի սպանությունից հետո, չորս տարվա ընթացքում (628—632) տասը անգոր արքաներ իրար էին Հաշորդել և երկրում տիրում էր լիակատար մասնատվածությունը<sup>55</sup>: 632-ին արքա դարձած Հաղկերտ Գ-ը գեռ մանուկ էր և նահանդներում անկախ իշխանները բոլորովին տրուամագիր շէին օգնելու նրան պահանջի գեագրում: Ահա այսպիսի մահամերձ պետության գեմ կռվի ելան արարները:

Անհրաժեշտ է հանուն ճշմարտության շանտեսել նաև պատահականության գերը արարական անհավատալի արագությամբ կատարվող նվաճումների հարցում: Եթե թեկուն նոր կրոնի գրոշի ներքո միավորված Արարական պետությունը մեկ գար առաջ (օրինակ՝ Հուստինիանոս Ա-ի և Խոսրով Անուշիրվանի օրոք) հանդես գար, հազիվ թե ունենար այդ հաջողությունները և խանձարուրի մեջ կիսեղղվեր:

### 3. ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

629 թվականի սեպտեմբերի 14-ին, երբ Պարսկաստանին հազթող Հերակլ կայսրը պարսիկների կողմից գերի տարված Քրիստոսի խաչափայտը վերականգնում էր Երուսաղեմում, գենես Մուհամմադի կենդանության օրոք, երեք հազար հոգուց կազմված արարական մի զորամաս հարձակվեց Բյուզանդիայի սահմանների մոտ գտնվող Մուտավայրի վրա, սակայն պարտություն կրեց<sup>56</sup>: Բյուզանդացիներին թվում էր, թե դա մի սովորական ասպատակություն էր

Արարիայի վաչկատուն ցեղերի կողմից, սակայն շուտով պարզ դարձավ, որ դա շատ ավելի լուրջ և վտանգավոր երեսյթ էր, որն իր խոր հետքն էր թողնելու Արևելքի պատմության վրա:

Մուհամմադի հաջորդ բնարկված Արու Բաքր խալիֆայի օրոք (632—634), 633-ին արաբներն արշավեցին գեղի Պաղեստին, որը փաստորեն Բյուզանդիայի Արևելք նահանդի (դիոցեղ) հարավային գավառն էր:

Արաբները մտան մի երկիր (Պաղեստին, Փյունիկե-Լիբանան, Սիրիա), որտեղ բյուզանդական տիրապետության վերջին շրջանում հարաբերությունները շափազանց լարված էին. մի կողմից Պաղեստինի հրեա ու սամարացի և Լիբանանի ու Սիրիայի քրիստոնյա բնակչության և մյուս կողմից՝ Բյուզանդիայի միջև: Պաղեստինի հրեաները հաճախակի հաւածանքների էին ևնթարկվում<sup>57</sup>, իսկ սամարացիր, քանից ապստամբելուց հետո, զրկվել էին ինքնավարությունից<sup>58</sup>: Քաղկեդոնի 451 թ. ժողովից հետո, Սիրիայի ու Լիբանանի քրիստոնյա ժողովուրդն ու հոգևորականությունը հարել էին միարնակությանը, սակայն Հուստինոս Ա կայսրը 518-ին, կատաղի հալածանքներ սկսելով միաբնակների դեմ, Անտիոքի աթոռին պարտազրեց երկարնակ պատրիարք<sup>59</sup>: Հարաբերությունները սրվեցին այս աթոռի և ասորի միարնակ ազգաբնակչության միջև և, ի վերջո, 540—570-ական թվականներին կազմավորվեց ասորի հակորիկ միարնակ եկեղեցին<sup>60</sup>, որի պատրիարքին թույլ շտրվեց Անտիոքը դարձնել իր աթոռանիստը և նա ստիպված նստում էր այլ վայրերում:

Բյուզանդական կրոնական նեղմիտ քաղաքականությունից զզված, վերոհիշյալ երկրամասների բնակչությունը ատելությամբ էր լցված Բյուզանդիայի դեմ: Հենց այդ ստելությունից էլ օգտվեցին արաբները:

Արաբական ինը հազարանոց զորքը երեք զորավարների հրամանաւարությամբ ներխուժեց Պաղեստին: Շուտով հասան նաև օգնական գնդերը Ուագի Արաբա կոչված վայ-

րում (Մեռյալ ծովից հարավ) արարները հաղթեցին Պաղեստինի Սեպիոս պատրիկին<sup>61</sup>:

Նույն 633 թ. Խալիդի իրն վալիդ զորավարը մտել էր Սասանյան Պարսկաստանի սահմանները՝ Միջագետք: Սակայն նա հրաման ստացավ անմիջապես անցնել Արևմուտք՝ օգնելու Պաղեստինի արարական զորքին: Նա մեծ դժվարությամբ ճեղքեց անապատը և 634-ի մարտին հայտնվեց Ասորիքի կողմերում: Աշնագայնի (Մեռյալ ծովից արևմուտք) ճակատամարտում հաղթեց բյուզանդական զորքին<sup>62</sup> և ապա, վեց ամիս պաշարելուց հետո, քրիստոնյա բնակիչների օգնությամբ 635-ի սեպտեմբերին գրավեց Գամասկոսը: Նա բնակիչներին խոստացավ, որ քաղաքի պարիսպները չեն քանդվի, ենթե եղիներն ու նրանց ունեցվածքը չեն բռնագըրավի, պայմանով, որ գլխահարկ (շիգիա) վճարեն<sup>63</sup>:

Հերակլ կայսրը Եմեսայում զորք հավաքեց, որի հրամանատար նշանակեց եղբորը՝ Թիոդորոսին: Սակայն շուտով ազատեց նրան և հրամանատար նշանակեց հայազգի Վահան ստրատելատին, իսկ նրան օգնական գարձրեց Թիոդորոս Սակելլարիոսին<sup>64</sup>: Սակայն վերջինս, բախվելով արարների հետ, պարտվեց: Բայց Վահանի զորքը նրան կայսր հռչակեց<sup>65</sup>, գահընկեց համարելով Հերակլին: Հենց այդ ժամանակ էլ տեղի ունեցավ Յարմուքի (Հիերոմաքս, Հորդանանի վատակ) վճռական ճակատամարտը: Վահանը և Թիոդորոս Սակելլարիոսը ղեկավարում էին բյուզանդական զորքը, որը բաղկացած էր 40 հազար ռազմիկներից<sup>66</sup>: Նույն բանակում կովում էին Ղասսան ցեղի քրիստոնյա արարներ և հայկական մի գունդ, որը, ըստ Թարարիի, 12 հազար էր<sup>67</sup>: Խալիդի իրն Վալիդի գլխավորած արարական զորքը 25 հազար էր<sup>68</sup>: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 636 թ. օգոստոսի 20-ին: Անապատի խորշակը փշում էր բյուզանդական զորքի դեմքին: Բյուզանդակայիք պարտվեցին, երկու զորավարներն էլ սպանվեցին<sup>69</sup>, իսկ զորքը ցրվեց: Պարսկական պատերազմի հերոս Հերակլը հոսանքատ հեռացավ Ասորիքից՝ բացականչելով. «Յտեսություն Սիրիա և ինչ հրաշալի երկիր ես ու թշնամու համար»<sup>70</sup>:

Շուտով Խալիդը հեռացվեց և արաբական զորքի նոր Հրամանատար Աբու Ուբայդա իրն ալ-Զառահի գլխավորությամբ շարունակվեց Սիրիայի նվաճումը: Բյուզանդացիք չդիմագրեցին և նահանջեցին մինչև Ամանոս և նույնիսկ Տավրոս լեռները: Արարները 638 թ.՝ հեշտությամբ նվաճեցին Եմեսան (Հիմս), Հալիպը և Անտիոքը: Թշնամուն մինչև 638 թ. կարողացավ դիմագրել միայն Երուսաղեմը, իսկ Պաղեստինի Կեսարիան՝ մինչև 640 թ.<sup>71</sup>: Երբ Երուսաղեմն ընկալ, Օմար խալիֆան անձամբ ինքն ընդունեց քաղաքը Հունադավան (քաղկեդոնական) Սոփրոնիոս պատրիարքի ձեռքից<sup>72</sup>:

Ինչպես նշեցինք, 633-ին արաբական մի զորամաս Խալիդ իրն վալիդի Հրամանատարությամբ ներխուժեց Սասանյան Պարսկաստանի Միջագետք Նահանգը, սակայն խալիֆայի Հրամանով Խալիդը, անապատը ճեղքելով, անցավ Ասորիք՝ տեղակալ թողնելով Մուսաննա իրն ալ-Հարիսային<sup>73</sup>:

636 թ. Օմար խալիֆան Սասադ իրն Աբու Վակկասին որպես Հրամանատար<sup>74</sup> ուղարկեց Միջագետք, որտեղ և 637-ի ամռանը, Եփրատից արեմուտք (Հիրայից ոչ հեռու), Կապիսիյա վայրում<sup>75</sup>, իրար բախվեցին արաբական և պարսիք զորքերը: Պարսից զորքի Հրամանատարն էր սպարապետ Ռուստամը, որի շարքերում կռվում էին Մուշեղ Մամիկոնյանը Յազար ուղմիկներով և Գրիգոր Սյունին՝ Հաղարով<sup>76</sup>: Թեև պարսից զորքը արաբական զորքի նկատմամբ թվական գերազանցություն ուներ, սակայն պարտվեց, քանի որ զորքի ներսում անհամերաշխությունն էր տիրում: Զոհվեցին Ռուստամը, Հայ Հրամանատարները և պարսից պատմական նվիրական գրոշը (Քավեհի գրոշը) արարների ձեռքն ընկավ: Ճակատամարտից անմիջապես հետո արարները մտան Տիգրոն և, գերեվարելով բնակիչներին, հսկայական կողոպուտ ձեռք բերեցին: Ցածր մակարդակի վրա գտնվող վաշկատուն արարները Սասանյանների արքունի պալատի ընդարձակ գորգը կտոր-կտոր անելով բաժանեցին միմյանց մեջ<sup>77</sup>: Տիգրոնն ավերվեց:

Հազկերտ Գ-ը (13 տարեկան)<sup>78</sup> իր արքունիքով ապաստաննել էր Հուլուանում, իսկ արարական զորքը մի քանի տարի զբաղված էր Միջագետքի բոլոր մասերի նվաճումով։ Երբ արարները հարավից մտան Խուզիստան, Հազկերտը 640-ին հեռացավ Հուլուանից և գնաց Պարսկաստան<sup>79</sup>։ Արարներն անցան Զագրոս լեռները։ 642 թ. տեղի ունեցած Նիշավանդի ճակատամարտում կրկին հաղթելով պարսից զորքին ու այլևս զիմադրության չհանդիպելով, 651 թ. նվաճեցին իրանական բոլոր նահանգները՝ հասնելով մինչև Սիրո-Պարյա գետը<sup>80</sup>։ Նույն տարում էլ սպանվեց Հազկերտ Գ-ը։

Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի դեմ վրձնական հաղթանակներից հետո (Յարմուք՝ 636, Կազիխոյ՝ 637) արարները 640-ին ուղղվեցին դեպի Եգիպտոս։

Եգիպտոսում, Քազկեզօնի ժողովից հետո, զպտի (Եգիպտական) եկեղեցին հարել էր միարնակությանը. և խիստ հակասության մեջ էր Բյուզանդիայի ու նրա եկեղեցու հետ։ Հուստինոս Ա-ը հալածանք սկսեց Եգիպտոսի միարնակ եկեղեցականների դեմ և Ալեքսանդրիացի աթոռին պարտադրեց երկարնակ պատրիարք<sup>81</sup>։ Եգիպտոսի զպտի հոգեորականությունն ու ժողովուրդը շրնջունեցին այդ զրածո պատրիարքին։ Նրանք ընտրեցին առանձին միարնակ պատրիարք, որը սակայն թաքնված էր մնում։

Որպեսզի ուժեղացներ Ալեքսանդրիայի երկարնակ պատրիարքի վտանգված հեղինակությունը, Բյուզանդիան որոշ պատրիարքների կրկնակի իշխանություն էր տալիս՝ հոգեոր (պատրիարք) և վարչական (կառավարիչ)։ Այդպիսի իշխանություն էր տրված նաև Ապոլինարիոսին Հուստինիանոս Ա-ի օրոք<sup>82</sup>։ Երբ 622-ին պարսիկները ժամանակավորապես նվաճեցին Եգիպտոսը, զպտիներն ընտրեցին միարնակ Բենիամին պատրիարքին ու նստեցրին Ալեքսանդրիացի աթոռին, սակայն 631-ին վերանվաճելով Եգիպտոսը, Հերակլիք նստեցրեց երկարնակ Կյուրոսին, իսկ Բենիամինը թաքնվեց։ Կյուրոսը նույնպես ստացավ պատրիարքի և կառավարչի պաշտոն<sup>83</sup>։

Ահա այսպիսի լարված իրադրություն էր, զպտի եկեղեցին ու ժողովուրդը անսահման ատելությամբ էին լցված Բյուզանդիայի և նրա գրածոցի նկատմամբ, երբ արարները մտան Եգիպտոս:

Երբ Օմար խալիֆան գտնվում էր Երուսաղեմում, Ամրու իրն ալ-Աս զորավարը, որ Հեթանոսության շրջանում քարավաններով բազմաթիվ անգամներ եղել էր Եգիպտոսում, փորձեց համոզել Օմարին՝ թույլ տալ նվաճելու Եգիպտոսը, սակայն խալիֆան տատանվեց: Պաղեստինը, Ասորիքը և Միջազգետքը արարներին հայտնի էին հնագույն դարերից, բայց Եգիպտոսում երբեք արարներ չեին ապրել Երկար տատանումից հետո, որոշ վերապահությամբ, Օմարը թույլ տըգեց շարժվել դեպի Եգիպտոս<sup>84</sup>:

Ամրուն (որի զրոշակակիրն էր Հայազգի Վարդանը) մտնելով Եգիպտոս, պաշարեց Բարիլոն ամրոցը, որը Նեղոսից ոչ հեռու էր գտնվում: Կյուրոսը շտապեց Բարիլոն՝ թե՛ռու զորոս զորավարի գլխավորությամբ 20 հազար զորք տանելով իր հետ, որը Բարիլոնի հինգ հազարի հետ միասին պետք է կռվեր արարների դեմ: Ամրուն իր հետ ունեցած շորս հազարից բացի ստացավ նաև տասը հազար և սկսեց պայքարը ամրոցի դեմ<sup>85</sup>: Նա Այն Շամսում (Հելիոպոլիս) հաղթեց բյուզանդական կայազորին, և Թեոդորոսը հեռացավ դեպի Ալեքսանդրիա: Բարիլոնում պաշարված Կյուրոսը կամեցավ լեզու գտնել Ամրուի հետ՝ մեծ գումարներ առաջարկելով: Ամրուն առաջարկեց մահմեդականության ընդունում, Հարկ կամ սուրբ Կյուրոսը ստիպված գլխահարկ (շիզիա) վճարելու որոշում ընդունեց և շտապեց Ալեքսանդրիա՝ այս ամենը հաղորդելու Հերակլ կայսրին: Սակայն կայսրը Կյուրոսին զրկելով պատրիարքությունից ու կառավարչի պաշտոնից, աքսորեց:

Բարիլոնը յոթ ամիս պաշարելուց հետո, 641-ի ապրիլին Ամրուն գրավեց այն և օժանդակ զորք ստանալով, 20 հազարով գնաց պաշարելու Հերակլ կայսրին: Սակայն կայսրը Կյուրոսին զրկելով պատրիարքությունից ու կառավարչի պաշտոնից, աքսորեց:

թյուն շունենալով, Ամբուն շարժվեց դեպի Հարավ՝ նվաճելու  
Վերին Եղիպտոսը:

Սակայն 641-ին, Հերակլի մահվանից հետո, արքունի-  
քում իշխանության համար մզվող պայքարի մթնոլորտում<sup>86</sup>,  
Կյուրոսը վերստացավ իր պաշտոնները Եղիպտոսում: Վե-  
րադառնալով անմիջապես բանակցություններ սկսեց Ամրուի  
հետ: Կնքեց պայմանագիր, ըստ որի Եղիպտոսը Հոգատա-  
կություն էր Հայտնում Խալիֆայությանը՝ պարտավորվելով  
վճարել գլխահարկ և բնահարկ: 642-ի սեպտեմբերին արք-  
ները մտան Ալեքսանդրիա:

Սակայն 644-ին Ալեքսանդրիա վերադարձավ միարնակ  
Բենիամին պատրիարքը, որը զպտիններին կոչ էր արեւ Հղի-  
մազրել արարներին և պաշտոնապես ճանաչվեց պատ-  
րիարք<sup>87</sup>:

Այսպիսով, Արու Բարք (632—634) և Օմար (634—644)  
Խալիֆանների օրոք, գրեթե մեկ տասնամյակի ընթացքում,  
Արարական նորակազմ խալիֆայությունը, օգտվելով Բյու-  
զանդիայի ներքին ծանր և Պարսկաստանի լիակատար քայ-  
քայված վիճակից, մեծ նվաճումներ կատարեց և արդեն մր-  
տադիր էր գնալ Հյուսիս՝ Հայաստան և Հարակից երկրներ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՌԱՋՔԻՆ ԱՐԵԱՎԱՆՔՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԻ**

1. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՍՊԱՏԱԿԱԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խալիֆայության գորքերը, Միրիան և Հատկապես Անտիոքը (638 թ.) նվաճելուց հետո, ուղղվեցին դեպի Վերին Միջազգետք և Հայաստան։

Առաջին պատմիչը, որ Հիշատակում է արաբների արշավանքը Վերին Միջազգետք, Դիոնիսիոս Տելլ Մահրացին է<sup>1</sup>, թեև Սերեսու թռուցիկ այդ մասին խոսում է։ Թեոփանեսը տալիս է այնպիսի մանրամասնություններ, որոնք կարենոր են արշավանքին նախորդող դեպքերը պարզելու համար։ Բայտ նրա, Օմար խալիֆան Իյազին (Իյազ իբն Ղանմ) ուղարկեց Ասորիք, որպեսզի այդ երկիրը սարակինոսներին (արաբներին) ենթարկի։ 638-ին արաբները նպատակ ունեին արշավել Վերին Միջազգետք։ Օսրոենի կառավարիչ Հովհաննեսը եկավ Քաղկիս (Հետագայում՝ Կիննասրին) Իյազի մոտ և խոստացավ տարեկան տասը բյուր գահեկան վճարել, այն պայմանով, որ նա չանցնի Եփրատը։ Հովհաննեսը վճարեց տարեկան Հարկը, սակայն, եթե Հերակլը լսեց այդ մասին, պաշտոնանկ արեց նրան, աքսորեց և նրա փոխարեն նշանակեց ուժն Պալումենոս<sup>2</sup> (Պատումենոս) ստրատելատի։ Սակայն, ինչպես վկայում է Միքայել Ասորին, նոր կառավարիշը շվճարեց այդ Հարկը<sup>3</sup> և արաբները 639-ին անցան Եփրատը՝ նվաճելու Վերին Միջազգետքը<sup>4</sup>։ Թեոփանեսը, Մի-

բայել Ասորին և 1234-ի ասորական անանուն ժամանակ-կազրությունը Հակիրճ նկարագրում են այս արշավանքը, իսկ ավելի մանրամասնորին՝ Բալագուրին:

Անցնելով Եփրատը Իյաղը (Սաֆուան իրն Մուաթթալ և Հարիր իրն Մասլամա զորավարների հետ) նախ պաշարեց Կալինիկումը (Հետագայում՝ Ռակկա), և պատրիկը Համաձայնեց Հանձնվել՝ ստանալով Իյաղից պայմանագիր՝ վճարելու գլխահարկ և բնահարկ: Ապա Իյաղը ուղղվեց Եղիսիա, որի բնակիչները, դիմագրությունից հետո, Հաշտություն խնդրեցին: Իյաղը քաղաքի եպիսկոպոսի հետ կնքեց պահմանագիր<sup>5</sup>: Երբ Եղիսացիր Պալումեսոսի և նրա զորքի անվրտանգության համար Իյաղից երաշխիքներ ստացան, բյուզանդական զորքը հեռացավ Եղիսիայից և բոլոր քաղաքներից<sup>6</sup>: Բայց երևութին, նրանք խուսափել էին արարներին դիմագրիկուց: Բայց Եղիսիայի հետ կնքած պայմանագիր՝ Իյաղը նվաճեց Խոռանը, Սամսոսատը, Մծրինը, Սինչարը<sup>7</sup>: Թիոփաններ վկայում է, որ Տելլ Մաուզելաթը (Կոստանդիա) և Գարան անմիջապես շհանձնվեցին և արարները զրանք նվաճեցին<sup>8</sup>: Թուր Արդինի, Մարդինի և Ամիդի ու Եփրկերտի նվաճումից հետո, Իյաղն ուղղվեց գեպի Հյուսիս՝ Հայաստան:

Բայց Բալագուրիի, արարները վերին Միջագետքը (Զաղիբա) նվաճեցին Հիջրի 19 (2 Հունվար—20 գեկտեմբեր 640) թվականին<sup>9</sup>, իսկ Հայաստան մտան Հիջրի 20 թվականի Մուհասամ ամսին (21 գեկտեմբեր 640—19 Հունվար 641): Սակայն մեզ Հասած արարական հնագույն պատմական երկի Հեղինակ՝ Խայիքա իրն Խայյաթը վկայում է, որ Վերին Միջագետքը (Զաղիբա) նվաճվեց Հիջրի 18-ին (12 Հունվար 631—1 Հունվար 640)<sup>10</sup>, ուստի և Իյաղի Հայաստան մտնելը պետք է գնել Հիջրի 19-ին, այսինքն՝ 640-ին<sup>11</sup>:

Երբ Իյաղը Աղձնիքի նվաճումով էր զրազված, նրա մոտ եկավ Անձեացյաց (ալ-Զավադան) պատրիկը, որի Հողերի անձեռնմխելիությունն ապահովեց Իյաղը՝ Հարկ վճարելու պայմանով<sup>12</sup>: Ապա զրավելով Արզանն ու Բաղեշը (արար.

Բաղկիս) Իյաղն անցավ Զորա պահակ լեռնանցքը<sup>13</sup> և մը-  
տավ բուն Հայաստան (Հայոց իշխանապետություն):

Սակայն Հայաստանում դիմադրող ուժերը քիչ էին:  
Հովհաննես Դրասխանակերտցին, խոսելով այս արշավանքին՝  
մասին, գրում է, «Եւ վասն զի՞ նախարարք աշխարհիս մերոց  
անմիաբանք լեալք և ոչ ոք էր, որ սմա զօրավարէր»<sup>14</sup>: Մի-  
քայիլ Ասորին գրում է, թե Հերակլը (Յարմութի պարտու-  
թյունից հետո) գրել էր Միջագետքի, Եղիպառոսի և Հայաս-  
տանի բոլոր հոռմեացիներին (բյուզանդացիներին), որ այլևս  
չպայքարեն արարների (թայայի) դիմ, այլ ով կարող է իր  
դիրքը պահպանել, թող մնա տեղում<sup>15</sup>: Քսա երեսութին Հա-  
յաստանում գտնվող բյուզանդական կայազորը, չկարողանա-  
լով իր դիրքը պահպանել, հեռացել էր:

Տարոն գավառում, ըստ Հովհան Մամիկոնյանի, Արդուա-  
ճիմ (Արդ ալ-Խաչման) զորավարը, 18 Հազար զորքով առաջ  
խաղալով, Տիրան Մամիկոնյանից հարկ պահանջեց: Տիրա-  
նը, շկարողանալով օճանդակ զորք ստանալ, իր ութ Հազա-  
րով Գրգուռ լեռան ստորոտի գաշտում հարձակվեց արար-  
ների վրա և երբ նրանց փախստյան էր մատնում, Սահուռ  
Անձեացին անցավ թշնամու կողմը: Տիրանը սպանեց նրան,  
սակայն ինքն էլ զոհվեց<sup>16</sup>: Գուցե սա այն Անձեացյաց պատ-  
րիկն էր, որ Իյաղին հպատակություն էր հայտնել և մասնակ-  
ցում էր նրա արշավանքին: Իսկ Արդուաճիմը, որը Մահմեդի  
(Մուհամմադի) քեռորդին է համարվում, գուցե Իյաղի տե-  
ղակալն էր և այս հակատամարտում զլխավորում էր արա-  
րական զորքը:

Քսա Բալազուրիի, Իյաղը Հայաստան մտնելուց հետո  
հասավ Խլաթ, որի պատրիկի հետ հաշտության պայմանա-  
գիր կնքեց (սուլհ), ապա դիմեց ալ-Այն ալ-Համիդա (Թթու  
աղրյուր, ջուր)<sup>17</sup>, որը գուցե Կարնո քաղաքից (Թիեզոսուլպո-  
լիս) արևմուտք գտնվող էլեգիա շերմուկն է<sup>18</sup>, ուր եկել էր  
այդ քաղաքը նվաճելու: Պատմիշն ավելացնում է՝ «որից այն  
կողմ չգնաց»<sup>19</sup>: Արդյոք ի՞նչ էր այս հանկարծակի վերա-  
դարձի պատճառը: Կարնո քաղաքին այդքան մոտենալուց  
հետո: Իյաղը եկավ Բաղեշ և նրա տիրոջը (սահիբ) պար-

տաղբեց երաշխավորի Խլաթի Հոդահարկի (խարաց) ու գըշ-իսահարկի (ջամագիմ) վճարումը և նրա պատրիկի պարտա-կանությունների կատարումը<sup>20</sup>: Հստ երկույթին, Բաղեշի տե-րը, որի ինքնությունը հայտնի չէ, պետք է հսկեր (որպես վստահելի անձ) Հայաստանի ժամանակավորապես «նվաճ-ված» մասերը:

Բալազուրիի նկարագրությունից երեսմ է, որ արարա-կան զորքը Իյազի հետ վերագարձավ հարավ՝ Վերին Միջա-գետք: Սակայն հայ պատմիչները (Հովհան Մամիկոնյանց Սերեսու և Դևոնդ) հստակերին նշում են, որ արարական զորքը շարունակեց իր առաջխաղացումը դեպի Հայաստանի խորքերը, հավանաբար Արդ ալ-Ռահմանի զիխավորությամբ: Հստ Տարոնի պատմության (Հովհան Մամիկոնյան), «իսկ Արդուահիմ անցանէ ի Հարք և ի Բասեան, ի Վիրս և ի Զաւախս և ի Վանանդ, առեալ հարկս դառնայ ի Տաճկաս-տան»<sup>21</sup>: Այստեղ ինչ-որ անորոշություն կա: Ավելի պարզ է զրում Սերեսոսը, ըստ որի արարները Ասորիստանի կողմից անցնելով Զորա պահակով Տարոն, «առին զնա և զբանունիս և զԱղիովիտ», ապա Քերկրիի ձորով ու Գոգովիտով (Կոգո-վիտ) մտան Այրարատ<sup>22</sup>, Դևոնդը վկայում է, որ Թեոդորոս Ռշտունին տեղեկանալով, որ թշնամին հարձակվել է, վերց-նելով իր զորքը կամեցավ գրավել Զորա պահակի կիրճերը՝ կանգնեցնելու թշնամուն, որը սակայն «թեսավոր օձերի նը-ման» արագ անցել էր լեռնանցքով<sup>23</sup>:

Արարական զորքը դիմադրության շհանդիպելով առաջ էր շարժվում դեպի Դվին: Սակայն երեք իշխանները՝ Թեո-դորոս Վահեունին, Խաչյան Առավելյանը և Շապուհ Ամա-տունին, որոնք գնում էին ցրված զորքը հավաքելու (որը երթային ժողովել զզաւրն ճապաղական) մտան Դվին, ավե-րեցին Մեծամորի կամուրջը, իսկ այգեկութի դուրս եկած մարդկանց քշեցին դեպի Դվինի միջնաբերդը<sup>24</sup>: Այդ ժամա-նակ Թեոդորոս Ռշտունին հասել էր նախճավան<sup>25</sup>:

Թշնամին չկարողացավ անցնել Մեծամորը, սակայն մի դավաճան՝ Մոկաց իշխան Վարդիկը ցույց տալով ժանծա-

դուռը, անցկացրեց նրան: Արարները, գերեվարելով շինականներին, բանակ գրեցին Խոսրովակերտ անտառի եզրին: Հինգերորդ օրը նրանք հարձակվեցին Դվինի վրա, ևտ մը զեցին պարսպի պահապաններին, սանդուղքներով բարձրացան պարիսպը ու մտան քաղաք 640 թ. Հոկտեմբերի 6-ին, ուրբաթ օրը (աւոր ի էր Տրէ ամսոյն, յաւուրն ուրբաթի): Քաղաքում մեծ կոտորած սարքեցին ու կողոպտեցին նրա ունեցվածքը<sup>26</sup>: Հստ Դիոնիսիոս Տելլ Մահրացու, Հունաց 952 (640—641) թվականին արարները պաշարեցին ու գրավեցին Դվին (Սղարին) քաղաքը, և 12 հազար հայեր կոտորվեցին<sup>27</sup>:

Մի քանի օրից արարական զորքը, իր հետ 35 հազար գերիներ տանելով, հեռացավ: Թեոդորոս Ռշտունին, դարանակալ սպասելով Գոգովիտ գավառում, փորձեց փրկել գերյալներին, սակայն պարտություն կրեց: Իսկ արարները նորից վերադարձան Վերին Միջագետք<sup>28</sup>, քանի որ ասպատակության նպատակով էին եկել:

Ի դեպ, Թաթարին Հիշը 19 (640) թվականի տակ Իչաղի իրն Ղանմի Զագիրա կատարած արշավանքը հիշելուց հետո, նշում է, որ «(Իշաղը) Օսման իրն Արդուլ-Ասին առաքեց Զորրորդ Հայաստան, ուր կատարված որոշ ընդհարումների ժամանակ սպանվեց նահատակ Սաֆուան իրն Մուաթթալ ալ-Սուլամին: Ապա Օսման իրն Արուլ-Ասը բնակիչների հետ հաշտություն կնքեց՝ գլխահարկ վճարելու պայմանով՝ ամեն մի ծիրից մեկ դինար (ոսկեդրամ)»<sup>29</sup>:

Հստ երեսութին այս ժամանակներում էր, որ բյուզանդական զորքը Զագիրայում արարական զորքերին հակա-հարված տալու մի փորձ կատարեց: Դիոնիսիոս Տելլ Մահրացին վկայում է, որ «Հունաց 955 (643—644) տարում Հոռոմ զորավար Վաղենտինոս պատրիկը<sup>30</sup> եկավ կովելու արարների դեմ: Ահարեկված նրանց ներկայությունից, նա փախալ՝ թողնելով իր հետ եղած բոլոր հարստությունները, որոնց արարները տիրացան»<sup>31</sup>: Հետագայի ասորի պատմիչները՝ Միքայել Ասորին և 1234-ի Անանունը, ավելի ընդարձակ տեղեկություններ են հաղորդում: Հստ Միքայել Ասորու,

միաժամանակ Հարձակվեցին երկու զորավարներ՝ Դավիթը<sup>32</sup>  
(ըստ 1234-ի ասորական անանուն ժամանակագրության  
(Հայազգի Դավիթ)<sup>33</sup> Հարձակվեց կայսերական քաղաքից<sup>34</sup>  
(ըստ 1234-ի Անանունի՝ իր երկրից<sup>35</sup>, այսինքն՝ Հայաստա-  
նից), մեծաթիվ զորքով, իսկ Վաղենտինոսը՝ արևմտաքից:  
Նրանք Համաձայնիլ էին ինչ-որ տեղում Հանդիպել իրար,  
որ միասին դուրս գան արաբների դեմ: Վերջիններս, իմա-  
նալով այդ մասին, շտապեցին Վաղենտինոսի դեմ և ոչըն-  
շացրին նրա զորամասը: Ապա Դավիթը իր Հայկական զորա-  
մասով գալով (Հավանաբար Տարոնից) տեսավ, որ Վերին  
Միջազգետքում արաբներ չկան, բանակ զրկեց Բելթ Մաադա  
կոչված վայրում: Ըստ երկու ասորի պատմիչների, Դավիթի  
զորամասը վատ վերաբերվեց տեղական բնակչության հետ<sup>36</sup>:  
Իյազը լսելով, որ ուրացեցի (Չորրորդ Հայքի Հայ բնակիչ)՝  
Դավիթը Հարձակվել է, Դամասկոսից եկավ Եղիսաբետ: Դավի-  
թը իր զորամասով ասորի զորավար Տիտոսի հետ գնաց եղե-  
սիա: Դավիթը իր զինվորներին Հարձակվելու Հրաման տը-  
վեց: Սակայն Իյազը նախ փորձեց Հարձակվել Տիտոսի զո-  
րամասի վրա, բայց տեսնելով զինվորների քաջությունը,  
Հարձակվեց Դավիթի վրա: Դավիթը օգնության կանչեց Տի-  
տոսին, բայց նա մերժեց՝ պատճառաբանելով, որ Դավիթի  
զորամասը վատ էր վերաբերվել ասորի բնակչության հետ:  
Դավիթը մենակ կռվեց, սակայն սպանվեց և նրա զորամա-  
սից շատերը կոտորվեցին, քանզի, ավելացնում է Միքայիլ  
Ասորին, «արաբները միայն նրան էին հետապնդում»<sup>37</sup>: Տի-  
տոսը փրկվեց ու գնաց Ամիդ:

Այստեղ անհասկանալի է, թե Իյազի զորքը վախեցավ  
Տիտոսի «քաջարի» զինվորներից և վերջում նրանց զորավա-  
րին թողեցին, որ հանգիստ հեռանաւ: Պարզ է, Տիտոսը, նախ-  
քան Հարձակումը, Հավանաբար բանակցել էր արաբների  
հետ, և դավաճանելով Դավիթին, լեզու էր գանձ Իյազի հետ:  
որն էլ թողեց նրան, որ հանգիստ հեռանաւ: Երկու ասորի  
պատմիչների մոտ էլ անաշառությունը պակասում է:

Այս դեպքերի ժամանակը ճշտելու համար չենք կարող  
չենքել Դիոնիսիոսի տեղեկության վրա (643/644 թթ.)<sup>38</sup>.

որը շատ անհավանական է: Միքայել Ասորու<sup>39</sup> և 1234-ի Անանունի<sup>40</sup> վկայությունը, թե Իյաղը եկավ նրանց դեմ կովելու, Հիմքը է տալիս ընդունելու 640—641 թվականը, բանի որ, ըստ Բալազուրիի, Իյաղը մեռավ Հիշրի 20 (640/641)<sup>41</sup> թվականին: Բացի այդ, 1234-ի Անանունը, Իյաղի կողմից Միջագետքի նվաճումը (639/640) նկարագրելուց հետո, Հաջորդ գլուխը (երկու զորավարների հարձակման մասին) ըսկըսում է «Այդ ժամանակ» խոսքերով<sup>42</sup>:

640-ի արարական Հետախուզական ասպատակությունը ցույց տվեց, թե ինչքան թույլ և անմիաբան էր Հայաստանը<sup>43</sup>: Ներսիս Գ Տայեցին (641—661) դառնալով կաթողիկոս, Հավանաբար որոշ նախարարների համաձայնությամբ դիմեց Բյուզանդիայի Կոստանդ Բ (641—668) կայսրին՝ պաշտոնապես ճանաշելու Թեոդորոս Ռշտունու իշխանությունը, որպեսզի կայուն վիճակ ստեղծվեր երկրում: Կայսրը Թեոդորոսին ճանաշեց որպես սպարապետ և պատրիկ (Հայոց իշխան)<sup>44</sup>: Հավանաբար այդ ժամանակ էր, որ Պրոկոպիոս զորավարի գլխավորությամբ բյուզանդական զորք ուղարկվեց Հայաստան: Զորքի անհրաժեշտությունը կար. Վաղենտինոս և Դավիթ զորավարների կրած պարտության դիմաց պետք էր թշնամուն հակահարված տալ:

Դիոնիսիոս Տելլ Մահրացին հունաց 955 (643/644) թվականի տակ նշում է. «Պրոկոպիոսը և Թեոդորոսը մի խիստ ուժեղ հարձակում կատարեցին և հասան մինչև Բատնա-Սարուկ: Նրանք ավերեցին ու կողոպտեցին այդ քաղաքը, վերցրին ինչ ցանկանում էին և վերադարձան իրենց երկիրը»<sup>45</sup>:

Ասորի պատմիչը նույն թվականի տակ, ինչպես տեսանք, Հիշել էր նաև Վաղենտինոս զորավարի անհաջող արշավանքը, որը պետք է եղած լիներ 641 թ.: Ուստի Պրոկոպիոսի և Թեոդորոսու Ռշտունու արշավանքը 642-ից այն կողմէ շենք կարող տանել<sup>46</sup>:

Հավանաբար այս հակահարվածի ազդեցության տակ արարարները մեկ տասնամյակից ավելի այլևս Ասորիքի կողմից ասպատակություններ չկատարեցին:

Հաջորդ ասպատակությունը դեպի Հայաստան կատարվեց Աստրպատականի կողմից: Արարները նիշավանդի ճակատամարտից հետո նվաճեցին Աստրպատականը: Բայ Բալազուրիի, մոտավորապես 642-ին, Քուֆայի կառավարին Մուզիբա իրն Շուրան Աստրպատական ուղարկեց Հուզայֆա իրն Յամանին, որը բախվելով Աստրպատականի մարդուն նի զորքի հետ՝ հաղթեց: Մարզպանը համաձայնեց ամրող երկրի համար տարեկան վճարել 800 հազար դիրհեմ (արծաթ) գլխահարկ (շիզիա): Ապա Օմար խալիֆան Աստրպատականում կառավարիչ նշանակեց Ռուբա իրն Ֆարկադին<sup>47</sup>: Բայ Թարարիի, հիշրի 22 (642/643) թվականին Ռուբա իրն Ֆարկադը հաղթելով Խսֆանդիադ իրն Ֆառուխստդին, նրա հետ պայմանագիր կնքեց, որի բնագիրը Թարարին մեջ է բերում: Բայ գրա, Աստրպատականի զրագաշտական ազգաբնակչությունը, որն իրանական ժողովուրդ էր, պարտավոր էր գլխահարկ վճարել ըստ կարողության, պարտավորություններ ստանձներ մահմեդականների նկատմամբ: Այդ գեպբում երաշխավորվում էին նրանց անձր, ունեցվածքը, կրոնն ու ծեսերը<sup>48</sup>:

Ապա հիշրի 22 (642/643) թվականին Օմար խալիֆան Սուրակա իրն Ամրիին ուղարկեց Փարբանդը (ալ-Բար) գրավելու նրա առաջապահի հրամանատարն էր Արդ ալ-Խաջ-ման իրն Ռաբիան, որը հասավ Փարբանդ և նրա տերը (թագավորը)<sup>49</sup> պարսիկ Շահըրբարազը, հպատակություն հայտնեց: Սակայն հրամարվելով գլխահարկ վճարելուց, պարտավորվեց զինվորական ուժ տրամադրել իր բնակիչներից: Թարարին նշում է, որ այս երկրում, որը լեռնային է, ամեն մի բլրի վրա թե՛ բնիկ, թե՛ եկվոր հայեր էին ապրում: Հավանաբար այս վայրը Ռոտիքի կողմերում էր գտնվում, որը մոտ էր Փարբանդին, թեև Փարբանդում հայ ազգաբնակչություն կար: Սուրական Շահըրբարազին տվեց հետեւյալ պայմանագիրը.

«Սա է երաշխավորագիրը (աման), որ տվել է հավատացելոց իշխան Օմար իրն ալ-Խաթթարի կառավարիչը (ա-

միլ) Սուրակա իրն Ամբուն Շահքարազին և Հայաստանի (Արմինիա) բնակիչներին ու Հայերին՝ երաշխավորելով նրանց անձը, ունեցվածքն ու կրոնը (միլլատ): Նա Հավաստում է, որ ոչ մի վնաս չի հասցնի և չի խախտի պայմանագիրը: Սրա դիմաց Հայաստանի (Արմինիա) ու Գարրանդի բնակիչները (ժողովուրդը)<sup>48</sup> թե՛ բնիկներ, թե՛ եկվորներ և իրենց շրջակայրի (բնակչությունը) պարտավոր են մասնակցելու (օգնության հասնելու) ամեն մի թշնամու հարձակման ժամանակ և հնագանդվելու ամեն մի նարի (տեղակալ), իսկ եթե նար չլինի՝ կառավարչին (վալի): Ով այս պայմանագիրն ընդունի, կազմավի գլխահարկից, բայց ոչ զինվորական ծառայությունից (Հաշր), քանզի զինվորական ծառայությունը փոխարինում է զինահարկին (շիզիա), իսկ ով որ հրաժարվի զրանից (զինվորական ծառայությունից) և մնա (տեղում), ապա նա պարտավոր է կատարել Ատրպատականի ժողովրդի հանձն տռած պարտականությունները՝ զինահարկ (վճարել), (մահմեդականին) հանապարհ ցույց տալ, մեկ ամբողջ օր նրան հյուրընկալել: Եթե զինվորական ծառայություն կատարեն, այս ամենից կազմավեն, իսկ եթե թողնեն (զինվորությունը), իրենց վրա կվերցնեն այս (բեռը): Վկա են Արդ ալ-Ռահման իրն Ռաբիան, Սալման իրն Ռաբիան, Բուրայր իրն Արդալլահը: Դրեւ ու վկայել է Մարդի իրն Մուկարբինը<sup>49</sup>:

Դրանից հետո Սուրական Բուրայր իրն Արդալլահին, Հարիր իրն Մասլամային, Հուզայֆա իրն Ուսայդին և Սալման իրն Ռաբիային ուղարկեց Հայաստանի շրջակա լեռների ժողովրդին (ահլ) նվաճելու: Բուրայրին ուղարկեց Մուզան (Մուկան), Հարիրին՝ Տփղիս (Տափլիս), Հուզայֆա իրն Ուսայդին՝ նրանց մոտ, որոնք Ալանաց լեռներում էին (ապրում), իսկ Սալմանին՝ (լեռներից) այն կողմ<sup>50</sup>:

Հավանաբար այս արշավանքի շարունակությունն էր 642—643 թթ. Հայաստան կատարված ասպատակությունը, Վերոհիշյալ ենթադրությունը հաստատում է նաև Ղեռնդը: Նա նշում է, թե ինչպես կործանվեց Պարսից թագավորու-

թյունը և թե ինչպես արարները (իսմայելացիք) ավարառելով երկիրը՝ իրանական նահանգները, կողոպտեցին նաև արբունի զանձերը։ Հետո անմիջապես ավելացնում է. «Եւ մեծ մասն զօրուն հատեալ»<sup>51</sup> (զորքի մի մեծ հատված բաժանվելով): Ումի՞ց բաժանվելով՝ Պարզ է. Ատրպատականը, մերձկասպյան շրջաններն ու Դարբանդը նվաճող արարտկան զորքից։

Հենց այս զորքից բաժանված զորամասը Պարսից կողմից (Ատրպատականից) 642—643-ին ասպատակեց Հայոց աշխարհը, գերեզմանից Մարաց ավանները, Գողթն գավառը և նախավան դաստակերտը։ Ապա զորքի մի մասը գերյալների հետ անցնելով երասմիք, վերադարձավ իր երկիրը։ Իսկ մի գունդ է! առանձնանալով և շարունակելով առաջխաղացումը, ասպատակեց Արտազ գավառը ու Հարձակվեց Պրոկոպիոս զորավարի վրա, որը բանակ էր զրկել Գոգովիտ գավառում, Բաղուձորի և Մարգուցայրի սահմանի վրա։

Պետք էր ուժեղ Հակահարված տալ թշնամուն, սակայն Պրոկոպիոսն անտարբեր էր։ Իսկ Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունուն անհանգստացնում էր այդ անտարբերությունը և նա գնաց զորավարի մոտ՝ Համոզելու, սակայն Պրոկոպիոսը վիրավորանք Հասցրեց նրան։ Զայրացած Թեոդորոս Ռշտունին հրամայեց իր զորքին՝ կովկի ելնել արարների գեմ։ Հայերը դարանամուտ լինելով Հարձար վայրում և բռնելով այն կիրճը, որտեղից թշնամին պետք է անցներ, Հարձակում գործեցին, Հաղթեցին և թողնելով Պրոկոպիոսին, Հեռացան Վառնի գավառը։

Սկանատես լինելով Ռշտունու Հաղթանակին, Պրոկոպիոսը ևս իր զորքին Հրամայեց Հարձակվել թշնամու վրա։ Սակայն կովում բյուզանդացիք պարտվեցին և, ըստ Ղեռնդի, բյուզանդացիների 60 Հաղարանոց զորքի մեծ մասը կոտորվեց։ Արարների զորքը, ըստ նրա, մոտ տասը Հաղար էր։ Հաջորդ օրը արարները, Հավաքելով ավարը, վերադարձան Ատրպատականի Գառնի գավառը։

Ղեռնդը վկայում է, որ սա կատարվեց Իսմայելի իշխան-

Սեբեսոր 652 թվականի դեպքերի մասին պատմելիս Հիջրատակում է նաև, որ բյուզանդացիք մեղագրում էին Թեոդորոս Բշտունուն, որը պատճառ դարձավ Մարդոցերի (Մարդոցայր) աղեաի. «Եւ ամբաստանութիւն ամենայն դաւրացն Հոռոմին և տրտունչքը զԲշտունեաց տեառնէն լինեին և զՀայոց՝ առաջի թագաւորին իւրեանց վասն Հարուածոց՝ որ եղեն ի Մարդոցեսն: Զի ասացին, թէ «Միաբանեցան ընդ իսմայլացիսն զմեզ վատահեցուցին և զզարն ճապաղել ետուն յասպատակ յԱտրպատական և զնոսա ածին ի վերայ մեր յանկարծակի և Հարկանել ետուն զմեզ և մեր ամենայն ինչ անդ անկաւ, բայց թող երթամք ի Հայս և մեր իրացն խնդիր առնեմք»<sup>53</sup>:

Այս բնթացքում Ատրպատականի կողմերում դեպքերը զարդանում էին. Թարարին Հիջրի նույն 22 (642/643) թվականի տակ նշում է, որ Հայաստանի (Արմինիա) ժողովուրդը Մուսավիայի (փոխարքայության) օրոր զրժել էր իր խոսքը (քաֆարա)<sup>54</sup>: Նման դեպքերում, երբ 640-ական թվականներին կամ ավելի ուշ Հիջրում է Հայաստանը որպես Հպատակ երկիր, որն ասպատամբել է, ապա զա պետք է Համկանալ, որ խոսքը Հետագայի Արմինիա ընդարձակ նահանդի մասին է, որի մեջ էին մտնում մերձկասպյան շրջանները (Հետագայում՝ Շիրվան) և Գարբանզը:

Երբ Մուսավիան Հարիր իրն Մասլամային կամենում էր նշանակել Դարրանդի կառավարիչ, վերջինս վիրքում նախ բանակցություններ վարեց Տփղիսի ու այդ լեռների ժողովը գիրքի Հետ, ապա պատերազմեց և կարողացավ ընդունել տալ իր պայմանները: Նա վիրքի (Զուրզան) Տփղիս քաղաքին մի պայմանագիր տվեց, որը մեջ է բերված Թարարիի մոտ:

Թարարիի այն տեղեկությունը, թէ Հարիրը այդ տարում Դարբանդից վիրք եկավ, չի Համապատասխանում Բալազուրիի տվյալներին: Բալազուրին գտնում է, որ Հարիրը Հայաս-

տանից գնաց Վիրք<sup>56</sup>, սակայն դեռ Վիրք Հաստած, նրան ընդուռաջ եկավ Վիրքի պատրիկի պատգամավորը, որին թե՛ Բալազուրին, թե՛ Թարարին իրենց Հիշած պայմանագրերում կոչում են Նիկուլա:

Ապա Հիշրի 24 (7 նոյեմբեր 644—27 հոկտեմբեր 645) տարում Հիշրում է, որ Ուալիդ իրն Ուկրան արշավեց Ատրպագատական և Հայաստան, քանզի նրանց ժողովուրդը զրժել էր այն պայմանները, որոնք կնքվել էին Օմար խալիֆայի օրորում:<sup>57</sup> Սակայն այստեղ ևս Հարցը բուն Հայաստանին չի վերաբերում:

Սակայն նույն տարվա մեջ Հիշրում է նաև, որ Ուալիդ իրն Ուկրան Սալման իրն Մարիացին Հայաստան ուղարկեց 12 հազար զորքով: Մտնելով Հայկական Հող (արդ՝ Արմինիա), կոտորեց, գերիվարեց, ավարառեց և ապա վերադարձավ Ատրպատական:<sup>58</sup> Այստեղ արդեն բուն Հայաստանը պետք է հասկանալ (բայց Հայտնի չէ ո՞ր մասը): Երբ նա Ուալիդի մոտ եկավ Հարուստ ավարով, վերջինս ուրախացավ, որ վերջապես Հասել է նպատակին: Արդյո՞ք այդ նպատակը սոսկ ավարն էր, թե այլ մտադրություններ ուներ Հայաստանի նկատմամբ:

Շուտով Հարիրը տեղափոխվեց Ասորիք, որտեղ նորից սկսեց մասնակցել Բյուզանդիայի դեմ մղված պատերազմին:

## 2. ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹԵՌԴՈՐԾՈՒՅՈՒՆ ԲԵՌՑՈՒՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարդուցայքի խայտառակ պարտությունից հետո Հարաբերություններն աստիճանաբար սրվեցին Հայաստանի և Բյուզանդիայի միջև: Թեև Սերենոսի Մարդուցայքի մասին տվյալ տեղեկություններից<sup>59</sup> կարելի է եղբակացնել, որ բյուզանդացիք այդ անբաստանությունները Թեոդորոսի և Հայերի նկատմամբ անում էին Կոստանդ Բ-ի 653 թ. Հայաստան կատարելիք արշավանքի նախօրեին, Համենայնդեպս այդ ամբաստանությունները ծագել էին Հենց պարտությունից հետո և երկար ժամանակ կրկնվել:

Հայ-բյուզանդական հարաբերությունները մեծապես աղջկում էին արաբա-բյուզանդական քաղաքական առնչություններից ու պատերազմներից:

638-ին Անտիոք<sup>60</sup> համանելուց հետո արաբները թեև կանգ առան Ամանոս (Սև) լեռների մոտ, սակայն սկսեցին ասպատակության բնույթ կրող արշավանքներ կատարել դեպի Փոքր Ասիա:

Ըստ Յակուբիի, Հիշրի 20 (640/641) թվականին Օմար խալիֆան արաբական առաջին զորամասն ուղարկեց Ռումի (Բյուզանդիա) գեմ՝ Մայսարա իրն Մասրուկ զորավարի զրյավագորությամբ<sup>61</sup>: Մեկ այլ արշավանք հաջորդեց զրան՝ Հարիր իրն Մասլամայի հրամանատարությամբ<sup>62</sup>: Սակայն Օմարը շատ էր կամքենում, որ լեռնանցքը (գարր, հավանարար Ամանոսի Բաղրամ լեռնանցքը) սահման լինի Խալիֆայության և Բյուզանդիայի միջև<sup>63</sup>: Համենայնդեպս, մի ժողացին արշավանք ևս ձեռնարկվեց, սակայն բոլոր նավերն էլ խորտակվեցին<sup>64</sup> (մոտ 20 նավ), և Օմարը որոշեց ժողի վրա ոչ մի ընդհարում չունենալ բյուզանդացիների հետ:

Այսուհետեւ, ըստ Բալազուրիի, Օմարի օրոք Հարիր իրն Մասլաման զրավեց Եփրատացիք նահանգում զտնվող Աղատան (արար, Հադաս), իսկ զրանից առաջ Խալիֆ իրն ալ-Վալիդը նվաճել էր Գերմանիկեն (արար, Մարաշ)<sup>65</sup>: Հարիրը շուտով զրավեց Արշամաշատը (Շիմշաթ) Պ Հայքում և Մելիտինեն ու Սոգոպետրան՝ Պ Հայքում<sup>66</sup>: Նա փորձեց զրավել Եփրատի ափին գտնվող Կամախը, սակայն անհաջողության մատնվեց<sup>67</sup>: Ըստ Թարարիի, Մուավիան Հիշրի 23 (643—644) թվականին ներխուժեց Փոքր Ասիա՝ հասնելով մինչև Ամորիոն<sup>68</sup>:

Հիշրի 24 (644/645) թվականին բյուզանդացիք մեծ զորքով հարձակվեցին արաբների վրա և նոր խալիֆան՝ Օմանը (644—656), զորք ուղարկեց Սալման իրն Ռարիայի և Հարիր իրն Մասլամայի հրամանատարությամբ, որը հաղթելով, շատ բերդեր զրավեց<sup>69</sup>: 640-ական թվականներին Հարիր իրն Մասլաման զրավեց Մելիտինեն և այնտեղ կայա-

դոր (ռարիթա) ու կառավարիչ նշանակեց<sup>70</sup>: Բայտ իրն ալ Ամսիրի, Մոււավիան Հիջրի 25 (645—646) թվականին արշավեց ու հասավ Ամորիոն: Ճանապարհին, Անտիոքի ու Տարսոնի միջև գտնվող բերդերը լրված էին, և վերագրածին նա այդ ամենը քանդել տվեց<sup>71</sup>: Բանն այն է, որ բյուզանդացիք գրեթե լրիվ լրել էին Կիլիկիան, իսկ արարները գեռ չեին գրավել այն:

Մոււավորապես Հունաց 969 (իսկ փրկչական 647/648) թվականին Միքայել Ասորին նկարագրում է Մոււավիայի այս արշավանքը:

Մոււավիան իր զորքը երկու մասի բաժանեց, որից մեկի հրամանատար նշանակեց Հարիբին՝ «շաբ սիրիացուն» և հոկտեմբերին (տեղրին) ուղարկեց Հայաստան: Երբ նրա զորախմբերը տեղ հասան, տեսան, որ երկիրը ձյունով է ծածկված: Նրանք հնարամտությամբ (խորամանկությամբ) կովկեր բերեցին և իրենց առջեցից քշելով՝ ճանապարհը հարթեցին և կարողացան առաջ շարժվել: Հայերը, որ նման բանի չեին սպասում, հանկարծակի եկան: Արարներն սկսեցին ասպատակել ու կողոպտել: Նրանք բնակչությանը զերեվարեցին, զյուղերը հրկիցեցին և վերագրածան իրենց երկիրը:

Այս ասպատակությունը, Հայանաբար, Հայաստանի առհմտյան նահանգների մի փոքր մասում էր կատարվել, քանի որ պատմիչը ոչ մի քաղաք չի հիշատակում:

Մյուս զորամասը, որը Մոււավիայի ձեռքում էր, ներխուժեց Կապաղովկիայի Կեսարիայի շրջանը: Հարուստ ավարդ վերցնելուց հետո, Մոււավիան տասը օր պաշարեց Կեսարիան, սակայն չկարողացավ գրավել և ամրող գավառն ասպատակելուց հետո հեռացավ: Մի քանի օր անց կրկին եկավ: Երկար պաշարումից հետո բնակիչները նրա հետ բանակցությունների մեջ մտան՝ պարտավորվելով Հարկ վճարել իրենց կյանքը երաշխավորելու գիմաց: Մտնելով այդ փարթամբաղաքը, արարները վերցրեցին ինչ-որ կամեցան: Ապա շարժվեցին գեղի Ամորիոն, սակայն չկարողացան գրավել

այն: Առաջարկեցին Հաշտությամբ Հանձնել, սակայն բնակիչների մերժումից հետո ամրող շրջակայքը ասպատակեցին ու վերադառն իրենց երկիրը<sup>72</sup>:

Երեք պատմիչների տեղեկություններից երևում է, որ Մուավիան Հասավ Ամորիոն Հիջրի 23 (19 նոյեմբեր 643—6 նոյեմբեր 644), այսինքն՝ 644-ին, Հիջրի 25 (28 Հոկտեմբեր 645—16 Հոկտեմբեր 646), այսինքն՝ 646-ին և 647—648-ին: Բյուզանդիայի պատմությանը նվիրված մենագրություններում<sup>73</sup> Մուավիայի կողմից Կեսարիայի գրավումը և Ամորիոնի պաշարումը դրվում է 647 թվականին:

Հետո մի քանի տարի գագարեցին արարա-բյուզանդական պատերազմները:

Հայաստանն այդ ընթացքում թեև որոշ ասպատակությունների էր ենթարկվում, սակայն, Համեմատաբար, գտնըվում է բնականոն վիճակում:

645 թ. գումարվեց Դվինի և Ճողովը, որը շատ կարևոր որոշումներ ընդունեց եկեղեցական Հողատիրության և այլ Հարցերի վերաբերյալ<sup>74</sup>:

Փոքր Ասիա կատարված վերոհիշյալ արշավանքների ժամանակ, երբ արարները Հարձակվում էին, իսկ բյուզանդացիք՝ պաշտպանվում, Կոստանդ Բ-ի Համար պարզ դարձավ, որ անհրաժեշտ է ամրապնդել Բյուզանդիայի դիրքերը Հայաստանում, որ Հնարավոր լինի թիկունքից սպառնալ Փոքր Ասիա ներխուժող արարական զորքերին: Սակայն իր դիրքերն ամրապնդելու համար Բյուզանդիան զիմեց լոկ քաղաքական սաղբանքների և քաղկեդոնականությունը պարտադրելու միջոցների, որոնք, ինչպես կտեսնենք, նպաստեցին Հայ-բյուզանդական Հարաբերությունների սրմանը:

Թեոփանեսը նշում է, որ (645 թվականին) Վաղենտինոսը (որը Հայ էր և Համարվում էր Արշակունի), ապստամբեց Կոստանդ Բ-ի դեմ, սակայն բռնվեց ու մահապատճի ենթարկվեց<sup>75</sup>: Իսկ Սեբեոսը<sup>76</sup> նույնին ավելացնում է նաև, որ կայսրը նրա փոխարքն իր զորքերի զորավար (զաւրաց իւրոց զաւրավար) նշանակեց Թեոփորոսին, որը Հունաց կողմից

Հայաստանի հավատարիմ իշխաններից էր: Որոշ ժամանակ անց Թեոդորոսը կայսրին խնդրեց, որպեսզի աղաւ արձակի Աֆրիկա (Աֆրիկե) արքորդած Հայ նախարարներին և Հատկապես Խոսրով Շում անունով Սմբատ Բագմահաղթի որդի Վարազտիրոցին: Նա Հերակլի գեմ Աթալարիկոսի ապրատամբության ժամանակ կասկածի տակ ընկնելով, ձերբակալվել ու արսորվել էր<sup>77</sup>: Կայսրը Համաձայնեց, ևս բերեց նրանց ու սիրալիիր ընդունեց: Վարազտիրոցի որդի Սբմբատին նա տվեց «սպաթար ի մէջ ամենայն սպաթարացն և կանտիտատ» տիտղոսները և իր թագավորության հինգերորդ տարում (646) նրան նշանակեց իր թագավորության առաջին կարգում<sup>78</sup>:

Սակայն Կոստանդ Բ-ը Հայաստան ուղարկեց Թումա (Թովմաս) կոչված մի պաշտոնյայի, որը եկավ, որպեսզի Հաստատի այն ուխտը, որ կար կայսրի ու Մարաց իշխանի միջև: Մարաց իշխան արտահայտությունը պետք է նշանակի Ատրպատականի արար կառավարիչ (այդ ժամանակ՝ վայիս իրն Ուլքա), սակայն Հայտնի չէ, թե դա ինչ ուխտ էր և եղել են արդյո՞ք Հարաբերություններ Ատրպատականի կառավարչի և Բյուզանդիայի միջև: Նա գնաց Մարաց իշխանի մոտ և խոսեց խաղաղության մասին, նրանից բազում ընծաներ ընդունեց և հրդմամբ խոստացավ Հայոց իշխան և սոլարապետ Թեոդորոսին կապանքներով տանել Կոստանդնուպոլիսի արքունիք (պալատն)<sup>79</sup>: Ուրեմն Բյուզանդիայի և Ատրպատականի արարական իշխանությունների կողմից զավագրություն էր պատրաստվում Թեոդորոս Ռշտունու գեմ: Թումայի Ատրպատականում գտնվելու մասին է վկայում այն փաստը, որ նա, մտնելով Հայաստան, իր ջոկատով Հանկարծակի Հարձակվեց Կոտայք (Կոտէից) գավառում (որը մոտ է Ատրպատականին) գտնվող Թեոդորոսի վրա, ձերբակալեց և կապանքներով տարավ կայսեր մոտ:

Ըստ Աերենոսի կայսրը, իրը «յոյժ խոռվեցաւ», քանզի կապելու հրաման չէր տվել (նշանակում է՝ առնվազն հրամայել էր Թեոդորոսին բերել իր մոտ), հրամայեց քանդել

կապերը և նրան ընդունեց իշխանական պատվով: Թեռգորոս թշտունին արդարացվեց, իսկ Թուման պատվից (պաշտոնից) զրկվեց: Դժվար է ենթադրել, թե ինչ նպատակներով էր Կոստանդ Բ-ը հրամայել Թեռգորոսին բերել (թեպետ ոչ կապանքներով) Կոստանդնուպոլիս և ինչ-ինչ նկատառումներով մայրաքաղաքում Հայոց իշխանի նկատմամբ փոխվեց նրա վերաբերմունքը:

Այստեղ իրար հանդիպեցին Թեռգորոս թշտունին և Վարագամիրոց Բագրատունի ասպետը, Հիշեցին իրենց անցյալը, երբ պարսից արքա Խոսրովի արքունիքում մննդակից էին:

Սակայն Վարագատիրոցը, չհանդուրժելով Բյուզանդիայի իշխանությունը (ոչ կարաց նուաճել ընդ իշխանութեամբ Յունաց) մտքում մի խորամանկ քայլ (ըստ Սեբեոսի՝ նենդութիւն) հզացավ: Նա կայսրից խնդրեց, որ իր ընտանիքից չորս հոգու թույլ տա գնալ Հայաստան, որպեսզի իր ունեց վածքը տանեն: Երբ արտօնությունն ստացավ, ինքը ծալուցեց և երեք հոգու հետ կայսերական հրամանով նավ նըստեց ու հասավ Սև ծովի ափին գտնվող Տայք նահանգը ու ամրացավ<sup>80</sup>:

Երբ կայսրը տեղեկացավ կատարվածի մասին, Հրաման արձակեց «Հայոց զորավարին» (առ զարսավարն Հայոց) հըսկել ճանապարհները, խուզարկել ամրոցները: Հայտնի զարձակ, որ Վարագատիրոցն ամրացել է Հայաստանում՝ Տայքում (ի Հայս ի Տայս): Ապա վերոհիշյալ Հայ նախարար Թեռգորոսը (Յունաց զորավար), որը միշնորդել էր Վարագատիրոցին աքսորից վերադարձնելու համար, և, ըստ Մանանդյանի<sup>81</sup>, գտնվում էր Հայաստանում, Հրամայեց ներսես կաթողիկոսին, զորքի իշխաններին ու նախարարներին՝ գնալ Վարագատիրոցի մոտ, համոզել նրան, հավատարմության երդում տալ կայսրին և փոխարենը նրանից խնդրել, որ Վարագատիրոցը ստանձնի Հայոց իշխանի (զիշխանութիւն աշխարհին) պաշտոնը: Սա Թեռգորոս թշտունու դեմ ուղղված մի քայլ էր: Վարագատիրոցը կայսրին ուղղված նամակում բացատրում էր, որ ոմանք զգուշացրել էին իրեն, թե կարող է կրկին աք-

սորեն և ինքը վախենալով, փախել է Կոստանդնուպոլսից, սակայն պատրաստ է Հավատարմորեն ծառայել կայսրին: Վերջինս նրան տվեց կուրապաղատ տիտղոսը, պատվո թագ (պսակ) և Հայոց իշխանի պաշտոնը, ինչպես նաև արծաթե զար (գաղոցը): Կայսրը ազատ արձակեց նաև նրա կնոջն ու որդիներին:

Սակայն հազիվ էր Հրովարտակը Հասել, երբ նա՛ վարագտիրոցը, բայ Սերեսոսի, Հանկարծակի հիվանդացավ ու մեռապ<sup>82</sup>: Սա շատ կասկածելի մա՞ս էր, և պեսար է ենթադրել, որ բյուզանդական արքունիքը մեղսակից էր այդ մահվան մեջ:

Դրանից հետո Կոստանդ Բ-ը Վարագտիրոցի ավագ որդուն՝ Սմբատին, «կարգեաց արքայ ի պատի Հաւը իւրոց տուեալ նմա զիշխանութիւնն ընիկ տանուտերութեան և արար զնա զրունաքար զաւրաց իւրոց»<sup>83</sup>: Այս արտահայտությունից շատերը (Մ. Զամշյան, Մ. Ղազարյան, Ժ. Լորան և այլք) եզրակացրել են, թէ Սմբատը ստացել է Հայոց իշխանի պաշտոնը: Հ. Մանանդյանը<sup>84</sup> ցույց է տալիս, որ պատիվը ոչ թէ Հայոց իշխանին կամ կուրապաղատությանն է վերաբերում, այլ Բագրատունյաց տանուտերությանը: Գեռ ավելին, Սմբատը ստացել էր զրունգարի (զնդապետի) պաշտոն, որը զինվորական հասարակ պաշտոն էր: Ապա Սերեսորն ավելացնում է, որ կայսրը Սմբատին իր զորքն ուղարկեց:

Դրանից հետո կայսրը Թիոդորս Ռշտունում ուղարկեց Հայաստան մեծ պատվով և տվեց նրան «զնոյն իշխանութիւն զաւրագրութեան»: Սրանից շպեսար է եզրակացնել, թէ Թեոդորոսը միայն սպարապետ էր, քանի որ մի փոքր ներքեւ ավելացնում է: «Եւ եկն կարգեցաւ ի նոյն իշխանութեանըն», այսինքն նույն՝ Հայոց իշխանի և սպարապետության պաշտոնները վերստացավ: Հետաքրքրական է Սերեսոսի այն արտահայտությունը, թէ կայսրը նշանակեց Թիոդորոսին, «Եթէ կամիցին իշխանին Հայոց և եթէ ոչ կամիցին» (Եթէ կամենան Հայոց իշխանները կամ չկամենան)՝<sup>85</sup>: Այս-

տեղից պարզ երևում է, որ նախարարների մեծամասնությունը ներսես կաթողիկոսի գլխավորությամբ չէր կամենում թեոդորոս Ռշտունուն, այլ ցանկանում էին Վարագուրց ասպետ Բագրատունուն:

Համենայնդեպս, թեոդորոս Ռշտունին, որպես լուրջ քաղաքական, ամեն ինչ անում էր, որ բյուզանդական սաղբանքների և նախարարների շկամության մթնոլորտում կարողանար պահպանել Հավասարակշռությունը՝ Հայաստանի քաղաքական կյանքում:

Սակայն հետագա գեպքերը բեկում առաջացրին այդ տրամադրությունների մեջ՝ Դրանք էին. կայսեր ձգտումը՝ պարտագրելու Հայերին քաղկեդոնականությունը և 650-ի արարական ասպատակությունը:

649-ին Կոստանդ կայսրը որոշեց պարտադրել Հայերին՝ ընդունելու քաղկեդոնականությունը և, ինչպես Սեբեսոն է արտահայտվում՝ ապստամբ փիշապը նպատակ ուներ Հայոց աշխարհի եկեղեցու գեմ Հալածանք սկսել<sup>86</sup>: Նրա օգնականըն էր Հայաստանում գտնվող բյուզանդական կայազորը, որը Հայերին անարգանք են համարում Քաղկեդոնի ժողովը և նզովում<sup>87</sup>: Կայսրը հրովարտակ գրեց Հայերին՝ թելազրելով, որ անպայման ընդունեն Քաղկեդոնի ժողովի որոշումները և այն ուղարկեց Դավիթ Բագրեվանդացու միջոցով, որը Կոստանդնուպոլսում փիլիսոփայություն էր ուսումնասիրում:

Այս տարօրինակ առաջարկը որոշ շափով իրար մոտեցրեց երկու (թեոդորոս Ռշտունու և ներսես կաթողիկոսի) իրար Հակառակ քաղաքական խմբավորումները և գումարվեց Դվինի Զ ժողովը, որին նախագահում էին ներսես Տաշեցին և թեոդորոս Ռշտունին: Ժողովին մասնակցում էին «ամենայն եպիսկոպոսունքն ու նախարարն Հայոց»: Ժողովականները բացարձակ մերժեցին այդ առաջարկը՝ Հիշեցնելով, որ նույնիսկ զրադաշտական Սասանյան արքաներն ազիլի լայնախո՞չ էին կրոնադավանաբանական Հարցերում<sup>88</sup>, ենթադրում է, որ ներսես Տաշեցի կաթողիկոսը այս նամակը շի ուղարկել կայսրին<sup>89</sup>:

Այդ ժամանակ կրկին պատերազմը բորբոքվեց Խալիֆայության և Բյուզանդիայի միջև։ 649-ին Սսորիքի կուսակալ Մուսավիան (1700 նավերով) գրավեց Կիպրոս կղզին<sup>90</sup>, ապա 650-ին՝ Արագոս կղզին, որը լրիվ ավերեց<sup>91</sup>:

Հայվանաբար նկատի ունենալով, որ 649-ին Հայաստանում գտնվել է բյուզանդական կայազորը, արարեները որոշեցին թիկոնքից՝ Ատրապատականի կողմից, կրկին հարվածել։ Այս ասպատակության թվականը շատերի մոտ վիճելի է եղել։ Սակայն Հ. Մանանդյանը<sup>92</sup> նկատի ունի Ղեռնդի այն վկացությունը, որ դա տեղի է ունեցել առաջին հարձակումից (640) տասը տարի անց։ Բացի այդ, Սեբեոսն այս ասպատակությունը հիշելուց հետո անմիջապես խոսում է Պրոկոպիոսի Մուսավիայի հետ վարած բանակցությունների մասին<sup>93</sup>, որը թերփանեսը<sup>94</sup> դնում է արարչագործության 6142 թվականին (650—651)։ Ուստի, անկասկած, այս ներխուժումը կատարվել է 650-ին։

Արարական զորքը հարձակվելով Ատրապատականից, բաժանվեց երեք մասի։ Ըստ Սեբեոսի, մի խումբը մտավ Սյունիք, մյուսը շարժվեց սեպհական գնդի կողմերը (Վասպուրական), երրորդը՝ դեպի Աղվանը<sup>95</sup>։ Սակայն, ըստ Ղեռնդի<sup>96</sup>, երեք խմբերից մեկը գնաց Վասպուրականի կողմը, գրավեց ավաններ, ամրոցներ, որոնք ձգվում էին մինչև Նախճավան քաղաքը, մյուսը ուղղվեց Տարոնի կողմը և մի խումբ էլ հասավ Գոգովիտ ու պաշարեց Արծափ ամրոցը։ Որպես ժամանակակից ականատես, Սեբեոսը, բնականաբար, ավելի վրատաճելի է։ Սեբեոսը վկացում է, որ սեպհական գնդի կողմը գնացող զորամասը կոտորելով, գերեվարելով և ավարառելով եկավ հասավ Արծափ ամրոցը, որի թիկունքում էր Կախանակառուց լեռը։ Արծափի պաշտպանները դիմեցին Դարույնք (Դարամնից) բերդը՝ օգնություն խնդրելով Վարագ Մահակի որդի Մըրատ Բագրատոսինի իշխանից, որը 40 ուզմիկներ տվեց։ Նրանք գիշերով մտան Արծափի և առանց զգուշանաւու թշնամուց, որ կարող է իրենց նկատեն, մտան գաղտնուղին։ Մինչդեռ արարեները, հետևելով նրանց, նկատել էին

գաղտնութին և նույն գիշերը, մինչև առավոտ, գրավեցին այն՝ սպանելով տասը պահապաններին։ Առավոտյան՝ նըրանք մտան բերդը և ծայր առավ կոտորածը, գերեվարությունն ու կողոպուտը։ Սակայն հենց այդ ժանր պահին իր զորով վրա հասավ թեռոդորոս Ռշտունին և, հաղթելով թշշնամուն, երեք հազար ընտիր սպառազեն ռազմիկների կոտորեց և նրանց ձեռքից փրկեց հայ գերյալներին։ Սպանվել էին նաև արարների երկու հրամանատարներ՝ Օսմանը (Աւթման) և Ուկբան (Ոգբայ)։ Հայոց իշխան և սպարապետ թեռոդորոս Ռշտունին 100 ընտիր երիվարներ ուղարկեց Կոստանդ Բ կայսրին։

Իսկ այն զորախումբը, որ Այրարատ էր մտել, կոտորելով հասավ մինչև Տայք, Վիրք և Աղվանք Արարները, վերցնելով գերյալներին և ավարը, եկան նախճամբան (որը հիշված է նաև Ղեռնդի մոտ)։ Սակայն շկարողանալով գրավել նրա ամրոցը, գրավեցին Խրամի բերդը և կոտորելով ու գերեվարելով հեռացան<sup>97</sup>, Սա արարների երրորդ սապատակությունն էր, որը կողոպուտի, գուցե նաև հետախումզելու նպատակ ուներ։

Հետաքրքրական էր, որ Կոստանդ Բ կայսեր՝ քաղկեդոնականությունն առաջարկելու (649) մասին խոսելիս, Սեբեռ սը նշում է. «զգաւրս Յունաց, որ ի Հայաստան աշխարհին»<sup>98</sup>։ Սակայն 650-ի արարների հարձակման ժամանակ շի հիշվում բյուզանդական զորքի առկայությունը։ Համանարար այդ կայազորը հեռացել էր գիտակցարար, քանդի, ինչպես այդ կայազորը հեռացել էր գիտակցարար, քանդի, ինչպես այս կամաց բյուզանդիան նպատակ ուներ լեզու զտնել Խալիֆայության հետ։

Մոտավորապես 650—651-ին Բյուզանդիան, արարական մի հարձակումից հետո, բանակցություններ սկսեց Խալիֆայության հետ։ Հետաքրքրական է, որ այդ ռազմական միջամբ հարումների մասին տարրեր պատմիչներ տարրեր տեղեւնիցարումների մասին տարրեր պատմիչների կություններ են հաղորդում, մինչդեռ բանակցությունների մասին եղած տեղեկությունները գրեթե իրար կրկնում են։

Սեբեռը 650-ի արարների հարձակման նկարագրու-

թյունից անմիջապես Հետո, ավելացնում է, որ արարները Պաղեստինում նավատորմիդ կազմեցին և Հասան «Կոստանդնուպոլիս», սակայն նրանց նավերը խորտակվեցին<sup>22</sup>:

Սակայն այդ ժամանակ Կոստանդնուպոլսի վրա արարների Հարձակման վերաբերյալ որևէ տեղեկություն չկա արար, բյուզանդացի կամ ասորի պատմիչների մոտ և Սերեսի այս Հատվածում գրչական բացահայտ աղավաղում կա: Պ. Պետերսը<sup>100</sup> իրավացիորեն հնթագրում է, որ Սերեսի մոտ խոսքը գնում է Կիպրոսի Կոստանդիա քաղաքի վրա արարքների 649 թվականի Հարձակման մասին, որը վկայված է Թեոփիանեսի մոտ: Հ. Հյուրշմանի մոտ ևս մի Հեռավոր ակնարկ կա, թե գուցե Սերեսի հիշած արշավանքը Մուավիայի Կիպրոսի վրա Հարձակումն է<sup>101</sup>:

Հետաքրքրական է այստեղ մեջբերել Միքայել Ասորու վկայությունը՝ արարների Հարձակման և Մուավիայի Հետ պայմանագիր կնքելու մասին, որի առաջին տողն է՝ «Երրարարքները նորից պատրաստվում են արշավել Կոստանդնուպոլիս...»<sup>102</sup>: Նշանակում է, որ այդ ժամանակ եղել են տեղեկություններ, թե արարները նպատակ ունեն արշավել Կոստանդնուպոլսի վրա:

Լսելով այդ արշավանքի մասին, Կոստանդ Բ կայսրը, «զարհուրիկով», որոշեց արարներին գլխահարկ (սակ) վըճարել և Հաշտություն կնքել: Այդ նպատակով Պրոկոպիոսը գնաց Դամասկոս, Մուավիայի (Մալիաս) մոտ, ուր որոշվեց տարեկան Հարկի չափը, Հաշտություն կնքվեց և Պրոկոպիոսը ետ վերադարձավ<sup>103</sup>:

Բայտ Դիոնիսիոս Տելլ Մահրացու, Հունաց 964 (652/653) թվականին Հարիբը նվաճեց Միջագետքը, և Պրոկոպիոսը եկավ Հաշտություն կնքելու արարների Հետ<sup>104</sup>:

Թեոփիանեսը աշխարհի արարչագործության 6142 (650/651) տարում հիշում է, որ զորահրամանատար Բուտուրը (Բիսր իբն Աբու Աբթատ) արշավեց դեպի Խսավրիա, ոչ միայն կոտորեց, այլև 5 Հազար գերիներով վերադարձավ: Կոստաս (Կոստանդ Բ) կայսրը ուն Պրոկոպիոսի ուղարկեց

Մուսավիրայի մոռա Հայտություն կնքելու և այն կնքվեց երկու տարի ժամանակակից<sup>105</sup>:

Միքայել Ասորին ևս պատում է այս դեպքերի մասին, սակայն մի փոքր այլ ձեռվ. «Եթե արաբները նորից պատրաստվում էին արշավել դեպի Կոստանդնուպոլիս, Պաղպմեոսը եկավ՝ նրանց խոստանալու ամենամյա հոգածարկ տալ Հռոմեական երկրից: Բայց քանի որ խարեց, արաբները վեր կացան և Խսովրիան կողոպտեցին: Պաղպմեոսը կրկին գնաց, տվեց ոսկին և արաբների հետ զինագագար կնքեց երեք տարրով»<sup>106</sup>,

Այստեղ Միքայել Ասորին թևոփանեսից տարբերվում է նրանով, որ Պրոկոպիոսի փոխարեն հիշում է այլ անոն՝ Պալումենոս և Հաշտության ժամկետը ոչ թե երկու, այլ երեք տարի։ Իմիջիացլոց, այս երեք տարվա ժամկետի մասին է հիշում նաև Սեբեոսը մի այլ տեղում։ Այսպես, երբ լրացան Հիշում նաև Սեբեոսը մի այլ տեղում։ Այսպես, երբ լրացան Հաւագության պայմանի երեք տարիները, «արքայն Իսրայելի» (Խալիֆան) չկամեցակ խաղաղությունը շարունակել Բյուզանդիայի կայսեր Հետ (ըստ թագաւորն Յունաց), Հրամականդիայի կայսեր Հետ (ըստ թագաւորն Յունաց), Հրամականդիայի իր զորքին՝ սկսել պատերազմը ծովի և ցամաքի վրա<sup>107:</sup>

Այստեղ կարևորն այն է, որ Բյուզանդիան հաշտոթյան պայմանագիրը կնքեց Ասորիքի ազդեցիկ կուսակալ Մուավայի (առաջ խալիֆա Մուավիա Ա) հետ Փառ նշանակում էր, որ որևէ արարական նոր արշավանքի գեպբում Բյուզանդիան չէր կարող օգնել Հայաստանին։ Հայաստանում չին մոռացել Թեոդորոս Ռշտունուն ձերբակալելու և ազատ արձակելու կատակերգությունը, Վարապտիրոց Բագրատունու կասկածելի ժամը, 649-ին քաղկեդոնականությունը պարտադրելու փորձը և, վերջապես, բյուզանդական կայազորի հանգրելու փորձը և, վերջապես, բյուզանդական ասկարծակի հեռացումը Հայաստանից (650-ի արարական ասկարծակության նախօրինին), իսկ Խալիֆայության հետ հաշտության վերոհիշյալ պայմանագիրն արդեն ցույց էր տալիս տության վերոհիշյալ պայմանագիրն արդեն ցույց էր տալիս տության նենգությունը։

Նման բարդ իրազրության մեջ Հայոց իշխան և սպարապետ Թէոդորոս Մշտունին վճռական քայլ կատարեց: Կապերը խզելով նենդ կայսրության հետ, բանակցություններ սկսեց Մուավիայի հետ (Հավանաբար մի հայ նախարարի ուղարկելով՝ Դամասկոս) և, Սերեսի արտահայտությամբ, «Դաշինս կոնցին Թէոդորոս Մշտուննաց տէր ամենայն իշխանակն Հայոց»: Ինչպես տեսնում ենք, քաղաքական գեղքերի ազգեցության տակ, Թէոդորոս Մշտունուն հակառակորդ քաղաքական խմբավորման մեջ գտնվող հայ նախարարներն արդեն լրիվ անցել էին նրա կողմբ: Այսպիսին էր պայմանագրի բնագիրը.

«Այս լիցի ուխտ հաշտութեան իմոց ընդ իս և ընդ ձեզ՝ որչափ ամաց և գուրք կամիշիք և ոչ առնում ի ձենց սակ զերեամ մի. ապա յայնժամ տաշիք երգմամբ, որչափ և գուրք կամիշիք եւ հեծեալ կալէք յաշխարհիդ ժե հազար և հաց յաշխարհէն տուր և ես ի սակն արքունի անգարեմ և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ. բայց այլ ուր և Հրամացեմ՝ պատրաստ լիցին ի գործ և ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս և ոչ տաճիկ սպայ՝ ի բազմաց մինչեւ ցմի հեծեալ թշնամի մի մտցէ ի Հայս և եթէ գայ Հռոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զաւրս յաւզնականութիւն՝ որչափ և գուրք կամիշիք: Եւ երդնում ի մեծն Աստուած եթէ ոչ ստեմ»<sup>108</sup>:

Այս պայմանագրում որոշված է է դարի Հայոց ինքնուրույն իշխանապետության քաղաքական գոյավիճակը: Հայաստանը տարեկան շնչին հարկի դիմաց պահպանում էր իր լայն ինքնավարությունը որպես կիսանկախ պետություն: Կարևոր է այն պարագան, որ Հայոց այրուժին չպետք է մասնակցեր Ասորիի կողմերում (և Փոքր Ասիայում) մղվող արաբա-բյուզանդական պատերազմներին, բայց այլուր կարող էր տարիվել:

Թեև հայ նախարարներն այս հարցում համերաշխ էին Թէոդորոս Մշտունու հետ, սակայն եկեղեցու վերաբերմունքն այլ էր, որի արտահայտիչ Սերես հպիսկոպոսը այսպիս է բնորոշում այդ պայմանագիրը. «Եղին ուխտ ընդ մահու և

բնդ գժոխից գաշինս կոհցինք<sup>109</sup>: Հարկավ, այս հարցում  
թեոդորոս Ծշտունու զլիավոր հակառակորդը ներսին Տայե-  
ցի կաթողիկոսն էր:

Թեոփանեսը արարշապործության 6143 (մոտավորապես  
652) թվականի տակ Հայ-արարական գաշինքի մասին գրում  
է. «Եյդ տարին կայսեր գեմ ապստամբություն բարձրացրեց  
Հայոց պատրիկ Պասագնաթենսը, նա Մուսավիայի հետ դա-  
շինք կնքեց և իր Հարազատ որդուն պատանդ տվեց<sup>110</sup>: Պա-  
տագնաթես անորոշ անունը, բայ Մ. Զամշանի<sup>111</sup> և Հ. Ա-  
ճառյանի<sup>112</sup>, վասակ անվան աղավաղումը պետք է լիներ,  
սակայն Պ. Պետերսը<sup>113</sup> պարզեց, որ դա թեոդորոս Ծշտու-  
նուն արված ածական անուն է (Պարսկածին):

Հետեւելով Հայաստանի օրինակին, Վրաց<sup>114</sup> պատրիկ  
Ստեփանոս Բ-ը և Աղվանից իշխան Զուանչիրը<sup>115</sup> նույնպես  
Հարեցին Արարական խալիքայությանը:

Թեոդորոսի և Մուսավիայի միջև կնքված պայմանագիրը  
ձևուն բաղարականության բացարիկ օրինակ է Հայ միջնա-  
դարի պատմության մեջ, որը թեև Հստակեցրեց Հայ-արա-  
րական Հարաբերությունները, այսուհետեւ բարդացրեց  
Հայ-բյուղանդա-արարական առնչությունները:

3. ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՀԱԿԱԾՈՒՅԱՅՔ ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՇԽՆԹԻՆ ԵՎ  
ԿՐԱ. ԱՐՁԱԿԱՆԵՐՆԵՐԻ

Հաստ Սերեսոսի (ինչպես նաև թեոփանեսի), Կոստանդ Բ  
կայսրը անմիջապես արձագանքեց այս զեպքերին՝ փորձելով  
սիրաշահել Հայերին (բազում աղաշանս և պաղատանս գը-  
րեց առ նոսա) իր մոտ Հրավիրեց, սակայն թեոդորոսը և  
Հայ նախարարները չհամաձայնվեցին: Ապա առաջարկեց  
Հանդիպել Կարնո բաղաքում՝ խոստանալով «աւգնութիւն Հը-  
ռանդիպի» (զրամական կամ ուազմական օգնություն) և խոր-  
ողոգի» (զրամական կամ ուազմական օգնություն) և խոր-  
ողոգիցել անելիքի մասին, բայց սրան ևս չհամաձայնե-  
ցին<sup>116</sup>,

Այնժամ բյուղանդացի զորականները, որոնք կողմնա-  
կից էին վճռական Հակահարվածին, չմոռանալով նաև Մար-

դուցայքի աղեար, շարունակեցին այն ամբաստանությունները Թեոդորոս Մշտունու զհմ<sup>117</sup>, որոնց հետևանքը եղել էր իր ժամանակին նրա խորհրդավոր ձերքակալությունը և տարվելը Կոստանդնուպոլիս։ Այս գեպքում ամբաստանությունները, թե Թեոդորոսը և Հայերը 642—643-ին զաշնակցել եին արարների հետ՝ ընդդեմ Բյուզանդիայի, արդեն շոշափելի փաստ էր մեզագրողների համար և զորականները կոչ արեցին կայսրին՝ գնալ Հայաստան և վրեմ լուծել Հայերից։ Կայսըրը համաձայնեց կատարել նրանց կամքը և 100 Հազար զորքով շարժվեց գեպի Հայաստան<sup>118</sup>։

Անդրադառնալով Հայ-արարական պայմանագրին ու Կոստանդ Բ կայսեր հարձակման ժամանակին, Բ. Առաքելյանը գտնում է, որ պայմանագրիրը կնքվել է 652-ի ամռանը՝ իսկ կայսրը հարձակվել է աշնանը, բայց ձմեռել է և 653-ի դարնանը հեռացել Հայաստանից<sup>119</sup>։ Անկասկած, Կոստանդ Բ-ի արշավանքը տեղի է ունեցել 652-ի աշնանը։

Այստեղ, իմիշխալոց, պետք է նշել, որ ըստ Թեոդորանսի, կայսրը, լսելով Թեոդորոսի Մուսավիայի հետ կնքած գաշինքի մասին, «Եկավ մինչև Կապագովիկիայի Կեսարիան, բայց Հայաստանից հույսը կտրած վերագրածավ»։ Այսուհենքը դեպքերին ժամանակակից Սերեսոսի՝ Կոստանդ Բ կայսեր Հայաստան կատարած արշավանքի մանրակրկիտ նկարագրությունը կամկած չի թողնում, որ կայսրը Կեսարիա հասնելուց հետո ճանապարհը շարունակեց գեպի Հայաստան։ Սրան համաձայն են է դարի Բյուզանդիայի պատմության ուսումնասիրողները՝ Յ. Կուլակովսկին<sup>120</sup> և Ա. Ստրատոսը<sup>121</sup>, նշելով, որ կայսրը 652—653-ին հասավ Կարին ու Դիլին, բռնի քաղկեդոնականություն պարտագրելով Հայերին։

Այսպիսով, Կոստանդ Բ-ը զիմեց Հայաստան և, երբ հասավ Գերջան, եկան Խալիֆայության (Մուսավիայի) պատվիրակները և գրավոր թուղթ ներկայացրին, ուր նշված էր, թե՝ Հայաստանը մերն է, այնտեղ մի գնացեք և սպառնալիք-ներ տվեցին, սակայն կայսրը, կարերություն շտալով, առաջ անցավ և հասավ Կարնո քաղաքը (Թեոդորոսուպոլիս) իր

Կոստանդ Բ.-ի Հայաստան մուտքը զորբով պառկետում մարգրեց Հայ նախարարների շարքերում, թիև Հայ-արարական պայմանագրի կորիման ժամանակ նրանք լիովին Համաձայն էին Թիոդորոս Աշտուածու Հետ: Կայսեր մոտ հկանք Հայքի, Սպերացի, Բագրատունի, Մանաղայք (Մանանաղայք), Գարանաղայք, Եկեղյաց, Կարնացի, Տայեցի, Բասենացի, Վանանդի, Եփրակացի, Խորխոսունի, Դիմաքսյան, Առավելյան, Առանյան, Վարաժնունի, Գնդունի և Սպանդունի նախարարներու Ներկայացան նաև Մուշեղ Մամիկոնյանը և Ներսէս կաթողիկոսը: Նրանք Հայտնեցին կայսրին, թե Թիոդորոս Մշտունին ապատամբել է և լավ Հարարերության մեջ գորոս Մշտունին ապատամբել է և լավ Հարարերության մեջ է արարների Հետ: Կայսրն ու նրա զորքը նզովեցին Հայոց իշխաններ և զրկեցին նրան իշխանությունից. (լուծին զնա ի պատուոց իշխանությեանն). փոխարևու ուրիշին նշանակեց առատուոց իշխանությեանն): Փոխարևու ուրիշին նշանակեց առատուոց իշխանությեանն): Սակայն Թիոդորոս Մշտունին ձոգով ուղարկեցին: Սակայն Թիոդորոս Մշտունին ձերբակալեց նրանց, մի մասին ուղարկեց Բաղեշի բերդը, մյուս մասին պահեց վանա (Բզնունյաց) լճի կղղի-ներուու:

Թեսդորոսը պատրաստվեց պաշտպանության՝ Նա ամբա-  
ցավ Արթամանը կղզում, իսկ զորքը՝ գավառներում։ Նրա հետ  
համերաշխ էին ոչ միայն Սյունիքը, այլև Վիրքն ու Ազգանքը։

Թեսողորոսի կողմանակիցներն էին թագուհաց որի որդին՝ Գրիգորը, Թեսողորոս Աշտանու փեսան, էր Նրանք ամրացան Արքայի բերդում, իսկ Գաշտկարանի տեր Վարազ Ներսեզը, որ ձեռք էր բերել երկրի բոլոր գանձերը՝ մի բաց տեղում<sup>123</sup>:

Կոստանդ Բ-ը սպարապետ (իշխան Հայոց հեծելոցն) նշանակեց Մուշեղ Մամիկոնյանին՝ նրան ուղարկելով Վաս-  
տուրականի (ի կողմն սհաբական գնդին) դեմ երեք հաղար  
զորքով։ Զորք ուղարկեց նաև Սյունիքի, Վիրքի ու Աղվանքի  
դեմ։ Պաշարվեց նաև Արփայք բերզը։ Վիրքը շուտով հնա-  
զանդություն հայտնեց, իսկ Սյունիքը, Վաստուրականը և  
Աղվանքը դիմադրեցին և կայսեր զորքը ավարով ետ վերա-  
դարձավ<sup>124</sup>։

Եերջապես կայսրը որոշեց պարտադրել Հայերին քաղ-  
կեդոնական զավանանքը և նրա հրամանով Դիմինի Ս. Գրիգոր  
մայր տաճարում պատարագը կատարվեց Հունական ծեսով,  
Հունարեն (Հոռոմերեն) և Հույն (Հոռոմ) երեցի կողմից։ Ներ-  
սես կաթողիկոսը և բոլոր եպիսկոպոսները կայսեր հետ հա-  
ղորդվեցին։ Միայն մի եպիսկոպոս ընդդիմացավ, սակայն, ի  
վերջո, Համաձայնեց<sup>125</sup>։

Շուտով Կոստանդ Բ-ին կանչեցին Կոստանդնուպոլիս և  
նա հեռացավ Փիլինից՝ Հայաստանի կառավարիչ (իշխանն  
Հայոց) նշանակելով Հույն զորավար Մավրիանոսին (Մորիա-  
նոս), որին հանձնված էր մի զորամաս։ Կոստանդ Բ-ի հե-  
տանալուց անմիջապես հետո, Փիլինից Հայրենի Տայք փոխա-  
դրվեց նաև Ներսես կաթողիկոսը, քանզի Թեոդորոս Ռշտու-  
նին ու Համակիր նախարարները զայրացած էին նրա դեմ<sup>126</sup>։ Ներսեսի հեռանալով կիսավարտ մնաց Զվարթնոց տաճարի  
և Հայրապետական պալատի շինարարությունը, որը, Հավա-  
նաբար, շարունակեց նրա տեղապահ Անաստաս Ակոռեցին<sup>127</sup>։

Թեոդորոս Ռշտունին, ամրանալով Ախմագար կղզում, իր  
փեսա Համազասպ Մամիկոնյանի հետ, օգնական զորք խընդ-  
րեց Մուսավիայից։ Մտանալով յոթ հազարանոց արարական  
զորամաս, նրանց տեղավորեց Աղիովիտ ու Բզնունիք զա-  
վաններում և այսպես անցկացրեց 652—653-ի ձմեռը։ Բառ  
իրկուցին քաղաքական անորոշ դրությունը նրան խանգա-  
րեց դիմելու վճռական քայլերի։

Սակայն ձմեռն անցնելուց հետո (իբրև անցին աւուրք  
ձմերայնոյն), գարնանը, զատկի ժամանակներում, Թեոդո-

բոսը վճռական պայքարը սկսեց Մալբրիանոսի դեմ, քշեց նրա զորքը մինչև Տայքի ծովեղերյա մասերը, ապա գրավելով Տերապիղոնը, մեծ ավարով վերադարձավ: Գրանից հետո հարուստ քնծաներով մեկնեց Գամակոս Մուավիայի մոտ. վերը նրան նվիրեց սոկեղեն ու ոսկեթել Հանգերձներ և նույն- պիսի զրոշակ (վառ)՝ Հանձնելով իշխանությունը Հայաստա- նի, Սյունիքի, մինչև Կովկաս (Կապկո՞չ) լեռ և Ճորտ պա- հակը<sup>128</sup>: Սա այն տարածքն էր, որից հետագայում առաջա- ցավ Արբինիա նահանգը Արարական խալիֆայության մեջ: Կարենը է ընդգծել, որ Մուավիան թիոդորոսին Հանձնարա- րեց այս ամսոց տարածքը Հպատակեցնել:

բաց այս ամբողջ տարածքը՝ հպատական նաև Արքական խալի-  
ֆայության ուղղմական գործողությունները։ Սերեսը նշում  
է, որ երբ լրացավ Կոստանդիի Մուավիայի Հետ կնքած Հաշ-  
տության ժամկետը, Խալիֆայությունը որոշեց Հարձակվել  
Հռոմեական թագավորության վրա և Հասնել Կոստանդնուպո-  
լիս<sup>129</sup>։ Ըստ Թիոփաննեսի՝ այդ Հաշտությունը կնքվել էր երկու  
տարի ժամկետով<sup>130</sup>, ուստի 653-ին արդեն երկու տարին լրա-  
ցել էր։

վային արշավանք կատարեց, Հասնելով Կոստանդնուպոլսի նեղուցը, մեծ տարածքներ նվաճեց<sup>133</sup>, նույն թվականին Թարարին վկայում է, որ «Մուսավիր իրն Արռ Սուֆիանը արշավեց նեղուցը՝ Կոստանդնուպոլսի նեղուցը, իր հետ ունենալով կնոքը... Ասվում է նաև՝ բրոջը»<sup>134</sup>:

Հավանաբար, նույն 653-ի աշնանը (բատ Թարարիի՝ Հիջրի 33 (2 օգոստոս 653—21 հուլիս 654) Մուսավիրն Մալաթիայի կողմից արշավեց զեսի Հիսն ալ-Մարաս (Կոնուբերդը)<sup>135</sup>: Խալիֆա իրն Խայյաթը նույն թվականին Հիջում է այդ արշավանքը Հետեւյալ ձևով. «Մուսավիր իրն Արռ Սուփիանը արշավանք կատարեց Մալաթիր և Արրիկ (Տերիկ): Արշավեց նաև Հիսն ալ-Մարաս, որը մեռմի երկրում է»<sup>136</sup>:

Արաբները արշավեցին նաև խազարների զեմ: Այդ մասին պատմում է Սերեսը, նախ Հազորդելով, որ Ատրպատականի ժողովուրդը (Մարք), ծանր Հարկապահանչությունից դժգոհ լինելով, ապստամբեց արաբների զեմ, սակայն պարտրվեց ու ապաստանեց Գեղը (Գեղան, Գրլան) և Գելը (Գելումը, Գալլամ) գավառները: Արաբները Հետապնդեցին նրանց, սակայն քաջ լեռնականների կողմից լեռնային այդ անմատչելի վայրերում անհաջողության մատնվեցին: Նրանք շարժվեցին զեսի ձորա պահակը (Կապանս Ճորայ), ուր ամեն ինչ ավերեցին: Սակայն նրանց զեմ դուրս եկավ խազարաց զորքը (զօրքն թետալաց), որը ջախչախսեց արաբներին և սրանք, մազապուրծ, ձողոսքեցին զեսի Հարավ<sup>137</sup>:

Թարարին Հիջրի 32 (12 օգոստոս 652—1 օգոստոս 653) թվականին նշում է, որ Օսման խալիֆան խազարների զեմ պատերազմի համար արաբական զորքի հրամանատար նրանակեց Սահիդ իրն ալ-Ասիրին, որը Հավանարար, մնալով Ատրպատականում, Հրամայեց Գարրանդում գտնվող Արդ ալ-Բահման իրն Ռարիային, որ նա Հարձակվի Բալանջար քաղաքի վրա: Վերջինս Հասավ Բալանջար, սակայն սպանվեց խազարների ձեռքով և արաբական ջախչախսած զորքի մի մասը ապաստանեց նրա եղբոր՝ Սալման իրն Ռարիայի մոտ, որը գտնվում էր Գարրանդում, իսկ ոմանք Հասան Գիլան ու Գալլամ<sup>138</sup>:

Ինչ վերաբերում է Սերեսոի այն վկայությանը, թե արար-  
ները հարձակվեցին Գիլանի ու Դալլամի վրա և անհաջողու-  
թյան մատնվեցին, ապա այդ արշավանքը, Հավանաբար,  
կատարվել էր Սահդ իրն ալ-Ասիի կողմից, որը գեռ հիշրի  
30 (650/651) թվականին ասպատակել էր Թարարիստան լեռ-  
նային նաշանգը<sup>139</sup>, որը հարակից էր Գիլան-Դալլամին: Բա-  
ւազուրին<sup>140</sup>, առանց թվական նշելու (650-ական թվական-  
ներին), հիշում է Սահդ իրն ալ-Ասիի մի արշավանքը Դայ-  
լամի գեմ, որը գուցե կատարվել էր 652—653-ին:

Այսպիսով, 653-ին արարները գարնանը արշավեցին  
դեպի Կոստանդնուպոլիս, իսկ աշնանը՝ ամրանալով Մալա-  
թիայի շրջանում, փորձում էին ամրապնդել իրենց սիրքերը  
Արքատականում, մերձկասպյան շրջաններում և Դարրան-  
դում, իսկ Հայաստանում Թեոդորոս Ռշտունին արարական,  
դուցի նաև Հայկական զորքով Հալածեց Մալրիանոսին:

Սակայն բատ Սերեսոի վկայության, արարներն այդ տա-  
րում արշավեցին դեպի Հայաստան, որը կատարվեց, ինչպես  
երեսում է 653-ի ուշ աշնանը<sup>141</sup>: Մուավիյայի՝ Կոստանդնու-  
պոլիսի վրա կատարված ժողային արշավանքի անհաջողու-  
թյանը և արարների փախուստը նկարագրելուց հետո, նա ա-  
վելացնում է. «Եվ մյուս զորքը, որ նստած էր Կապաղով-  
կիայի (Կապուտկացվոց) կողմերում, պատերազմեց Հունաց  
զորքի գեմ. Հույները նրանց հաղթեցին, և արարները փա-  
խան Արթաստանի (Միգդոնիա) կողմերը՝ ճանապարհին Չոր-  
րորդ Հայքը կողսպատելուց հետո»:

Պատահեց, որ աշնանային ժամանակն անցնելուց, երբ  
ժողովնում էր ձմեռը, եկամ արարաց զորքը և կանգ առավ  
Դիլինում ու մտածում էր զնալ Հարվածել վիրքը Արարների  
Հրամանատարը նրանց հետ սպառնալի պատգամով խոսեց.  
որ գան Հարատակվեն կամ թողնին երկիրը ու զնան, իսկ նր-  
ու գան Հարատակվեն կամ թողնին երկիրը ու զնան, իսկ նր-  
ու գան Հարատակվեն կամ թողնին երկիրը ու զնան, իսկ նր-  
ու գան Հարատակվեն կամ թողնին երկիրը ու զնան, իսկ նր-

երբ ճանապարհ ընկան, նրանց վրա հասավ ցուրտը և

Ճյուղը, որի հետևանքով փութաջան հեռացան Ասորէստանի կողմէիքը, իսկ Հայաստանում ոչ մի անիբավություն չգործեցին»:

Ինչպես նշում է Գ. Աբգարյանը<sup>142</sup>, այստեղ Վիրքի տակ ենթադրվում է Թեոդորոսի հետապնդումից փախած և Վիրքում ապաստանած բյուզանդական զորքի մնացորդը, արաբները նրանցից պահանջում էին Հանձնվել կամ հեռանոլ Վիրքից, քանի որ ըստ Մուավիայի՝ Թեոդորոս Խշտունուն տված Հանձնարարության, Վիրքը (Հայաստանին հարակից այլ երկրը հետ միասին) պետք է հալտակեցվեր Խալիֆայության գաշնակից Թեոդորոսի կողմից:

Այսպիսով, Բյուզանդիայի Կոստանդ Բ կայսեր և արաբների կողմից Հարձակումների ենթարկվելով, Հայաստանում ստեղծվել էին քաղաքական հակասական տրամադրություններ: Թեոդորոս Խշտունին, որ Հաճախ էր նախարարների մեծ մասի դիմադրությանը հանդիպել, այդ ժամանակ փոքր Հեղինակություն էր վայելում, Հիմանդ էր, մեկուսացած Ախմար կղզում:

Տեսնելով և հասկանալով, որ նման խառը իրադրությունը ծանր հետևանքներ կունենա, Հայաստանում առկա երկու քաղաքական խմբավորումները՝ Խալիֆայության կողմնակիցները՝ Թեոդորոս Խշտունու փեսա Համազասպ Մամիկոնյանի և Բյուզանդիայի կողմնակիցները՝ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ, նախարարաց ժողով գումարեցին (եկեղ ի մի վայր միարանեցան), միմյանց հետ Հաշտություն կնքեցին: Նրանք ձմեռը խաղաղությամբ անցկացրին, որ թեթևացնեն Հայ շինականի վիճակը: Կարգեցին Հարկանեններ՝ ոսկով ու արծաթով տուրքերը Հավաքելու Համար: Հայաստանը բաժանեցին ըստ նախարարությունների ունեցած գնդերի թվի (ըստ թուոյ իրաքանչիւր Հեծելոց)<sup>143</sup>, քանզի Երկիրը գտնվում էր ալյատական մասնատվածության պայմաններում և ամեն մի նախարար ինքնուրույն իշխում էր իր ժառանգական տիրությներին: Բալազուրին Հայաստանի այս շրջանի մասին խոսելիս ընդհանուր ձևով օգտագործում

է «բաժնեկալվածքային արքայիկներ» (մուկուք աւշ-թա-վահի)՝<sup>144</sup> արտաջայտությունը, որն իրոք բնորոշ էր և դարձ որոշ ժամանակաշատվածների համար:

#### 4. ԱՐԵԲՆԵՐԻ 654 թ. ԱՐԵՎԱԿԱՆՔԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Մուավիան թիե Թեսպորոս Ծշտունու հետ պայմանագիր էր կնքել, բայ որի Հայաստանը պահպանում էր իր քաղաքա-կան ինքնուրույնությունը, այսուհետեւ վստահ լինելով, որ 653 թ. արաբական ծովային արշավանքից հետո Կոստանդ Բ-ը իր Համարձակվի Հակահարված տալ և օգտագործելով Հայաստանում գտնվող բյուզանդական կայազորի առաջարկանության փաստը, անտեսելով Հայ-արաբական պայմանա-դիրը՝ որոշեց նվաճել Հայաստանը:

Այս արշավանքի մասին պատմում հն երեք պատմիչներ. Սեբեոսը՝ Հակիրճ, Թեոփանիսը՝ երկու խոսքով, իսկ Բալազուրին՝ բնդարձակ շարադրանքով:

Թեոփանիսը արարշագործության 6145 (այսինքն՝ փըրկ-Հական 654) թվականին արաբների կողմից Հռոդոս կղզու զրավումը հիշելուց հետո, որն ընդունված է որպես 654-ին զատարված դեպք, ավելացնում է, «Նույն տարին արաբների կատարված դեպք, ավելացնում է, «Նույն տարին արաբների զորավար Հարիրը արշավեց Հայաստանի վրա: Հանդիպելով զորավար Հարիրը արշավեց Հայաստանի վրա: Մասկիանոսին, նրան Հալածական Հոսմայիցիների զորավար Մակրիանոսին, նրան Հալածական արեց մինչև Կովկասյան լեռները, իսկ երկիրը ավարտեց»<sup>145</sup>,

Բալազուրին վկայում է, որ Օսման խալիֆան գրեց Ասո-բալազուրին վկայում է, որ Օսման խալիֆան գրեց Ասո-

բալազուրի (Շամ), Հազմանայի և Մահմետային ամրությունների րիբի (Շամ), Հազմանայի և Մահմետային ամրությունների (Մուզուր) փոխարքա Մուավիային՝ Հրամայելով Հայաստան ուղարկել Հարիր իրն Մասլամային, որն աշքի էր բնկել Հո-ռոմների գեմ պայքարում:

Հարիրը վեց կամ ութ Հազարով ճանապարհ ընկալվ՝ նը-

պայմանով։ Ստանալով պայմանագիրը, նրանցից շատերը (Հավանաբար՝ Հույները) հեռացան զեսի Բյուզանդիա։ Հարիբն իր զորքով մի քանի ամիս մնաց այս քաղաքում։ Մերեսը վկայում է, որ արարները կողովտեցին բնակչության ոչ միայն ուկին ու արծաթը, այլև ամբողջ ունեցվածքը։ Ապա Հարիբը լուր ստանալով, թե Արմանիակուսի պատրիկը (Հավանաբար՝ Մավրիանոսը) մեծ զորք է Հավարել (ըստ Թարաբիի՝ 80 հազար), որին միացել են ալանները, արխազները և Սամանդարի խաղարները, նամակով օդնություն խնդրեց խալիֆայից։ Օսմանը գրեց Մուսավիային, որ ուզարկի այնպիսի զինվորներ, որոնք պատրաստ են պատերազմելու հանուն Հավատի (Քիշադ) և ավարի Մուսավիան Հարիբին երկու Հազար ուազմիկներ ուղարկեց, որոնց վերջինս ըրնակեցրեց Կարսո քաղաքում, տալով պարգևական Հողակրտորների (կաթարի) ու զարձրեց մշտական կայազոր։

Հարիբի նամակը ստանալուց հետո, Օսման խալիֆան գրել էր նաև Քուֆայի կառավարիշ (Արևելքի փոխարքա) Մահի իրն ալ-Խասիին, որ զորք ուղարկի Հարիբին և Հրամանատար նշանակի Սալման իրն Խարիա ալ-Բահրիիին։ Վերջինս վեց Հազարանոց զորքով ներկայացավ Հարիբին։ Մակայն մինչ այդ, բյուզանդական զորք էր եկել կանգնել Եփրատի ափին։ (ըստ Թարաբիի՝ Մավրիանոսի զինավորությամբ), Հավանաբար Կարսո քաղաքից ոչ շատ հեռու (Հարիբի զորքը գիշերը Հարձակվեց ու կոտորեց բյուզանդացիներին և սպանեց Հրամանատարին։ Եվ առա նոր տեղ Հասած Քուֆայի զորքը Սալմանի Հրամանատարությամբ բաժին պահանջեց ավարից։ Մակայն Հարիբը մերժեց և երկու Հրամանատարներն անարդեցին իրար։ Երբ այդ մասին գրեցին Օսմանին, նա գտնելով, որ այդ ավարը Հարիբի զորքի վաստակածն է, Հրամայից Սալմանին հեռանալ, արշավել ու նվաճել Ազգանքը (Առան)։

Հարիբը Կարսո քաղաքից շարժվեց ու Հասավ Մարդազի զավառը (Մարրալա, Մարդալա) և բանակ դրեց։ Նրա մոտ հկավ Խլաթի պատրիկը (Հավանաբար՝ Մուշեղ Մամբիկոնյանը)՝ իր հետ բերելով իյազ իրն Ղանմից ստացած գրությու-

նը (քիտար), որով հարկի (իտավա) գիմաց երաշխավորվածէին նրա անձը, տնեցվածը, երկիրը և տիրույթները և Հարիրը հաստատեց այն Ապա նա իշխանեց մի կայանում (մանզիլ<sup>146</sup>, օթեան), Հարբի (Հարաք) ու Վարագա դաշտի (գաշտալ-Վարաք) միջին, ուր նրա մոտ եկավ Խլաթի պատրիկը՝ բերելով իր վրա զրված հարկը և մի ընծառ, սակայն Հարիրը չընդունեց: Նա կանգ առավ Խլաթում, ապա շարժվեց գեղի Սիփան (ալ-Սիրանա), ուր նրան դիմավորեց Մոկսի (Մուրս) տերը (սահիր), որը Վասպուրականի (Բասֆուրշան) գավառներից էր: Հարիրը ճանալեց (կաթատաջու) նրա տիրույթները այդ երկում, խաղաղության (սուլհ) թուղթ ու երաշխավորագիր (աման) զրել տվեց ու հանձնեց նրան:

Հարիրը մտնելով Արձեշ (Արշիշ) և Ապահունիս (Բաղանայս, Բաշունայս) գավառները, զինվորներ ուղարկեց ոչ միայն զրավելու գյուղերը, այլև բնակչությունից գլխահարկ (գլխի շիզիա) գանձելու: Նրա մոտ եկան գյուղերի մեծամեծերը, որոնց հետ հաշտության պայմանագիր կնքեց (ճանաշեց նրանց իրավունքները)՝ հողահարկ (խարաչ) վճարելու պայմանուի:

Ապա Հարիրն առաջ շարժվեց ու հասավ Արտաշատ (Արդասաթ), որը որդան կարմրի զուզ էր կոչվում (կարիատ ալ-Կիրմիդ): Անցավ Արքադ<sup>147</sup> (Ահրար, Ազատ) գետը, կանգ առավ Դվնի դաշտում (մարշ Դարիլ): Ապա առաջ շարժվեց ասսավ (քաղաքի) զունը: Բնակիչները ամրացան (բերու հետեր տեղացին, իսկ Հարիրը քարանես մեքենադում) և նետեր տեղացին, իսկ Հարիրը գիրքերը այնքան ժամանել (մանջանիկ) քարկոծեց նրանց գիրքերը այնքան ժամանեկ, մինչև որ երաշխավորագիր (աման) և հաշտություն (սուլհ) խողքեցին: Նա կնքեց այդ պայմանագիրը:

Բայազման վկայակոչելով մեկ ուրիշ ազբյուր, Դվինի նվաճման մի այլ տարբերակ է Հիշում:

Հարիր իրն Մասլաման պաշարեց Դվինը և բանակ զրեց քաղաքի շուրջը: Նրա դեմ դուրս եկավ Հոռոմ Մավրիանոսը (Մաուրիան ալ-Ռումի), սակայն Հարիրը գիշերը Հարձակվեց, կոտորեց Հոռոմներին ու կողոպտեց նրանց ճամբարը<sup>148</sup>:

Այսպիսին էր Դվինին տրված պայմանագիրը.

«Հանուն ամենագութ, ամենառողում ալլահի: Սա է Հարիբ իրն Մասլամայի գրությունը (քիտար) Դիլինի բնակիչներին՝ քրիստոնյաներին, զրադաշտականներին (մաջուս), հրեաներին, նրանց ներկաներին ու բացականերին, առ այն, որ երաշխավորում եմ ձեր անձը, ոնեցվածքը, եկեղեցիները, տաճարները և քաղաքի պարիսպները: Դուք ապահովության մեջ կլինեք և մենք պարտավոր ենք Հավատարիմ մնալ այս ուխտին այնքան ժամանակ, որքան որ դուք Հավատարիմ կրտնեք՝ վճարելով զլխաճարկն (շիզիա) ու հողաճարկը (խարաց):

Կնքեց Հարիբ իրն Մասլաման»:

Ապա Հարիբի հեծյալ ջոկատները զրավեցին Գառնին, Աշոցքը (Աշուշ), Զատ ալ-Լուշումը (Սանձերի վայր), Կոտայքը (Քուտիա) և Աղատաց Հովհիտը (Վագի ալ-Ահրար), ապա Դվինի բոլոր գյուղերը: Նա ջոկատներ ուզարկեց Շիրակ, Տայք (Սիրազ, Թայր, Թայզ) ու Բագրեանդ (Բագրավանդ): Եկավ այդ տարածքների պատրիկը և նրանց միջին Հաշտություն կնքեց՝ պայմանով, որ նրանք Հարկ վճարեն, մահմեդականների հետ բարեկամաբար վարչեն, Հյուրբնկալեն և օգնեն թշնամիների ղեմ կոմի ժամանակ:

Հարիբն անձամբ գրավեց նախաճավան (ալ-Նաշավա) և Դիլինի Հաշտության պայմանագրի նման պայմանագիր կրնեց նրա բնակիչների հետ: Այստեղ նույնպիսի պայմանագիր կնքեց նաև Վասպորականի պատրիկի հետ: Պատրիկը, տարեկան Հարկի փոխարեն, նվերներով գոհացրեց նրա զինված ջոկատներին (Հաղայիլա) ու ձիավորներին (աֆարիսա):

Սիսականում (Սիսազան) ևս Հարիբին դիմագրեցին, սակայն նա Հաղթեց, գրավեց Վայոց ձորը (Վայս, Վայր) և Սյունյաց ամրոցների տերերի հետ Հաշտության դաշինք կրնեց՝ Հարկ վճարելու պայմանով:

Սրանից հետո արաբական զորքը շարժվեց ղեպի Հյուսիս ու կանգ առավ Զատ ալ-Լուշում վայրում (որը Հավատարար Տաշիրում է), ուր մի անգամ եղել էին նրա ջոկատները: Հավանաբար այստեղ (ինչպես կարելի է ենթազրել Բալազուրուն նկարագրությունից), նրա մոտ եկավ վիրքի պատրիկի

(Սահմանու Բ) սուրչանդակը, նամակ Հանձնեց՝ խնդրելով Հաշտության պայմանագիր ու երաշխավորագիր։ Հարիրը Համաձայնվեց։

Ապա Հարիրը մտավ վիրք և, Հասնելով Տփղիս, նրա բնակիչների հետ պայմանագիր կնքեց, ուր երաշխավորում էր նրանց անձը, աղոթավայրերը, ժեսերը՝ զինահարկի և այլ պարտավորությունների գիմաց։

Արարները նվաճեցին վիրքի հետևյալ գավառները, որոնց մեջ կային Մեծ Հայրից ժամանակին խրված մասեր՝ Զվարի (Հուարիհ), Քուստի Փառնիս (Քուսփառնիս), Քիսար (Քասար), Հունարակերտ (Խունան), Սամցիս (Սամսախիս), Գարդման (Հարդման), Քուստի (Քուստասչի), Շավշեթ (Շառշշիտ), Բազալիթ (Բազալիտ): Նրանց հետ պայմանագիր կնքեց՝ Հողահարկ ու զինահարկ վճարելու պայմանով։ Հարիրը կնքեց՝ Հաշտություն կնքեց նաև Կղարչքի (Կալարչիտ), Թրուեղի (Տարիալիտ), Կախեթի (Խախիթ), Զավախիթի (Զավախիթ), Արտահանի (Արթահան, Արթահան), Ալանաց գուանիթի, Արտահանի (Արթահան, Արթահան), ինչպես նաև Շանարաց (Սաննարիյա) և Գիգայից (Գուգանիյա) հետ՝ Հարկ վճարելու պայմանով<sup>149</sup>։

Արարական 654 թվականի արշավանքի՝ Բալազուրիի տվյալներությունից տարբեր է Սերենսի նկարագրությունը։

Հայաստանում գտնվող արարական զորքը ծայրեծայր նվաճեց ամբողջ երկիրը։ Մուշեղ Մամիկոնյանը (որը նախ կիում բյուզանդական կողմնորոշում ուներ) բմբոստանալով կիում պատահացի գեմ, Հայաստակություն Հայտնեց արարաներին։ Բյուզանդիայի գեմ, Հայաստակություն իշխանները, միարանեթեղորոս Ծշտունին և երկրի բոլոր իշխանները, միարանեթեղորոս Մշտունին և երկրի բոլոր իշխանները, քանզի մահու երկյուղ կար նրանց սրտում։

Այդ տարում Արտավազդ Դիմաքսյանը, իր եղբոր նախանձի պատճառով, մատնվեց Հարիր կոչված գաման գահձի ձեռքը, որը Աշնակի Արուճում էր նստում, և Հարաշար մահով սպանեց նրան։

Բազրմանդի կողմէրում արաբական զորքը հանգիստեց Մավրիանոսի գլխավորած բյուզանդական կայսորքին, որն օգտվելով ձմեռային ցուրտ և զանակից, նեղում էր արարներին: Վերջիններս, շնամարձակվելով նրանց գեմ բացահայտ պատերազմի դուրս գալ, հանկարծակի անցան զեար (Հայունաբար՝ Արածանի) և ամրացան Զարեհավանում: Բյուզանդացիք գրան կարենություն չտվեցին և, գնալով զեպի Հյուսիս-արևելք, ավարտեցին Պվինի բերդը, ապա իշտն նախճական՝ կողոպտելու նպատակով, սակայն Հաջողություն չունեցան:

Գարնանը բյուզանդացիք պատրաստվեցին պատերազմելու Զարեհավանում Հայաստանված արարների զեմ, սակայն Մավրիանոսը նախ կամեցավ իրազործել նախճականը կողոպտելու իր ծրագիրը: Երբ բյուզանդացիք կռվում էին նախճականի բերդապահների (Հավանաբար՝ Հայերի) զեմ, արարները հարձակվեցին նրանց վրա, կռտորեցին ու մնացածներին փախուստի մատնեցին: Մավրիանոսը նրանց հետ փախուստական գնաց վիրք:

Ապա արաբական զորքը շարժվեց զեպի արևմուտք, պաշարեց Կարնո քաղաքը, սակայն բնակիչները չկամեցան պատերազմել և բացելով քաղաքի գոները, հնազանդվեցին նվաճողներին: Արարները, մանելով քաղաք, ինչպես արգեն առվեց, կողոպտեցին ոսկին ու արծաթը, քաղաքի հարստությունը: Ապա ավարտեցին ամբողջ Հայաստանը, Աղվանքը: Եկեղեցիները զրկվեցին թանկարժեք զարգերից: Արարները որպես պատանդ տարան երկրի հայտնի իշխաններին և շատերի կանանց, որդիներին ու դուստրերին:

Վերջապես՝ Թեոդորոս Ռշտունին իր համազգիներով տարվեց Ասորիստան, այսինքն՝ Ասորիք (Դամասկոս): Այստեղ, օտար Հողի վրա, վախճանվեց մեծ քաղաքագիտն ու հմտությորավարը: Նրա աճյունը բերվեց ու թաղվեց Հայրենի գավառում<sup>150</sup>:

Այսպիսով, երեք պատմիչներ (Թեոփանես, Բալազուրի, Սերես) պատմում են Հայաստանի և մասամբ Վիրքի նվաճ-

ման մասին, սակայն նրանց վկայությունների միջև շատ տարբերություններ կան:

Բայ Թհեռիանիսի և Բալազուրիի, Հայաստանը նվաճվեց  
մեկ տարվա (654), իսկ ըստ Սեբեոսի՝ երկու տարվա ըն-  
թացքում (654—655): Կարելի է ընդունել գեապերին ակա-  
նատես Սեբեոսի տեղեկությունը: Բալազուրին Հիշում է, որ  
Հայերը զիմագրել են Կարնո քաղաքում, Գիլնում և Սյունի-  
կայում, իսկ Սեբեոսը Հայաստանը է, որ Հայերը ոչ մի գիմա-  
գրություն ցուց չեն տվել: Թեև Սեբեոսը գեապերին ժամա-  
նակակից է, բայց ավելի հայտնական է Բալազուրիի տե-  
ղեկությունը:

Սավրիանոսին երեք պատմիչներն էլ հիշատակել են, սակայն նրա վիրք փախչելու մասին խոսում են միայն Սեղոսն ու Թեոփանեսը: Ըստ նրանց նա հասակ Կովկաս լեռը, նրա վալազուրին լուսում է այդ մասին: Անշուշտ հավաստի է նրա վիրք փախչելու:

բար կիրք փախչելը։  
Բալազուրին գտնում է, որ Հարիբը չի նեղել Հայերին,  
չի կողոպտել, չի կոտորել, նույնիսկ չի ընդունել Խաթի պատ-  
րիկի բիբած Հարկն ու ընծան Իսկ Սերենոսը և Թեոփանեսը  
կայցում են, որ նա կողոպտել է ամբողջ Հայաստանը, ընդ-  
վկայում մինչև եկեղեցիները, մահվան է գատապարտել Արտա-  
շուպ մինչև եկեղեցիները, մահվան է գատապարտել Արտա-  
շուպ Դիմաքսյանին, որը, Հավանաբար, պայքարի կողմնա-  
վազք Դիմաքսյանին, որը, Հավանաբար, պայքարի կողմնա-  
վազք էր, սակայն այդ ծրագրին Հակառակող եղբայրը մատ-  
նել էր նորան։

է հնթաղրել, որ արարները կամեցան նախ Հաղթել բյուզանդական գորբին, որը սպառնալիք էր նրանց համար, ապա զբաղվել Հայաստանի գավառներն ու քաղաքները նվաճելով, որոնք հազիվ թե գիմագրություն ցույց տային:

Ինչ վերաբերում է Վիրքի նվաճմանը, ապա Թեոփանեսը Հեռավոր ակնարկ է անում՝ վկայելով, որ Հարիբը Մայրիանոսին հալածեց մինչև Կովկասյան լեռները: Դա հաստատվում է նաև Բալազուրիի այն տեղեկությամբ, թե Հարիբը նվաճեց նաև Ալանաց դաները: Աղվանքի նվաճման մասին անուղղակի ակնարկ ունի Սերեսոր, հիշելով միայն, որ Հարիբը կողոպտեց նաև Աղվանքը:

Վիրքի նվաճման վերաբերյալ հստակ և մանրամասն պատմում է միայն Բալազուրին և դա հավաստի պետք է համարել:

Հայաստանի հիմնական մասի և Վիրքի նվաճմանը զուգահեռ հպատակվեցին նաև Հայաստանի արևելյան նահանգները, Աղվանքը և մերձկասպյան շրջանները, որի մասին հստակ գրում է միայն Բալազուրին<sup>151</sup>:

Սալման իրն Ռաբիա ալ-Բահիլին, ինչպես տեսանք, տարակարծություններ ունենալով Հարիբ իրն Մասլամայի հետ, ուղարկվեց վերոհիշյալ երկրամասները նվաճելու: Սալմանը նախ նվաճեց Հայաստանի այն նահանգները (Արցախ, Ուտիք, Փայտակարան), որոնք Աղվանքի կազմում էին:

Նա հաշտության պայմանագրով նվաճեց Բայլականը՝ երաշխավորելով բնակչության կյանքը, ունեցվածքը և քաղաքի պարիսպները՝ գլխահարկ և հողահարկ վճարելու պայմանով: Երբ Սալմանը փորձեց գրավել Պարտավը, բնակիչները գիմագրեցին, սակայն որոշ ժամանակ պաշարված մընալուց հետո Պարտավը նույնպես հանձնվեց՝ Բայլականի պայմաններով:

Սալմանը կանգ առավ Պարտավում և իր հեծյալներին ուղարկեց նվաճելու Շակաշեն (Շակաշին), Մեծ Կուհնք (Միսկուան), Ուտիք (Ուզ), Մեծ Իրանք (Միսրիան), Հարձւանք (Հարցալիան) և Տրի (Տիար) գավառները և Շամքոր քաղաքը:

Ապա Սալմանը զբավեց բուն (Ճախափնյա) Աղվանքը. նախ նվաճեց նրա արենելյան կեսը՝ Կապաղակը (Կարալա), ապա արեմտյան կեսը՝ Շարեն (Շաքքան) ու Կարեճանը (Կամբիզան), որոնց տերը նրա հետ հաշտության պայմանագիր կնքեց՝ Հարկ վճարելու պայմանով։ Հետո Սալմանը նվաճեց մերձկասպյան շրջանները։ Այնուհետև նրա հետ հաշտության պայմանագիր կնքեցին նաև Խայզանի ժողովուրդը, Շարուանի թագավորը և լեռների բոլոր թագավորները, ինչպես նաև Մաղքթաց (Մասկաթ), Շապորանի (Շարուրան) և Դարբանդ (ալ-Բար) քաղաքի բնակիչները։

Հայաստանի, Վիրքի, Աղվանիքի և մերձկասպյան շրջանների նվաճումով ավարտվեց մի ժամանակահատված, երբ արարները առանձին ասպատակություններով ոչ միայն կողոպտում, գուցե և հետախուզում էին Հայաստանը։ Ի վերջո, նրանք եկան նվաճելու այն՝ Հարակից երկրներով։ Թեև դա ոչ թե վերջնական, այլ ժամանակավոր նվաճում էր, սակայն արար պատմիշները այդ օրիվանից Հայաստանը և Հարակից երկրները համարում էին հալիֆայության հպատակ։

Այս ժամանակահատվածի գլխավոր քաղաքական գեմքը Թեոդորոս Ռշտունին էր։ Նա Հայկական միջնադարի քաղաքական և ռազմական կարկառուն գործիշներից էր։ Նրա ձեռնարկած միջոցառումները, սկսած ռազմական Համարձակ գործողություններից մինչև ճկուն դիվանագիտական բանակցությունները, ապահովեցին իր իսկ հիմնած Հայոց իշխակցությունները, ապահովեցին իր իսկ հիմնած Հայոց իշխական պետության ինքնուրույնությունը։ Իր գործունեությունը սկսել էր որպես պարսկական (արենելյան) մասի սպարապետ, ապա իրական մարզպան։ 639 թ. միավորվելով Հայաստանի երկու (բյուզանդական և պարսկական) հաստածները, ստեղծել էր միացյալ Հայկական ինքնուրույն իշխանակցություն, դառնալով նրա առաջին Հայոց իշխանը (պատրիկ)։

Որպես ճկուն դիվանագետ, սկզբում նա կողմնակից էր բյուզանդական կողմնորոշման, քանզի արարական արշավանքներն ավերում էին Հայաստանը։ Այս ժամանակ նրան վաղարշական պատրիկ էին Հայաստանը։

կողմնակից էր Հայ նախարարների փոքր մասը։ Սակայն, երբ Բյուզանդիան, որպես պատասխան նենգորեն պայմանագիր կնքեց Խալիֆայության հետ, արդեն նախարարների մեծամասնությունը միացավ նրան։ Կոստանդ Բ կայսեր Հարձակման ժամանակ դիմագրեց փոքրաթիվ՝ նախարարների հետ։ 654-ի արարական ներխուժման ժամանակ նա ամրացավ Ախթամար կղզում, այս անգամ արդեն Հարված ստանալով նենդ խալիֆայությունից։

Թեև կենդանության օրոք լիովին չտեսավ իր ջանքերի արգասիքը, այսուհանդերձ է դարի երկրորդ կեսում, իր Հաշորդների օրոք, Հայաստանը ոչ միայն քաղաքական ինքնուրույնություն ուներ, այլև տնտեսական ու մշակութային զարթոնք էր ապրում։

Թեոդորոս Ծառունու Հերոսական գործունեությունը, նյութ դառնալով պատմական երգերի և ավանդությունների, իր արձագանքն է գտել Սասնա ծռեր վեպում, որպես վիպական կերպար՝ Թեոփ Թորոս և Թես-Թորոս ձեռվ։ «Հերոսի անունը Թես-Թորոսի վերածելով, — զրում են Մ. Արեգյանը և Կ. Մելիք Օհանջանյանը, — նրան վերապրել են թոշունի Հատկությունն նա մի օրում թոշում է Հայաստանի զանազան կողմերն ու երկրի պաշտպանության համար բերդեր Հիմնում<sup>152»</sup>։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱԼԻՖԱՅԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆԻ ՄԻՋԵՎ  
Է ՊԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍՈՒՄ

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ ԴԱՇՆԱԽԹՅ

Թվում է, թի արաբները օմար (634—644) և օսման (644—656) խալիֆաների օրոք արդեն նվաճել ու հաստատվել են Մերձավոր ու Միջին արևելքի բազում երկրներում, սակայն շուտով սկսվեց առաջին մեծ ճգնաժամը Արարական խալիֆայության մեջ Անհավատալի արագությամբ ըստեղծված լայնածավալ պետությունը չէր կարող անմիջապես կայուն վիճակ ունենալ:

Օսմանի դեմ մեծ գժգո՞ռություններ կային: Նա օմայան տոհմից էր, որը ժամանակին հալածել էր Մուհամմադին Հեթանոսության ժամանակ Կուրայշ ցեղի մեջ տիրապետող դիրք ունեցող այս տոհմը երկար ժամանակ չէր կարող ըստ-վերում մնալ և աշա 644-ին բնտրվեց առաջին օմայան խալիֆան՝ Օսմանը, որը Մուհամմադի փեսան էր: Նա բազմա-թիվ օմայանների կառավարչի պաշտոն տվեց, և նրանք շուտով երկրի տարրեր նահանգներում հողային տիրությների տեր դարձան<sup>1</sup>:

Հենց Օսմանի դեմ 655-ին բնդդիմադիր տրամադրություններ կային տարրեր նահանգներում<sup>2</sup> և մթնոլորտը շինացած էր խալիֆայության մեջ: Նույն թվականին խալիֆան նահանգների կառավարիչների խորհրդակցություն հրավի-

րեց Մագիստրում, սակայն նրանք ոչ մի համաձայնության չեկան։ Օսմանի գեմ գործում էին Եգիպտոսի կառավարչի պաշտոնից հանված Ամրու իրն ալ-Ասր, Մուհամմադի ազգեցիկ այրին՝ Ալիջան, որը զայրացած էր տարեկան ոռօճիկը կրծատելու պատճառով։ նաև տոհմակից Մուավիան։ Ասորիի կուսակալը, իրրե թե պաշտպանում էր նրան և նույնիսկ առաջարկեց մայրաքաղաքը տեղափոխել Դամասկոս, սակայն, ըստ էության, սպասում էր, թե այս ամենն ինչով կրվերջանա։

656 թ. մարտ ամսին գժգոհողների մի դունդ (500 հոգի), ուխտագնացության անվան տակ, Եգիպտոսից ուղղվեց Արարիա, Արու Բարբ խալիֆայի որդի Մուհամմադի պլանվորությամբ։ Նրան միացան Քուֆայի ու Բասրայի գժգոհ տարրերը, որոնց գլխավորում էր Մալիք իրն Աշտար զորավարը։ Հասնելով Հիջազ, ապստամքները մտան Մաղինա և շրջապատելով Օսմանի բնակարանը՝ ներխուժեցին ու խողիսողեցին նրան 656 թ. հունիսի 17-ին<sup>3</sup>։

Նման քաղաքական պայմաններում, հենց 655 թ. արաբները ավարտելով Հայաստանի նվաճումը հեռացել էին։ Դեռ 653-ի աշնանը, երբ արարական զորքի ներխուժումից ու Հեռացումից հետո հայ նախարարները հավաքվել էին, Թեոդորոսի խմբավորման կողմից ներկայացավ նրա փեսան՝ Համազապ Մամիկոնյանը, իսկ հակառակորդի կողմից՝ Մուշեղ Մամիկոնյանը։ Ոչ պաշտոնական կերպով հենց այդ ժամանակից, հատկապես 654-ից, երբ Թեոդորոս Ոշտունին մեկուսացվել էր և 655 թ. Համազապ Մամիկոնյանը հայ նախարարների համաձայնությամբ Հայոց իշխանի պաշտոնն էր ստանձնել։ Սերեսը Թեոդորոս Ոշտունու Ասորիք տարվելու մասին պատմելուց հետո ավելացնում է. «Եւ ունէր զիջխանութիւն Հայոց աշխարհիս Համազասպ Մամիկոնէից տէրն, որդի Դաւթի, այր առաքինի յամենայն դէմս»<sup>4</sup>, իսկ Դրասխանակերտցին զրում է, որ ներսեսը «Եւ միախորհ ապաւեալ ընդ նախարարացն, իշխան ի վերայ Հայաստանեացը կացուցանեն ոշամազասպ Մամիկոնէան»<sup>5</sup>։

Սերեսոսի վկայությամբ Հայաստանն արդեն հնիքակա չէր խալիքայությանը, «ի նմին ամի ի բաց կացին Հայք ի ծառայութենէ իսմայլեացւոցն»<sup>6:</sup>

Այսպիսով, 655-ին, երբ Խալիքայությունը գտնվում էր ճգնաժամի մեջ, Հայաստանը իր հարաբերությունները խզեց արարների հետ թևել 654-ին արարները գրավել էին Հռոդոս կղզին<sup>7</sup>, իսկ 655-ին լիկիայի ափերի մոտ (Մուսավիայի և Եգիպտոսի կառավարի Արդարաջի կազմակերպած) արարական նավատորմիզը շախախից 500 նավերից բազկացած բրուզանդական նավատորմիզը և կայսրը Հավիվ փրկվեց գերի ընկնելուց<sup>8</sup>, այսուհետեւ Խալիքայությունը ոչինչ շահեց այս Հաղթանակից, քանզի 655-ի քաղաքական ճգնաժամը, ինչպես արդեն տեսանք, լուրջ հնտևանքներ ունեցավ:

Բայտ Սերեսոսի, այդ ժամանակ Ներսես Գ Տայեցին (Իշխաննեցի) վերադարձավ իր նստավայրը և ձեռնարկեց ավարտելու Զվարթնոցի տաճարի շինարարությունը: Սերեսոսի այն արտահայտությունը, թե Հայ նախարարները «Հնազանդեցան անդրէն ի ծառայութիւն թագաւորին Յունաց»<sup>9</sup> հուշում է, որ Հայ նախարարներն ու կաթողիկոսը դիմեցին Կոստանդ Բ-ին և խնդրեցին, որ Համազասպ Մամիկոնյանին ճանաշի որպես Հայոց իշխան: Պատմիչը գրում է. «Եւ արար արքայի կոստանդին զՄամիկոնէից տէր զՀամազասպ Կիւրապազատ և հա նմա գահոյս արծաթիս և զիշխանութիւնն աշխարհին Հայոց և պատիւս այլոց իշխանացն և գանձս զաւրացն»: Բայտ Պրասիսանակերտցու, Ներսեսի խնդրանքով կայսրը հաստադացան Համազասպին<sup>10</sup>, ի պատասխան այս ամենի, Խալիքան (արքայն իսմայլի) կոտորել տվեց բոլոր Հայ պատանդներին, թվով 1775 հոգի և միայն 22 հոգի, որոնք այնտեղ չէին գտնվել, փրկվեցին<sup>11:</sup>

Սակայն Հայաստանում բարդ իրավիճակ էր ստեղծվել, որը նկարագրում է Սերեսոսը: 655-ին Մուշեղ Մամիկոնյանը, որ չորս պատանդ որդիներ ուներ արարների մոտ, չէր համարձակվել ապստամբել Խալիքայության գեմ: Համազասպ Մամիկոնյանը ևս մի պատանդ եղբայր ուներ (արդյո՞ք Գրիգոր Մամիկոնյանը)

գոր Մամիկոնյանը): Սակայն արարները, իրենց հետ տարած պատանդներից բացի, պահանջում էին, որ իրքն պատանդ Ասորիք տանեն նաև այլ իշխանների (իրենց կանանցով): Ահա այս պատճառով էր, որ Հայերը ապստամբել էին Խաչիֆայության դեմ և Հարել Բյուզանդիային, դաշնակից ունենալով Աղվանից իշխաններին ու զորքը, ինչպես նաև Այունիքը:

Կոստանդ Բ կայսրը, տեսնելով այս վիճակը, Հրամայեց ձերքակալել Մուշեղ Մամիկոնյանին և նրա հետ եղած ուրիշ իշխանների, սակայն շուտով ազատ արձակեց իշխաններին և իր մոտ պահեց միայն Մուշեղ Մամիկոնյանին:

Սերեսը պարզորոշ ցուց է տալիս, որ այս ամենից հետո սպանվեց Օսման խալիֆան (656), որին Հաջորդեց Ալին<sup>12</sup>: Սակայն ծանր էր նոր խալիֆայի վիճակը: Նրա մրցակիցները՝ Մուհամմադի մերձավորներ Թալհա իրն Արդալլահը և Զուբայր իրն Ավվամը, թեև նրան Հավատարմության երգում (բայասա) էին տվել, սակայն սկսեցին պայքարը նրա դեմ, որոնց միացավ Մուհամմադի այրին՝ Այխան: Հենց այս ընթացքում Ալին հեռացրեց Բասրայի, Քուֆայի և Եղիպտոսի Օսմանի կողմից նշանակված կառավարիչներին: Օգտվելով այս դրությունից Ասորիքի կուսակալ Օմայան Մուավիան Դամասկոսի մզկիթում ցուցադրեց Օսմանի արյունոտ շապիկը, գրգռելով ժողովրդին՝ ուժի հանեց Օսմանի մահվան մեղսակից Ալիի դեմ:

Շուտով Թալհան, Զուբայրը և Այխան զորքով եկան Ալիի դեմ, որ մնում էր Քուֆայում: Նրանք գրավեցին Բասրան, իսկ Քուֆան մնաց Ալիի կողմնակից միայն շնորհիվ այն բանի, որ նրա որդին՝ Հասանը, Հայտարարեց, թե Ալին Մադինայի փոխարեն Քուֆան է ընտրել որպես մայրաքաղաք: Տեղի ունեցած ճակատամարտում Թալհան և Զուբայրը սպանվեցին, իսկ Այխան, որն ուղարին նստած դիտում էր: Գերի ընկափ: Այս պատճառով այն ստացավ Ուղտի ճակատամարտ անվանումը<sup>13</sup>:

Սակայն այս Հաղթանակը ոչինչ չտվեց Ալիին, որի հեղինակությունը Միջագետքից այն կողմ չէր անցնում: Մուս-

վիան ամեն կերպ ձգտում էր դաշնակիցներ գտնել: 657-ին Եփրատի ափին գտնվող Սիֆֆին կոչված վայրում Ալիի և Մուավիայի զորքերի միջև տեղի ունեցած ճակատամարտը անորոշ վախճան ունեցավ<sup>14</sup>: Ալին համաձայնվեց, որ միշտ նորդ դատարանը որոշի, թե ով է մեղավոր: Իսկ դա նշանակում էր Ալիի վարկարեկումը: Ալիի անվճառականության գեմը բնդվագող կողմնակիցների խումբը կոչվեց խարիչի<sup>15</sup>, իսկ նրա կողմնակիցները՝ շիի<sup>16</sup>: Այսպիսով, այս դեպքերի ժամանակ սաղմնավորվեցին մահմեղականության (իսլամ) երեք ճյուղերը՝ Սուննա (կողմնակիցները կոչվում էին սուննիներ), Շիա (կողմնակիցները՝ շիիներ) և խարիչիներ (ապստամբներ):

Փաստորեն Ալին հենց սկզբից չէր իշխում ամբողջ Խալիֆայության վրա, ուստի պետությունը մասնաւում էր: Գնահատվում էր Մուավիայի հեղինակությունը: 661 թ. մի խարիչի սպանեց Ալիին<sup>17</sup>:

Ալիի խալիֆայության տարիներին և գեռ 655-ից սկսած Հայաստանը, Համազասպ Մամիկոնյանի օրոք, կապված մնաց Բյուզանդիային, թեև Հայաստանում բյուզանդական կայազոր չկար:

Համազասպ Մամիկոնյանի օրոք Հիմնականում ավարտվեց Հայոց իշխանապետության հողերի ամբողջացումը՝ Սյունյաց իշխանները, որոնք գեռեւ 571-ին ինչ-ինչ նկատական սումներով քաժանվել էին Հայաստան վարչական միավորից ուղարկած Պարսկական Հայաստան մարզպանությունից, և Սյունյաց կցել էր Աստրապատականի աշխարհահամարին, Համանիքը կցվել էր Աստրապատականի միավորվեցից պասպի օրոք Սյունիքը (Արցախի հետ) կրկին միավորվեց Հայաստանի հետ<sup>18</sup>: Սա ոչ միայն քաղաքական, այլև տքնական կարևոր նշանակություն ունեցող երկույթ էր:

Հայաստանի օրինակին հետեւցին նաև Վիրքն ու Աղվանքը՝ Մովսես Կաղանկատվացին այսպիս է նկարագրում վանքանից իշխան Զուանշիրի տրամադրությունները (մոտավորապես 655-ին). «Իրքի տեսանէր զգաւազանն իստութեան հարաւայնոյն (այսինքն՝ արաբների) ջուանշիր փորս ինչ հարաւայնոյն»

ժամանակ դաւաճանեալ զնոսսա»<sup>19</sup>: Երես թիբելով Խալիֆա-  
յությունից, նա շրջվեց Բյուզանդիայի կողմքը. «ընդ զօրավա-  
րին Հայոց (Համազասպ Մամիկոնյանին) զնէր ուխտ և քա-  
շալերէր դառնալ ի հնազանդութիւն կայսերն Հոռոմոց»<sup>20</sup>:

Զուանշիրը նամակ ուղարկեց Կոստանդ Բ կայսրին, որ-  
տեղ ասված է. «Ամենայալլթ տէր, Հզօր և ողորմած թագաւոր  
Հոռոմոց Օգոստոս Կոստանդին՝ ծովու և ցամաքի աստուա-  
ծաբար իշխան. Զուանշիր սպարապետ և իշխան Աղուանից  
հանդիրձ արմելեացս ծառայական աշխարհաւ նուաստարաց  
ողջունելով երկրպագէ»<sup>21</sup>: Այսպիսով Զուանշիրը հպատակու-  
թյուն է հայտնում Բյուզանդիային Կայսրը նրան պատաս-  
խանեց նամակով, որտեղ Զուանշիրին կոչում է «ապահիւ-  
պատ և պոոտոն պատրիկ» և գոհունակություն է հայտնում  
հնազանդություն հայտնելու համար<sup>22</sup>: Կոստանդ Բ-ը Զուան-  
շիրի խնդրանքով նվիրեց Քրիստոսի խաչափայտից մի կը-  
տոր, որի համար Համազասպ Մամիկոնյանը և հայ նախարար  
ները, ըստ Կաղանկատվացու<sup>23</sup>, նախանձեցին նրան: Այսպի-  
սի ոչ ճիշտ տեղեկություններից հետո, Մովսես Կաղանկատ-  
վացին հավաստիացնում է, որ Զուանշիրը հանդիպեց կայս-  
րին Վաղարշապատում, որը նույնպես կասկածելի է<sup>24</sup>: Ըստ  
Կ. Տրեվիրի, Զուանշիրի և կայսեր միջև նամակագրությու-  
նը հավանաբար պետք է կատարված լինի 658-ին<sup>25</sup>, թեև կա-  
րող էր նաև 656-ին եղած լինել:

Այսպիսով, Բյուզանդիան կրկին իր ազգեցության տակ  
գցեց Հայաստանը, Վիրը և Աղվանքը: Ինչ վերաբերում է  
Խալիֆայությանը, ապա Մուևգիան, Ալիի դեմ պայքարի  
ժամանակ իր թիկունքը Բյուզանդիայի կողմէից ապահովե-  
լու նպատակով, առաջարկեց Բյուզանդիային կնքել Հաշտու-  
թյան պայմանագիր, ըստ որի արարները Բյուզանդիային  
վճարելու էին «օրական հազար դաշեկան, մեկ ձի և մեկ  
ստրուկ»<sup>26</sup>: Այդ պայմանագիրը կնքվեց 659 թվականին:

Օգտվելով Խալիֆայության խառնակ վիճակից, Բյու-  
զանդիան իր դիրքերն ամրապնդեց Աֆրիկա (այժմ՝ Թունիս)  
նահանգում<sup>27</sup>, որը արարները ձգտում էին նվաճել:

Համազասպ Մամիկոնյանը մեռավ 661 թվականին<sup>28</sup>,

Ալի խալիքայի սպանությունից (661 հունվար) հետո իշխանությունն անցավ Մուավիային, որը դեռև 660 թ. երրուսաղեմում հռչակվել էր խալիքա<sup>29</sup>, իսկ 655 թ. սկսած անկախություն սիրառակայ էր:

Ալիք սպանությամբ Խալիֆայության սպատմության մեջ ավարտվեց մի յորահատուկ ժամանակաշրջան, երբ խալիֆան (ամիրապետը) ընտրվում էր և չկար ժառանգականություն: Պետության մայրաքաղաքն էր Մադինան (Ալին այն փոխադրեց Քուֆա) և Արաբիան խալիֆայության կենտրոնը: Այս շրջանում ուն սպառմում էին նահապետական կարգերը:

(Ակրա, Աւեքսանդրիա և այլք)՝  
Մուսավիրան մայրաբաղաք ընտրեց իր նստավայր Դա-  
մասկոսը և այսպիսով պետության կենտրոնը դարձավ Ասո-  
ւիքը (Սիրիան), որի բնակչությունը հիմնականում քրիս-  
տոնյա էր: Նրա արքունիքում «գիվանի և զործերի» կառավա-  
րիչն էր Սարքոս (Սիրիոս) իրն Մանսուքը<sup>31</sup>, որի որդին Հու-  
նական եկեղեցական մատենագրության հայտնի գեմքերից  
Հովհան Գամակացին է<sup>32</sup>: Նրա կինը՝ Մայսոնը, քրիստոն-  
ության Պամակացին է<sup>33</sup>: Նրա կինը՝ Մայսոնը, քրիստոն-

Մուավիայի խալիքա դառնալուց հետո Հայաստանու  
նույնպես փոխվեց քաղաքական իրադրությունը, քանզի Հա-  
մագասպի եղբայր Գրիգոր Մամիկոնյանի Հայոց իշխան

դառնալուց հետո Հայաստանը թերվեց դեպի Խալիֆայություն:

Դեռ և Հովհաննես Գրասիանակերտցին Գրիգոր Մամիկոնյանի Հայոց իշխան դառնալու մասին տարբեր տեղեկություններ են հաղորդում:

Ըստ Դեռդի, Մոււավիան, իր իշխանության առաջին տարում, սկսեց զորք հավաքել՝ հարձակվելու Հայաստանի վրա: Այդ մասին լսելով, Կոստանդ Բ կայսրը հրամայեց Կիլիկիայի կողմերում գտնվող զորավարին՝ ենել արար զորքի գեմ: Կայսեր հրամանով Թեոդորոս Խշտոնու որդին՝ Վարդը, մասնակցեց արարների գեմ մղված կովին, սակայն նպաստեց արարների հաղթանակին<sup>34</sup>: Յակուբին հիշրի 41 (7 մայիսի 661—25 ապրիլ 662) թվականին հիշում է, որ Հոռոմների թագավորը մեծ զորքով հարձակվեց, սակայն Մոււավիային խանգարող որոշ պատճառներով, վերջինս կայսեր մոտ ուղարկեց Հարիր իրն Մասլամային հաշտություն կնքելու տարեկան 100 հազար ոսկեգրամ (գինար) վճարելու պայմանով<sup>35</sup>: Նույն թվականի տակ Խալիֆա իրն Խայյաթը վկայում է, որ Մոււավիան հաշտություն կնքեց Ռումի հետ<sup>36</sup>: Ըստ Երևոյթին, Երկու պատմիչները շփոթում են 659-ի պայմանագիրը՝ նշելով 661-ին, քանզի 659-ին Մոււավիան, խիստ զբաղված լինելով Ալիի գեմ պայքարով, ստիպված էր հարկ վճարել Բյուզանդիային, իսկ 661-ին նա, որպես խալիֆա, ամրացրել էր իր դիրքերը: Համենայնդեպս պատերազմի (կամ պատերազմական վիճակ) պարագան հաստատվում է նաև Դեռդի վկայությամբ:

Ապա Մոււավիան (իշխան Խայյալի) հրովարտակ ուղարկեց Հայոց աշխարհը՝ պահանջելով հաբկ վճարել և հըպատակվել: Հայ նախարարները ներսես կաթողիկոսի նախագահությամբ ժողով գումարեցին և պարտավորվեցին տարեկան 500 դահեկան (հավանաբար՝ ոսկեգրամ) հարկ վճարել և Գրիգոր Մամիկոնյանին ու Սմբատ Բագրատունուն պատանդ տվեցին: Իր իշխանության երկրորդ տարում Մոււավիան իր մոտ կանչեց Գրիգոր Մամիկոնյանին ու Սմբատ

Բագրատունուն և Գրիգորին Հայոց իշխան նշանակելով  
բազում մեծարանքներով ուղարկեց նրանց Հայաստան։ Բա-  
տացվում է՝ Մուավիան 661-ին պահանջներ դրեց, իսկ  
662-ին Գրիգոր Մամիկոնյանին նշանակեց Հայոց իշխան<sup>37</sup>։  
Սակայն, եթե նկատի ունենանք, որ Մուավիայի՝ խալիֆա-  
յական իրական իշխանությունը սկսվում է 660 թվականից,  
ապա երկրորդ տարին կլինի 661 թվականը։

Հետաքրքրական է Հովհաննես Գրասիանակերտցու տե-  
ղեկությունը այս անցքերի մասին. «Ապա մեծ հայրապետն  
ներսէս հանդերձ նախարարօքն Հայոց հայցէ կացուցանել  
իշխանական պետութիւնն Հայոց ի Մաւեայ ամիրապետէ  
զԳրիգոր Մամիկոնիան, որ ի պատանդի իսկ առ նմա կա-  
ցեալ էր»։ Երբ Մուավիան պահանջում էր, որ Հայաստանը  
հպատակվի և հարկ վճարի, ներսես կաթողիկոսն ու նա-  
խարարները իրենց գումարած ժողովում որոշում են ընդու-  
նել նրա պահանջները և խնդրել, որ Գրիգոր Մամիկոնյանին.  
որը նրանց մոտ պատանդ էր, նշանակի Հայոց իշխան։  
Մուավիան ընդուածում է նրանց ցանկությունը<sup>38</sup>. Տեղին է  
վկայակոչել Սեբեոսի այն տեղեկությունը, թէ 655-ին Համա-  
վայակոչել Մամիկոնյանի այս պատանդ էր արարների մոտ<sup>39</sup>, հա-  
զասպի մի եղբայրը, որը պատանդ էր արարների մոտ և ա-  
վանաբար Գրիգոր Մամիկոնյանն էր։ Հովհաննես Գրասիա-  
նակերտցին ավելի է պարզում Զեռնդի տեղեկությունները։

Այսպիսով, 652-ի պայմանագրով Հայաստանը պար-  
տավորվել էր չնշին հարկ վճարել՝ պահպանելով իր քաղա-  
քական ինքնուրուցյությունը։ Հայաստանում չկար արարա-  
քական կայազոր և նույնիսկ չէր պահանջվում, որ հայկական  
կան կայազոր և նույնիսկ չէր պահանջվում, ինչպես 652-ի պայ-  
այրումին ենթարկվեր խալիֆայությանը, ինչպես 652-ի պայ-  
մանագրով էր նախատեսված։ Ըստ էության Հայոց իշխա-  
նապետությունը չեղոք երկիր էր երկու հզոր տերություննե-  
րի միջև։

Բանն այն է, որ Մուավիան, որը ըստ Յակուբիի վկա-  
յության, 661-ին գեռ զգուշանում էր Բյուզանդիայի զեւ  
պայքարի գորս գալուց, համենայնդեպս անհրաժեշտ գտավ  
Հայաստանի կողմից ապահովել իր թիկունքը, քանի որ միտք

ուներ Հետագայում արշավանքների դուրս դալ դեպի Փոքր Ասիա:

Եվ ահա նպաստավոր առիթը ներկայացավ, որը Հետացրեց Բյուզանդիայի դեմ պայքարը:

Կոստանդ Բ կայսեր իշխանության 650-ական թվականներին և 660-ականի առաջին տարիներին սրբի էին Հարաբերությունները նրա և մայրաքաղաքի բնակչության միջև: Կրծառվել էին մայրաքաղաքի պաշտոնյաներից տրվող ոռնչիկները: Կարեոր նշանակություն ունեցավ նաև կայսեր դաժան վերաբերմունքը իր եղբոր՝ Թեոդորոսի նըկատմամբ, որին նա սպանել տվեց: Այս առթիվ ատելության այնպիսի ալիք բարձրացավ նրա դեմ (նրան Կայսեր էին կոչում), որ նա 663-ին Հեռացավ Կոստանդնուպոլսից և կենտրոն դարձրեց Սիկիլիա կղզին<sup>40</sup>:

Այսպիսով, Փոքր Ասիան կենտրոնական իշխանության անմիջական Հակոպությունից դուրս մնաց և, բնականարար, ստեղծվեց անորոշ վիճակ: Օգտվելով այս առիթից, Մուավիան Հենց 663-ից կազմակերպեց արշավանքների մի ամբողջ շարք, որը Յակուբիի վկայությամբ տևեց Հիջրի 43 (663—664) թվականից մինչև Հիջրի 59 (678—679) թվականը: Այդ ընթացքում կատարվեց 16 ամենամյա արշավանք<sup>41</sup>:

Այս Հարձակումներից ամենավտանգավորը Բյուզանդիայի համար Կոստանդնուպոլսի դեմ գրոհներն էին:

Ֆադալա զորավարը 668—669-ին ցամաքային արշավանք կատարեց դեպի Փոքր Ասիա և Հասավ մինչև Քաղկեդոն: Գահաժամանգ Յաղիզը 669 թ. նավատորմիղով պաշարեց Կոստանդնուպոլիսը<sup>42</sup>: Սակայն 668-ին Կոստանդը սպանվել էր Սիկիլիայում, և կայսր էր Հոչակվել Հայազգի Մժեծը<sup>43</sup>: Շուտով նրան սպանեց գահաժամանգ Կոստանդինը և, շտապելով Կոստանդնուպոլիս, Հոչակվեց որպես կայսր Կոստանդին Գ, ապա Հակաճարված տալով արարներին, բատիպեց նրանց նահանջել<sup>44</sup>:

Արարները 674-ին ծովից կրկին Հարձակվեցին Կոստանդնուպոլսի վրա: Նրանք գրավել և Հենակետ էին դարձ-

բել Կիղիկոս թիրակղզին, որտեղից և Հարձակվում էին մինչև 678 թվականը։ Արարները ցամաքից էլ սկսեցին շարժվել դեպի Կոստանդնուպոլիս։ Բյուզանդացիք 678-ին նոր Հայտնաբերված «Հունական կրակով» ոչնչացրին արարական նավատորիզմը և 30 հազար կոտորեցին<sup>45</sup>։

Այդ ժամանակ Բյուզանդիայի դրդմամբ մարդաբաները մտան Լիբանան՝ տիրելով Ամանոսից (Սև լեռ) մինչև Երուսաղեմ։ Մուավիան 679-ին բանակցությունների մեջ մտավ Կոստանդին Դի Հետ և պայմանագրով պարտավորվեց Վեճարիկ տարեկան 300 հազար ռուկեղբամ, 50 ռազմագերի և 56 ազնվացեղ ձի, 30 տարի ժամանակով<sup>46</sup>։

Այսպիսով, երկու հզոր ախոյանների կատաղի գոտեմարտի հետևանքով Հայաստանը վայելում էր լիակատար ինքնուրույնություն, ապահովություն ու խաղաղ կյանք։ Անհնարիշությունը ապահովություն ու դիվանագետ էր կոնյանի գերը, որը հմուտ քաղաքագետ ու դիվանագետ էր և հոգատար տիրակալ։ Ղեռնդ պատմիչը վկայում է, որ Գրիգոր Մամիկոնյանը իր իշխանության տարիներին Հայոց աշխարհը խաղաղեցրեց, հեռու պահեց Հարձակումներից<sup>47</sup>։

Սակայն տեղի է ունենում մի բացառիկ դեպք։ Հովհաննես Գրասսանակերտցին վկայում է, որ Անաստաս կաթողիկոսի օրոք (661—667) Բառարա կոչված արար զորավարը (զորագլուխ), որը գտնվում էր Հայաստանում, մտնում է փակիրը, որի իշխան Ներսէհը կոտորում է նրա զորքը և փակույան մատնում<sup>48</sup>։

Պատմիչը այսպես է բնորոշում Գրիգոր Մամիկոնյանին, թե նա՝ «սկզբնավորող» (առաջնորդ) եղավ բազմաթիվ կարգերի, նախաձեռնությունների (ուղղութեանց), շինարարության, խաղաղասիրության և ապահովության (անվտանգության) ու լիակատար բարեկեցության, այնպես որ, այն երթյան ու լիակատար բարեկեցության, բնիտացավ արդար կիրը, որ գրեթե անապատ էր դարձել, բնիտացավ արդար վաստակի շավիղով<sup>49</sup>։ Իսկ Ղեռնդը վկայում է, որ նա եղայրաւասեր էր, օտարաւասեր և աղքատների գարմանիչ<sup>50</sup>։

Հետաքրքրական է, որ այդ ժամանակ Սուրբան անունով մի պարսիկ, «յազգէ թագաւորաց» (գուցե Ասսանյան-ների հետ հեռափոր կապ ունեցող), դիմում է Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանին՝ քրիստոնեություն ընդունելու ցանկությամբ։ Հայոց Անաստաս կաթողիկոսը մկրտեց նրան՝ տալով՝ Դավիթի անունը և շնորհեց Կոտայքի Զադ շենք որպես կալված<sup>51</sup>։ Գուցե հայերից քրիստոնեությունն ընդունելով՝ էին պարսիկներն արտահայտում իրենց գժգոհությունը արարական լժի նկատմամբ։

Երկարատես խաղաղության շնորհիվ բարգավաճեց ու բարեկարգվեց Հայաստանը։ Գրիգոր Մամիկոնյանն իր նըստավայրն էր գարձրել Արուճը, որն իր եղբոր օրոք էլ հավանաբար նստավայր էր եղել։ Հայոց իշխանն այստեղ կառուցից մի փառահեղ տաճար, որ մինչեւ օրս էլ կանգուն է և նրա կողքին՝ ապարանը։ Նա Եղվարդում<sup>52</sup> կառուցեց նաև մի եկեղեցի։ Արուճի տաճարի պատին դրվագված արձանապրության մեջ կարդացվում է. «... Հիմն արկեցաւ սուրբ կաթողիկէս ի ձեռն Գրիգորի Մամիկոնենի Հայոց իշխանի և Հեղինէի նորին զուգակցի...»<sup>53</sup>։

Վիրքում գուցե արարական կայազոր կար կամ արարական որեւէ զորամաս էր ներթափանցել, քանզի, ըստ Թարարիի, Հիջրի 42(26 ապրիլ 662—14 ապրիլ 663) թվականին արաբներն արշավել էին Ալանների գեմ<sup>54</sup>։

Հայաստանը Խալիֆայության կողմը թեքվելով, Վիրքն ու Աղվանքը ևս նույն քաղաքականությանը հիտենեցին։ Աղվանքի գրությունն ավելի ծանր էր, քանի որ Հյուսիսից խաղարներն էին սպառնում, Հարավից՝ արաբները։

Խաղարները, մոտավորապես 662-ին ներխուժեցին մերձկասպյան շրջանները, ապա Աղվանք և Կուր գետի ձախ (Հյուսիսային) ափին տեղի ունեցած ճակատամարտում ջուանշիրը հաղթեց ու ետ մղեց նրանց<sup>55</sup>։

Խաղարները (ըստ Կաղանկատվացու՝ Հոները) 664-ին ավելի մհծ պատրաստությամբ (բազմահազար հեծյաներով) կրկին ներխուժեցին Աղվանք։ Անցնելով Կուրից Հարավ ու

Հասնելով Արաքսի ափերը, նրանց թագավորը քշեց ոչ մի-  
այն տեղի, այլև Արտարայան գագառներից ու Սյունիքին  
այդտեղ արածելու բերգած հոտերն ու նախիրները և տա-  
րագ կորից հյուսիս: Ապա խաղարների թագավորի (խաքան)՝  
ցանկությամբ ջուանշիրը հաշտություն կնքեց՝ ամուսնանա-  
լով նրա զստեր հետ<sup>56</sup>: Հավանաբար խաղարների նպատակն  
էր Աղվանիրը զցել իրենց տիրապետության տակ<sup>57</sup>:

Սակայն ջուանշիրի համար Խալիֆայությունն ավելի  
վտանգավոր թշնամի էր: Կաղանկատովացու արտահայտու-  
թյամբ՝ նա վախենում էր, որ Հարավի բազմությունը (արա-  
բական զորքը) երկիրը ոտքի տակ կառնի ու կորորի և  
ցանձն առնոյր նուաճել ընդ լծով ժառայութեան թագաւորին  
հարաւոյ<sup>58</sup>:

Ըստ Մովսես Կաղանկատովացու, ջուանշիրը երկու ան-  
դամ Հարավի թագավորի (Մուավիայի) կանչով գնաց նրա  
մոտ: Կ. Տրեկերը<sup>59</sup>, հիշելով այս փաստը, այնուամենայնիվ  
մոտ: Կ. Տրեկերը<sup>60</sup>, հիշելով այս փաստը, այնուամենայնիվ  
մոտ: Կ. Տրեկերը<sup>61</sup>, հիշելով այս փաստը, այնուամենայնիվ  
մոտ:

Ջովսեթը Կաղանկատովացու՝ իր անգերեն թարգմանու-  
թյան տողասակի ժայցոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը  
նրան ընդունեց ու տարավ իր նստավայրը՝ Արուճ<sup>62</sup>:

Ըստ Կաղանկատովացու վկայության, երբ ջուանշիրը  
երկրորդ անգամ այցելեց Դամասկոս, այնտեղ էին «Բիւզան-  
դիայ» քաղաքից ժամանած երեխելի մարդիկ, որոնք հկել էին  
երենց վրա վերցնելու հագարացիների (արաբների) ծանր  
լուծը<sup>63</sup>: Զ. Գովսեթը նկատում է, որ գրան է վերաբերում Թեո-  
փանիսի<sup>64</sup> այն վկայությունը, թե Շապուհ Պարսկածին (Զ.  
Փովսեթը գտնում է, որ նա Հայ է) ապստամբի գեմ պայքա-  
րովսեթը գտնում է, որ նա Հայ է) ապստամբի գեմ պայքա-  
րովսեթը գտնում է, որ նա Հայ է) ապստամբի գեմ պայքա-

սին նվերներով ուղարկել էր Դամասկոս՝ Մուավիայից օգնություն խնդրելու<sup>63</sup>, Թեոփանեսը նշում է, որ Հաջորդ տարու 668) սպանվեց Կոստանդ Բ կայսրը, ուստի այդ այցելությունը պետք է կատարված լիներ 667-ին։ Բայց Կաղանկատվացու, Զուանշիրը կարողացավ Մուավիային համոզել, որ թեթևացքն Աղվանքի հարկերը<sup>64</sup>:

Այսպիսով, Մուավիան իր խալիֆայության շրջանում (661—680) կարողացավ Հայաստանն ու Հարակից երկրները (Վիրք, Աղվանք) իր ազգեցության տակ գցել, սակայն դրանեց մինչև իր մահը, որից հետո սկսվեց Արարական խալիֆայության երկրորդ լուրջ ճգնաժամը:

### 3. ՀՅ.ՅՈՅ ԱՆԱԱԽ ԽԾԽԱԽԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 680-ԱՆԱԱԽ ԲՎԱԱԱԽԱՆԵՐԻՆ

Մուավիայի մահից (680) հետո Օմայան պետությունը անմիջապես թուլացավ։ Ինչպես տեսանք, դեռ Մուավիայի իշխանության վերջին տարիներին զրա հիմքերը կային, երբ 678-ին արարական նավատորմիզը չախչախսկեց Կոստանդնուպոլսի մոտ, և Մուավիան պարտավորվեց տարեկան հարկ վճարել թյուղանդական կայսրությանը։

Մուավիայի որդուն՝ Յաղիպին (Եղիտ, 680—683) մերժեցին հավատարմության երգում տալ Արգալլահ իրն Զուրայրը և Ալի խալիֆայի երկրորդ որդի Հուսայնը։ Նույն (680) թվականին, իրեն համարելով գահի օրինավոր ժառանգորդ, Հուսայնը ապստամբեց, սակայն Քարրալայի (Իրաք) մոտ տեղի ունեցած ճակատամարտում սպանվեց<sup>65</sup>, Խալիֆայության մեջ բարձրացավ շիհների բողոքի ալիքը, քանի Յուսայնը Մուհամմադի թոռն էր և այդ պայքարին միացան նաև խարիչիները։ Խակ Արգալլահ իրն Զուրայրը իրեն խալիֆա էր հոչակել<sup>66</sup> և հաստատվել Մաղինայում։ Օմայան պետությունը (680) ժանր վիճակում էր, թուլացած ու քայլացված։ Յաղիպի մահից հետո էլ շատ նահանգներ հպատակվեցին<sup>67</sup> իրն Զուրայրին և, այսպիսով, Խալիֆայությունը լրիվ քայլացվեց։

Հասնելով Արարսի տփերը, նրանց թագավորը քշեց ոչ մի-  
այն տեղի, այն Արարտացան գավառներից ու Սյունիքից  
այդուհետ արածելու բերված հոտերն ու նախիրները և տա-  
րագ կուրից հյուսիսի: Ապա խազարների թագավորի (խարսն)  
ցանկությամբ ջուանշիրը հաշտություն կնքեց՝ ամուսնանա-  
լով նրա զստեր հետ<sup>56</sup>: Հավանաբար խազարների նպատակն  
էր Աղվանքը զցել իրենց տիրապետության տակ<sup>57</sup>:

Սակայն Ջուանշիրի համար Խալիֆայությունն ավելի  
վտանգավոր թշնամի էր: Կաղանկատվացու արտահայտու-  
թյամբ՝ նա վախենում էր, որ Հարավի թագմությունը (արտ-  
երկան զորքը) երկիրը ոտքի տակ կառնի ու կտրորի և  
շանձն առնոցը նուաճել ընդ լծով ժառայութեան թագաւորին  
հարաւոյ<sup>58</sup>:

Ըստ Մովսես Կաղանկատվացու, Ջուանշիրը երկու ան-  
գամ Հարավի թագավորի (Մուավիայի) կանշով գնաց նրա  
մոտ: Կ. Տրեվերը<sup>59</sup>, Հիշելով այս փաստը, այնուամենայնիվ  
գգուշանում է զրանց թվականները որոշելուց: Սակայն  
Դովսեթը Կաղանկատվացու՝ իր անգլերեն թարգմանու-  
թյան տողատակի ծանոթագրության մեջ, երկրորդ այցելու-  
ուան նկարագրության որոշ տվյալներից ելնելով, որոշում է,  
որ դա կատարվել է 667-ին:

Ջուանշիրը առաջին անգամ (դա կարող էր լինել 664 և  
667 թվականների միջև, զուցե՛ 665-ին) գնաց Գամասկոս  
Մուավիային Հպատակություն Հայտնելու վերադարձին ան-  
ցավ Հայաստանով և Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը  
նրան ընդունեց ու տարավ իր նստավայրը՝ Արուճ<sup>60</sup>:

Ըստ Կաղանկատվացու վկայության, երբ Ջուանշիրը  
երկրորդ անգամ այցելեց Գամասկոս, այնտեղ էին «Բիւզան-  
դիայ» քաղաքից ժամանած երեխի մարդիկ, որոնք եկել էին  
դեալ քրաքարից ժագարացիների (արաբների) ծանր  
երենց զրաքարեցներու հագարացիների (արաբների) ծանր-  
ությունը<sup>61</sup>: Զ. Դովսեթը նկատում է, որ դրան է վերաբերում Թիո-  
դորոսի<sup>62</sup> այն վկայությունը, թե Շապուհ Պարսկածին (Զ.  
Փանհսի) այն վկայությունը, թե Շապուհ Պարսկածին (Զ.  
Փանհսի) գտնում է, որ նա հայէ է) ապստամբի դեմ պայքա-  
րովսեթը գտնում է, որ նա հայէ է) ապստամբի դեմ պայքա-

Նման իրազրության մեջ Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը անկախ իշխում էր Հայաստանում և երկիրը երկարատե խաղաղության շնորհիվ սկսել էր բարգավաճել<sup>73</sup>:

Սակայն, եթե Հայաստանը այդ ժամանակ ապահով էր Խալիֆայության ու Բյուզանդիայի կողմից, այսուհանդեռձ կար երրորդ սպառնալիքը՝ խաղարները, որոնք է դարի կեսին պետություն էին ստեղծել Վոլգայի ստորին ավազանում և Հյուսիսային Կովկասի արևելյան մասում: Նրանք արգեն 662 և 664 թվ. ասպատակել էին Հայաստանի անմիջական հարեան Աղվանքը, իսկ 669-ին, երբ գավագրաբար սպանվեց Աղվանից իշխան Զուանշիրը և նրան հաջորդեց Եղբորորդին՝ Վարազ Տրդատը (669—699), զոների իշխան Ալփ Իլիթվերը, իրը թե կամենալով Զուանշիրի սպանության վրեժը լուծել, մեծ զորքով ներխուժեց Աղվանք: Վարազ Տրդատը նրա մոտ ուղարկեց Աղվանից Եղիազար կաթողիկոսին՝ Համոզելու, որ ինքը մեղսակից չէ Հորեղբոր սպանության մեջ և առաջարկելու հպատակություն զոներին: Եղիազարը մի կերպ կարողացավ Համոզել Ալփ Իլիթվերին, և նա հեռացավ<sup>74</sup>: Այսուհանդեռձ զոները հաճախ ասպատակում էին այս կողմերը<sup>75</sup>.

Այս սպառնալիքը ստիպեց Հայաստանին ու Աղվանքին Համատեղ գործել՝ շեղորացնելու վայրագ ցեղերին: Աղվանքի Վարազ Տրդատ իշխանը Մեծ Կողմանց գավառի եպիսկոպոս Տեր Խորացին ուղարկեց Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի և Սահմակ կաթողիկոս Զորոփորեցու (677—703) մոտ, որ ներկա լինի Գրիգոր Լուսավորչի նշխարները Թորգանից Վաղարշապատ փոխազրելու Հանդիսություններին, քանի որ Աղվանից եկեղեցին ենթակա էր Հայոց կաթողիկոսին<sup>76</sup>: Հավանաբար այս այցելությունը սոսկ կրոնական դրդապատճառներ շուներ, այլ նաև քաղաքական:

Դա երեսում է հենց այն բանից, որ հենց Խորացիը վերադարձավ Հայաստանից, Վարազ Տրդատը նրան անմիջապես ուղարկեց Հոնաց իշխան Ալփ Իլիթվերի մոտ՝ Համոզելու, որ ընդունի քրիստոնեությունը և այդպիսով շեղորացնի Հոների վտանգը: 682 թ. փետրվարին Խորացիի պատվիրա-

կությունը հասավ վարաշան՝ զոների մայրաքաղաքը, իսրա-  
յիլը ոչ միայն կարողացավ Ալփ Ելիթվերին համոզիլ խաղա-  
ղության դաշինք կնքելու զոների, Հայաստանի ու Աղվանքի  
հետ, այլև զոնաց իշխանը համաձայնեց բնդունել քրիստո-  
նությունը<sup>771</sup>.

Հոնաց իշխանը նամակներով դիմեց Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանին ու Սահակ կաթողիկոսին, Աղվանից իշխան Վարազ Տրդատին ու Եղիազար կաթողիկոսին՝ խնդրելով, որ իսրայելի դառնաւ Հոների եպիսկոպոս<sup>78</sup>, Պատասխան նամակում Հայոց Սահակ կաթողիկոսը և Գրիգոր իշխանը հրենց զոհունակությունը Հայտնեցին Հոների քրիստոնեական իշխան Ծարայի կողմէու ասթիվ։ Ի վերջո Հոների պատգամավոր թյունն ընդունելու ասթիվ։ Ի վերջո Հոների պատգամավոր թյունը Ծարայի Հոնաստան գնալու Հարցը լուծեցին Եղիազարի Հայոց<sup>79</sup>.

Մակայն այս բոլոր ջանքերն ի զերեւ ելան, երբ խաղար-  
ները 685 թ. ներխուժեցին Հայաստան, վիրք և Աղվանք։ Ղե-  
գանդի վկայությամբ, նրանք սպանեցին Գրիգոր Մամիկոն-  
յանին, բազում նախարարների և վրաց ու Աղվանից իշխան-  
ների<sup>80</sup>,

Գրիգոր Մամիկոնյանի փոխարքեն Հայ սահմարտութեան 685-ին Հայոց իշխան ընտրեցին Աշոտ թագավառունուն<sup>81</sup>, որը ո՞չ խալիքացից, ո՞չ էլ կայսրից հաստատվելու կարիք չուներ:

Նույն տարում Գամասկոսում ու Կոստանդնուպոլսում դաշնարձրացան երկու հռանգուն տիրակալներ՝ Օմայյան Արք ալ-Մայյուրը և Հուստինիանոս Բ-ը, որոնք լի էին երկու պետությունների միջև ընդհատված պատերազմը վերսկսելու վճռականությամբ։ Սակայն մեկի ձեռքերը կապում էին երկու իներքին տագնապալի վիճակը, մյուսը լոկ է՛ տարեկան եր Թեոփանեսը նրա մասին գրում է. «Իսկ Հուստինիանոսը, շուրջ 16 տարեկան պատանի լինելով, անխոհեմարար էր կառավարում երկիրը»<sup>82</sup>:

Արդ ալ-Մայյիրը 685-ին գեսպանություն ուղարկեց Հուստինիանոս Բ-ի մոտ՝ խաղաղություն հաստատելու համար, և կայսեր ներկայացուցիչը եկավ խալիֆայի մոտ ու նրանց միջև կնքվեց պայմանագիր։ Արդ ալ-Մայյիրը կարողացավ համոզել «անխոհեմ պատանուն», որ «լուծարքի ենթարկի կիրանանի մարգախտների զրարանակը», որը, ըստ էության, պատուհան էր Խալիֆայության համար, իսկ հատու զենք Բյուզանդիայի համար՝ Խալիֆայությունը ներսից խառնելու<sup>83</sup>։ Թեոփանեսը Հուստինիանոսի այս արարքը բնորոշում է այսպես. «Նա քանդեց մի պղնձե պարիսպ»<sup>84</sup>։ Պայմանագրի ստորագրումից հետո կայսրը իր մոտ բերեց 12 հազար մարդաբանների<sup>85</sup> և տեղափորեց Փոքր Ասիայի տարբեր մասերում։

Այսպիսի զիջման դիմաց Արդ ալ-Մայյիրը պարտավորվում էր վճարել օրական հաղար գահեկան, մեկ ձի և մեկ ստրուկ, իսկ Կիպրոսից, Հայաստանից, Իրերիայից (Վիրք) տրվող հարկերը երկու կողմերը կիսում էին հավասարապես<sup>86</sup>։

Նույն հաշտության պայմանագրը Միքայել Ասորին այսպիս է նկարագրում. «Երանք իրար հետ համաձայնեցին, որ Կիպրոսը մնա Հոսումների և արարների տիրապետության տակ և հարկը վճարվի երկու կողմերին։ Հայաստանը պետք է մնար Հոսումներին, Վիրքի (Գուրզան), Առանի (Արզոն) և Հյուսիսային Մարաստանի հետ, որը Ատրապատականն է։ Կայսրը դուրս բերեց կիրանանից մարդաբաններին և տարավ-

Թեսովաննեսի անզեկությունները որոշ տարակուսանք են առաջացնում: Նախ այդ ժամանակ Հայաստանում «տարակի-նոսների» (արարների) գորք չէր կարող լինել այն պարզ պատճառով, որ Արարական խալիֆայությունը, ինչպես տեսանք, քայլայված էր և երկու մասի բաժանված՝ մեկը ենթակա Արքալլահ իրն Զուրայրին, մյուսը՝ Արդ ալ-Մալիքին, որոնց միջև պայքար էր զնում: Իսկ ինչ վերաբերում է կեռտիոսի Հայաստանը և Հարակից երկրները Հպատակեցներուն և Հարկատու դարձնելուն, ապա ինչո՞ւ երկու տարի անց, ինչպես կտևնենք, Հուստինիանոսը անձամբ արշավեց՝ նվաճելու Հայաստանը, Վիրքն ու Ազգանքը: Բայ երկույթին Թեոփաններ Հուստինիանոսի կողմից 689 թ. կատարվածը (այդ Երկրները Հպատակեցները) վերագրում է կեռտիոսին: Հետարքրական է, որ Թեսովաննեսը այս տեղեկությունը Հազորդելուց առաջ նշում է (ինչպես արգեն գիտենք), որ Հուստինիանոսը անխոհեմարար էր կառավարում երկրը: Հայտնարար նա նկատի ունի տասը տարվա զինադադարի պայմանագիրը, որը շպետք է խախտվել:

Ինչպես նկատելի է, Աշուա Բագրատունին չէր գիտազրել բյուզանդական զորքին և ձեռնպահ էր մնացել: Ղեռնզը վերկայում է, որ Հուստինիանոս կայսրը Աշուա պատրիկի իշխանության ժամանակ մեծ զորք ուղարկեց Հայոց աշխարհը, որը ավերեց երկիրը ու Հարուստ ավարով ետ վերադարձավ<sup>91</sup>:

Հայ պատմիչների Հաղորդումներից պարզվում է, որ կեռնտիոսի զամանությունների զրդապատճառը Հայվանաբար այն էր, որ Հայաստանը 661-ին անցել էր խալիֆայության կողմը, իսկ 685-ի պայմանագրից Հետո բոլորովին չէր ձանաշել Բյուզանդիայի թեկուղ ձեւական զերիշխանությունը:

Աշուա Բագրատունին, Հակառակ այս ներխուժման, ամեն չանք թափում էր երկիրը շենացնելու: Բայ Ղեռնզի, նա ուժեն տեսակ բարեգործության կողմնակից էր և զրազվում էր շինարարությամբ: Դարույնը Ռոտանում նա կառուցեց և կեղեցի, որը զարդարեց Արևմուտքից բերած Քրիստոսի մի արժեքավոր սրբապատկերով<sup>92</sup>:

Ղեռնդը վկայում է, որ Աշոտ Բագրատունին, որպես Հայոց իշխան, կառավարեց չորս տարի և նրա իշխանության շորորդ տարում (689) արաբական (Իսլամյելի որդիների) մի զունդ (Հավանարար Հրոսակախումբ) ասպատակեց Հայաստանը և մեծ ավար կուտակեց Արաքսի հովտում՝ իրամում ու Հուղայում։ Աշոտ պատրիկը իր զորքով նրանց գեմ դուրս եկավ, և Հայերը կոտորեցին արաբներին։ Սրանց մնացորդները զիմեցին խորամանկության, ավարը դաշտում ցրեցին, որպես զիմեական զորքը այն հավաքելով զբաղվի, և իրենք կարողանան փախչել, փրկելու իրենց կյանքը։ Թեև Հայ ուազմիկներն իրոք զբաղվեցին ավարը հավաքելով, այսուհանդերձ Աշոտ Բագրատունին, սակագ մարդկանցով, հետապնդեց թշնամիներին, որոնք եւս դառնալով՝ խոցեցին նրան։ Հայոց զորքը, սթափվելով, վրա հասավ՝ կոտորեց ու փախուստի մասնեց թշնամուն։ Սակայն Հայոց Աշոտ իշխանը ստացած վերքից վախճանվեց<sup>93</sup>։

Այսպիսով, անկախ Հայաստանը (680—689) զինգ տարի վայելելով լիակատար խաղաղություն, շուտով երեք կողմից ենթարկվեց ասպատակությունների։ 685-ին՝ խաղարների, 687-ին՝ բյուզանդացիների, իսկ 689-ին՝ արաբների կողմից։

#### 4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՊԱԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԽԱՎԵԱՑԱՌՅԱՆ ԵՎ ԵՅՈՒԳԱԽԱԲԱԾԻ ՄԻՋԵՎ

Լեռնաիռոս զորավարի 687 թ. արշավանքը պատահական էր։ Հուստինիանոս թ-ը նկատելով Խոլիֆայության ծանր վիճակը, Համոզված էր, որ կարող է նվաճել Հայաստանը և արակեց երկրները (վիրը և Աղվանք)։ Լեռնաիռոսի ասպատակությունը հետախուզական նպատակներով էր կատարված։ Մնում էր իրացնել նվաճողական արշավանք։

Նույն 689-ին, երբ (Հավանարար՝ զարնանը) արաբները հրոսակախումբը ներխուժեց Հայաստան և Աշոտ Բագրատունին սպանվեց, Հուստինանոս թ-ը (իր թագավորության տունին սպանվեց,

Հորրորդ տարում) մեծ զորքով հարձակվեց Հայաստանի վրա՝ համբանը կամ աշնանը), զորքը երեք մասի բաժանելով, ոսրազվեց Հայաստանի, Վիրքի ու Աղվանքի նվաճմամբ: Նա իր մոտ կանչեց Հայ նախարարներին, որոնք, բայ Ասողիկի, ոչ իրենց կամքով, այլ ստիպված եկան: Ներսէն Կամսարականը Աշոտ Բագրատունու փոխարեն նշանակվեց Հայոց իշխան: Նա Հայ նախարարներից ոմանց, շատերի որդիներին, ինչպես նաև Հայոց Սահակ կաթողիկոսին Հինգ եպիսկոպոսներով պետք է տաներ Կոստանդնուպոլիս: Իսկ նախարարների մի մասին էլ Հաստատեց իրենց իշխանության մեջ ինչպիս երեսմ է Ասողիկի նկարագրությունից, Հայաստանում Հուստինիանոսի ներխուժումը մեծ դժոջություններ էր առաջացրել:

Հուստինիանոս Բ-ը Աղվանից Վարազ Տրդատ իշխանին Հաստատեց իր պաշտոնում և վերադարձավ Կոստանդնուպոլիս: Նա Հայաստանում թողեց «ԷՌ զօր օգնական իշխանացըն»<sup>94</sup>, Այդ ՅՈ Հազարանոց զորքը Համարիում էր օգնական ուժ (կայազոր): Հավանաբար արարական Հարձակումներից պաշտպանվելու, կամ Հետագայում նրանց դեմ Հարձակվելու նպատակով:

Թեոփանհասը անորոշ ձևով Հիշում է, որ արարշագործության 6179 (688) թվականին «կայսրը գալով Հայաստան, այնտեղ ընդունեց կիրանանի մարդաբաներին»<sup>95</sup>,

Թեև Հայաստանում կար բյուզանդական կայազոր, երկիրը Հիմնականում կառավարում էր Հայոց իշխան Ներսէն Կամսարականը, որը իշխեց չորս խաղաղ տարի: Նա բավականին ինքնուրույն էր, քանի զեռ Բյուզանդիայի և Խալիֆայության Հարաբերություններն անորոշ վիճակում էին և, ի վերջո, Հայաստանը մնում էր Բյուզանդիային դաշնակից, ինչպես է զարում:

Սակայն շուտով քաղաքական իրազրությունն արմատապիս փոխվեց, երբ Արդ ալ-Մալիք խալիֆային Հաջողվեց աստիճանաբար ոչնչացնել իր Հակառակորդներին:

Խալիքան նախ ձգտեց Հպատակեցնել խռովաճույզ Իրաքը, որի կառավարիչն էր Արաբիայում իրեն խալիքա Հայտարարած Արգալլահ իրն Զուրբայրի եղբայրը՝ Մուսաբը: Իրաքում Բասրան գտնվում էր խարիչիների ձեռքում, իսկ Քուֆան՝ շիհների, և այնտեղ Հպատակել էր Մուխտարը<sup>96</sup>: Արդաւ-Ալ-Մալիքը 686 թ. զորք ուղարկեց Մուխտարի դեմ, որը սակայն, պարտվեց: Շուտով Քուֆայի վրա Հարձակվեց Մուսակայն, պարտվեց: Շուտով Քուֆայի վրա Հարձակվեց Մուխտարի գլխավորությամբ: Իր զորքը Հայտնի զորավար Մուհամմադի գլխավորությամբ: 687-ին<sup>97</sup>:

Այդ ժամանակ խարիզիների ձեռքում էին Պարսկաստանի արևմտյան և Իրաքի որոշ մասերը, սակայն Մուհամմադը 688-ին իազնուաստ որևէ նրանց ուժերը:

689 թվականին Սիրիայում իրեն խալիֆա Հայտարարեց  
Արդ ալ-Մալիքի զարմիկը, որը սակայն բռնվեց և սպանվեց  
Արդ ալ-Մալիքի ձեռքբով:

Արդ ալ-Մալիքի ձեռքբով։  
Արդ ալ-Մալիքը զորք ուղարկեց Մուսարի գեմ և Տրգ-  
րիսի ափին, Դայր ալ-Ջասլիկ կոչված վայրում, տեղի ունե-  
ցավ ճակատամարտ։ Բանն այն է, որ Մուհամմադը Արեմը տ-  
յան Պարսկաստանում զբաղված էր խարիզմիների գեմ պաշ-  
տան Փարսկաստանում զբաղված էր խարիզմիների գեմ պաշ-

Այսպիսով, գլխավոր թշնամին շախշախսված էր (թես այլ կայքին խոռվության օջախներ), և Արդ ալ-Մա- վայրերում ևս կային խոռվության օջախներ), և Արդ ալ-Մա-

Սակայն բանն այն է, որ առիթը ստեղծեց Հենց Հուստինիա-նոսը՝ խախտելով Հաշտության պայմանագիրը:

Թեոփանեսը այսպես է նկարագրում վճռական ձակա-տամարտը (692) Բյուզանդիայի և Խալիֆայության միջե-«Այս տարի Հուստինիանոսը իր զաղթեցրած սկլավների մեջ ընտրություն կատարեց, ՅՈ Հազար հոգու զինվորագրեց, զի-նեց, անվանեց «արտակարգ զորք» և Հրամանատար նշանաւ-կեց Նեփուլոս անունով մեկին Նրանց վրա Հույս զնելով, նա արարներին գրեց, թե չեղյալ է Հայտարարում Հաշտության պայմանագիրը: Այդ «արտակարգ զորքն» առնելով, ինչպես և ողջ Հեծելազորը, կայսրը շարժվեց դեպի ծովափնյա Սե-րաստուպոլիս: Սրարները ձեւացնում էին, թե զեմ ևն խա-զազության վերացմանը, որ իրենց այդ բանին կայսրն է մղում, նրա Հեղհեղուկությունը և զինվելով, իրենք ևս եկան Սերաստուպոլիս: Վկայակոչելով երկուսի միջև երգումներով Հաստատված պայմանագիրը, նրանք կոչ էին անում կայսեր՝ շխախտել այն, քանզի Աստված կդատի և կպատուհասի մե-զավորներին: Այն պատճառով, որ կայսրը այդ խոսքերին ականչ անգամ շկախուց, բնդՀակառակը, փութաց մարտի, ա-րարները Հաշտության պայմանագրի բնագիրը (գլանափա-թեթքը) բացելով, զրոշակի փոխարեն երկար ձողի ծայրին կապեցին և Մոհամմեդ զորավարի զբխավորությամբ Հոսմա-յեցիների վրա Հարձակվեցին ու մարտ տվեցին: Ակղում ա-րարները պարտություն էին կրում: Մոհամմեդը, Հոսմայեցի-ներին դաշնակից սկլավների զորավարի Հետ զազանի բա-նակցեց, նրան օսկեկրամով լի մի կապարճ ուղարկեց, բա-զում խոստումներ տալով խարեց, Համոզեց ՅՈ Հազար սրկ-լավներով իր կողմն անցնել և զա ահա կանխորոշեց Հոս-մայեցիների փախուստը»<sup>101</sup>,

Թարարին վկայում է, որ Հիջրի 73 (23 մայիս 692—12 մայիս 693) թվականին Մոհամմադ իրն Մարտանը ամա-ռային արշավանք կատարեց և փախուստի մատնեց Հոսում-ներին: Ասկում է նաև, որ այդ տարում Օսման իրն ալ-Վա-լիդը Հայտաստանի կողմերում ձակատամարտում բախվեց՝

ունենալով շորս հազար, իսկ Հոռոմները՝ վաթսուն հազար զորք Նախուսուստի մատնեց նրանց և մեծ կոտորած տրվեց<sup>102</sup>;

Թեսովանեսի մոտ «Ճովափնյա» Սեբաստոպոլիսը սոսն Թյուրիմացություն է (գոյցե գրչական սխալ), իսկ Թաթարին այն համարում է «Հայաստանի կողմերում», որը գտնվում է Փոքր Հայքի Հյուսիսում (հաջուստինիանոսյան երկրորդ Հայքում)<sup>103</sup>; Անշուշտ արաբաց զորքի շորս հազար լինելը շափականցովիցուն է, քանի որ, ինչպես վկայում է Թեսովանեսը, ՅՈ հազար էր միայն սկզբների «արտակարգ զորքը», որի կողքին պատմիշը Հիշում է. «ինչպես և ողջ հեծելազուրը»: Ինչ վերաբերում է Թաթարիի մոտ հրամանատարների անունների շփոթությանը, ապա իրն Խայյաթը վկայում է, որ Մուհամմադ իրն Մարուանը Սեբաստիայում հաղթեց Հոռոմներին<sup>104</sup>:

Այս հաղթանակից հետո Արդ ալ-Մալիքը իր Հայացքն ուղղեց գեպի Հայաստան, որտեղ 693-ին վախճանված Ներսողություն գեպի Հայաստան, առաջ 693-ին վագրատունին անսեհ Կամսարականին հաջորդող Սմբատ Բագրատունին անդավ արարների կողմքը: Հավանաբար, 692-ի վճռական պարցավագարների կողմքը: Հայաստանից հեռացել էր Հայաստանից և անարյուն:

Թեսովանեսը արարչագործության 6185 (693) թվականին Հիշում է. «Այդ տարի Հայաստանի պատրիկ Սմբատը, իմաստով Հոռոմայեցիների պարտության մասին, Հայաստանը արարներին հանձնեց»<sup>105</sup>:

Միաժամանակ Արդ ալ-Մալիքը (Հայվանաբար՝ 693-ի Միաժամանը) իր եղբորը՝ Մուհամմադ իրն Մարուանին, նշակեց Հայաստանի և Զաղկիրայի կառավարիչը<sup>106</sup>,

Սեբաստուպոլսի հաղթանակից հետո, Արդ ալ-Մալիքը, մինչեւ իր իշխանության վերջը, ամենամյա արշավանքներ

կատարեց գեպի Փոքր Ասիա:

Իրն Խայյաթը Հիշուի 74 (13 մայիս 693—1 մայիս 694) թվականին Հիշում է Մուհամմադ իրն Մարուանի ընդհարու-

մը Հոռոմների հետ, Զարի մոտ Հիշում է նաև, «որ նա արշավեց Խումի դեմ՝ Հասնելով Անդարալիյա (Անդարին)<sup>107</sup>:

Հաջորդ, Հիշրի 75 (2 մայիս 694—20 ապրիլ 695) տարում Մուհամմադ իրն Մարուանը ամառային արշավանք կատարեց, իսկ Հոռոմները չումազա Ա. (28 օգոստոս—26 սեպտեմբեր) ամսին դուրս եկան Աամմակ (Մարաշի մոտ) Արան իրն ալ-Վալիդ իրն Ուկրա իրն Արու Մուայթն ու Դինար իրն Դինարը բախվեցին և Հաղթեցին նրանց<sup>108</sup>. Գուցեայս տարվա մասին է Թեսփաննեսի (արարձ. 6186—694) այն տեղեկությունը, թե Մուհամմադը իր Հետ վերցնելով գաղթական սկլավներին՝ որպես Ռոմանիային բաշատեղյակ մարդկանց, արշավեց Ռոմանիայի վրա և բազում մարդկանց դիրեվարեց<sup>109</sup>:

Ապա Հիշրի 76 (21 ապրիլ 695—9 ապրիլ 696) տարում Մուհամմադ՝ իրն Մարուանը Հոռոմների երկիրը արշավեց Մալաթիայի կողմից<sup>110</sup>. Ըստ Թեսփաննեսի (արարձ. 6187—695) թվականին Մուհամմադը արշավեց Չորրորդ Հայք և բազում գերիներով վերադարձավ<sup>111</sup>. Ուրեմն, Չորրորդ Հայքում գեռ բյուզանդական կայազոր կար: Յակուրին վկայում է, որ Հիշրի 76-ին Յաջիա իրն ալ-Հաբամը ամառային արշավանք կատարեց Մարզ ալ-Շահմ, որը գտնվում էր Մալաթիայի և Մամեստիայի միջեւ<sup>112</sup>: Այդ տարում (695) Հուստինիանոս Բ-ը գահընկեց արվեց և աքսորվեց: Կայսր դարձավ Լեռնտիոսը<sup>113</sup>:

Հաջորդ, Հիշրի 77 (10 ապրիլ 696—29 մարտ 697) տարում Վալիդ իրն Արդ ալ-Մալիքը արշավեց Հոռոմների երկիրը, Հասնելով Մալաթիայի ու Մամեստիայի մեջտեղը: Իսկ ծովով արշավեց Հասսան իրն նումանը<sup>114</sup>:

Իսկ Հիշրի 78 (30 մարտ 697—19 մարտ 698) թվականին Մուհարիդ իրն Արու Մուհրիզը արշավեց Հոռոմների երկիրը և գրավեց Աղկալան, սակայն վերադարձին տեղատարափ անձրես տակ ընկան Հադասի լեռնանցքի կողմերում և շատերը գոհվեցին<sup>115</sup>: Ըստ Թեսփաննեսի (արարձ. 6189—697

տարում) ապատամբեց կազիկայի Սերգիոս պատրիկը և երկիրը արաբներին հպատակեցրեց<sup>116</sup>,

Արաբները երկու արշավանք կատարեցին հիջրի 79  
 (20 մարտ 698—8 մարտ 699) թվականին։ Այդ տարում Իրն-  
 ալ-Հարամը (Արդ ալ-Մալիքի Հորեղբայրը) արշավեց հոռոմ-  
 ների երկիրը և գրաստ բերեց Մարզ ալ-Շամիյից Նույն տա-  
 րում Վալիդ իրն Արդ ալ-Մալիքը արշավեց Մալաթիայի Կող-  
 մից և ավարով ու գերիներով վերադարձավ<sup>117</sup>։ Այսպիսով  
 վեց տարվա (692—698) Խալիֆայության հարձակումները  
 Փոքր Ասիայի վրա, Հող էին նախապատրաստում Հայաստա-  
 նի նվաճման համար։ Այդ տարիներին Հայոց իշխան Սմբատ  
 Բագրատունին ինքնուրուցն իշխում էր Հայաստանում՝ ձեռ-  
 կանորեն կախման մեջ պատմիելով Խալիֆայությունից։

Սակայն կեռնտիոս կայսեր հեռացումով և ծովակալ Ապ-  
սիմարոսի 698 թ. կայսերական գահին տիրելով (Տիբերիոս  
անվան տակ)<sup>118</sup> գրությունը փոխվեց: Բյուզանդիան, վեց  
տարի Սերաստուպոլսի խայտառակ պարտության տպավո-  
րության տակ մնալուց հետո, փորձեց Հակաճարպած տալ  
արարներին: Թարարին վկայում է, որ Հիջրի 79-ին (698)  
Հոռոմները Հարձակվեցին Անտիոքի (զորքի) վրա<sup>119</sup> և, ըստ  
իրն աւ-Խոհեմ, Հառթեղին<sup>120</sup>:

Որպես պատասխան այս երկու հարձակումների, Արդ  
որպես պատասխան այս երկու հարձակումների 80 (9 մարտ 699—25  
ալ-Մայթբքի իր որդի Վալիդին Հիջրի

փետրվար 700) թվականին, այսինքն 699-ին, արշավանքի ուղարկեց Բյուզանդիայի գեմ<sup>122</sup>, բայց չի ասված, թե ինչ ուղղությամբ (Համանարար Փոքր Ասիայի արևելյան կողմերը): Մի ուրիշ արարական զորք նույն տարում Մուհամմադի իրն Մարուանի գլխավորությամբ մտավ Հայաստան: Արարները ներխուժեցին Զերմանաձոր գավառը և բերդերում ամրացած ներին խարեւությամբ ու խոստումներով Համոզում էին իշներ, սակայն, երբ իշնում էին, կոտորում էին տղամարդկանց, իսկ կանանց ու մանուկներին գերիվարում<sup>123</sup>: Նրանք շարժվեցին դեպի Հյուսիս և պաշարեցին Սևանի ամրոցը, որը երկու տարի դիմադրեց<sup>124</sup>: Այսպիսով Հայաստանի որոշ վայրերում մնացին արարական կայազորներ:

Արարները 699-ին չկարողացան Հայաստանը նվաճել: քանզի Հաջորդ՝ 700 թվականին, զրությունը բարդացավ, երբ Թիոփաննեսի վկայությամբ (արարչ. 6192—700 թվականին), Հոռմայեցիներն արշավեցին Ասորիքի վրա, Հասան մինչև Սամոսատ, ասպատակեցին մերձակա շրջանները, շատերին կոտորեցին (մոտավորապես 200 Հազար արար), ապա մեծ ավարով և բազում արար գերիներով վերադարձան, արարների մեջ սարսափ տարածելով<sup>125</sup>:

Այսպիսի իրագործության մեջ էլ արարները մնացին Հայաստանի որոշ մասերում: Արմինիա մակագրությամբ Հիջրի 81 (700) թվականին<sup>126</sup> զրամի առկայությունը, որը, Հավանարար, Դվինում է թողարկվել, ցույց է տալիս, որ գեռ 699-ից այստեղ եղել է արարական կայազոր: Թարարին վկայում է, որ Հիջրի 81 (26 փետրվար 700—14 փետրվար 701) թվականին Արդ ալ-Մալիքը իր որդի Ռուբայդալահին արշավանքի ուղարկեց և նա գրավեց Կարնո քաղաքը (Կալիկալա)<sup>127</sup> բյուզանդացիներից:

Արարները Հայաստանը վերջնականապես նվաճեցին միայն 701 թվականին:

Ղեկոնքը վերոհիշյալ տվյալները Հիշելուց Հետո, ավելացնում է՝ «Երկու տարի Հետո»<sup>128</sup>, այսինքն 701-ին, Մուհամմադի իրն Մարուանը, որին նա «արիւնարբու և դիւահար»

է կոշում, մեծ արշավանք կատարեց՝ նվաճելու ամբողջ Հայաստանը:

Ըստ Ղևոնդի, ուստի կատարվեց «ի վեշտասաներորդ ամիս»<sup>129</sup> Արդ ալ-Մալիքի (685—705), այսինքն 701 թվականին: Իրն Խալֆաթը<sup>130</sup> հիշորի 82 (15 փետրվար 701—3 փետրվար 702), այսինքն՝ 701 թվականին հիշում է, որ «այդ տարում Արդ ալ-Մալիքն իր եզրորդ՝ Մուհամմադին, ուղարկեց Հայաստան: Սկզբում բնակիչները զիմադրեցին նրան, (ահ), ապա փախուստի մատնվելով, հաշտություն խնդրեցին, որը շուտով կնքվեց:»

Այս նույնը ավելի հակիրճ կրկնում է Իրն ալ-Ասիրը<sup>131</sup>:

Ըստ Ղևոնդի, Մուհամմադը «ամբարտավանության գաղաթնակետին հասնելով, իր մահարեր թույնը դուրս տվեց և մահ էր նշութում ո. Գրիգորի ուխտի դեմ», որը Բագրկանդում էր: Արար ուազմիկների մի խումբ օթևանելու համար գնաց այդ վանքը, և տեսնելով նրա հարուստ գանձերն ու բարեկարգությունը, կեղծ մեղադրանք բարդելով վանական-բարեկարգությունը, կեղծ մեղադրանք բարդելով վանականները և ների վրա (իբր մի արարի սպանել էին վանականները և ցցել փոսի մեջ), կողոպտեց վանքը, իսկ նրանց բանտարկեց, ապա Մուհամմադի հրամանով մահվան դատապարտեց<sup>132</sup>: Ինչպես տեսնում ենք, Մուհամմադ իրն Մարուսանը որոշել էր սարսափ տարածել Հայաստանի բնակչության մեջ:

Ապա, ըստ Մովսես Կաղանկատվացու, հասնելով Հայաստան, Մուհամմադը շարժվեց դեպի Աղվանք և մտավ Չողայ Սակայն ապստամբած հայերը արգելափակում են Դվինում գտնվող արաբներին (կայազորը) և Բյուզանդիայից մեծ զորք բերելով (ածեալ զօր բազում ի Հռոմեց) կոտորում են 62 բերելով (ածեալ զօր բազում ի Հռոմեց) վերադառնապար արարի: Մուհամմադը Չողայից վերադառնապար արարի ամրոցը (Մովսեսատն բերդ), որը նալով, գրավեց Սևանի ամրոցը (Մովսեսատն բերդ), որը ներեք տարի պաշարված էր<sup>133</sup> (ըստ Հովհաննես Դրասխանականի երկու երկու տարի: «Երկեամ մի ամաց»<sup>134</sup>, որն ավելի կերտցու՝ երկու տարի: «Երկեամ մի ամաց»<sup>134</sup>, որն ավելի հավանական է), կոտորեց կղզում եղածներին և ավերեց ամ-հավանական է), կոտորեց կղզում եղածներին և ավերեց ամ-

մի մոտ չկա ոչ մի տեղեկություն, թե ո՞վ էր Դվինի ապրությունը գիշատիւթյան դեկավարը կամ արդյո՞ք Հայոց իշխան Սմբատ Բագրատունին ոչ մի դիմադրություն ցուց չտվեց:

Հայտնի չէ, թե ինչպես 701 թ. Հայաստանում Հայտնը լից բյուզանդական զորքը Գուցե այս գեալքում նկատի ունենանք Թեռփանեսի այն տեղեկությունը, թե Հայերը, երբ ապստամբեցին (703-ին), անմիշապես դիմեցին Ապսիխառոս կայսրին և հոռմայեցիներին բերեցին իրենց երկիրը՝ 703 թվականին, ինչպես կտեսնենք, Հայաստանում բյուզանդական զորք շկար և, Հավանաբար, 701-ին է, որ ապստամբելով Հայերը դիմեցին կայսրին և ստացան այն զորքը, որի օգնությամբ և պաշարեցին Դվինը, ապա գրավելով, կոտորեցին արարական 62 հազարանոց կայազորը:

Դեռնոր վկայում է, որ Մուհամմազը, այս բոլոր շարիքները գործելուց հետո, մեծ ավարով վերադարձավ Ասորիք, իսկ Հայաստանի բնակիչները «մնացին իրեն կրակից ծխացող, խանձող և խողերի ոտքերի տակ փիրված ցորենի խուրձ»<sup>135</sup>: Բայտ Հովհաննես Գրասիանակերտցու, Մուհամմազն իր հետ շղթայակապ վիճակում Դամասկոս տարավ Հայոց Սահակ կաթողիկոսին և իշխան Սմբատ Բագրատունուն՝<sup>136</sup>:

Բալազուրին Մուհամմադ իրն Մարուանի արշավանքը համարում է որպես պատասխան 680-ին Հայաստանի անկախացմանը Խալիֆայությունից: Նա գրում է: «Երբ իրն ալջուրացրի խոռվությունը (ապստամբություն) սկսվեց, Հայաստանն ապստամբեց և նրա ազատներն (աշբար) ու նրանց հետեւրդները ըմբռստացան, սակայն, երբ Մուհամմադ իրն Մարուանը իր եղբոր՝ Արդ ալ-Մալիքի կողմից Հայաստանի (Արմինիա) կառավարիչ նշանակվեց, կովեց նրանց գեմ, Հազբեց և կոտորեց ու գերեվարեց, իսկ երկիրը նվաճեց»<sup>137</sup>:

Ինչ վերաբերում է Աղվանքին, ապա, մոտավորապես 699-ին, իշխան Վարագ Տրդատին Բյուզանդիայի Ապսիխառոս կայսրը իր մոտ էր կանչել և երկու որդիների հետ ձերքակալելով, բանտարկել էր Կոստանդնուպոլսում, Հայանա-

բար հալիքայությանը Հպատակվելու ձգտումներ ցուցաբերելու պատճառով։ Աղվանից իշխան էր դարձել Շերոյեն (699—705):

Հինգ տարի անց, 704-ին, Վարազ Տրդատը վերադարձավ։ Նա Աղվանքը Հանձնեց արարներին և պարտավորվեց Հարկ վճարել<sup>138</sup>։ Իսկ Շերոյեն՝ Միջրանյան (Միջրական) տոհմի վերջին իշխանը, 705-ին արարների կողմից տարվեց Ասորիք<sup>139</sup>, որից Հետո Աղվանից իշխանի պաշտոնը վերացվեց։

Սակայն անհասկանալի է, թե ինչպես Վարազ Տրդատը Աղվանքը Հանձնեց արարներին, երբ կար Աղվանից Շերոյենիշխանը։ Գուցե երկուսի միջև Համաձայնություն կար։ Բացի այդ Հայտնի է, որ Աղվանքը նվաճվեց 701-ին Մուհամմադի երն Մարուանի կողմից։ Հավանաբար 704-ին կրկին նվաճվեց։ Կ. Տրեվերը գտնում է, որ արարները 705-ին նվաճեցին Աղվանքը և Շերոյեին տարան Ասորիք<sup>140</sup>։

Այսպիսով, 591-ից Հետո Պարսից Հայաստանն ունեցավ միայն Հայ մարդպաններ, ապա 628-ից՝ ստացավ լայն ինքնավարություն, իսկ Հունաց Հայաստանը սկսեց կառավարվել Հայ իշխաններով և, ի վերջո, 639 թ. Հայաստանի երկու մասերը միավորվեցին և Հայոց իշխանապետությունը վայելում էր քաղաքական ինքնուրույնություն, իսկ 680—688 թթ.՝ լրիվ անկախություն։ Այս քաղաքական գոյավիճակը պահպանվեց մինչև 701 թվականը, երբ արարները վերջնականապես նվաճեցին Հայաստանը։

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՄԱՅԱԿՈՆ ԽՈԼԻՅԱՅՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՐ ՎԻՃԱԿԻԸ ՆՎԱՐԵՌՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Հայաստանի և Հազիրայի փոխարքա Մուհամմադ իրն  
Մարուանը, նվաճելով Հայաստանը, 701 թվականին նվա-  
ճեց նաև Աղվանքը, մերձկասպյան շրջանները և Չողա (Ճո-  
ռա) երկիրը: Ենուս 697-ին Լազիկան ընկել էր արարական  
տիրապետության տակ, իսկ դա չեր կարող իրագործվել ա-  
ռանց Վիրքը գրավելու Հավանաբար 701-ին նվաճվեց նաև  
Վիրքը, որի վկայությունն է Հիջրի 85(705) թվականի արա-  
րատառ դրամի թողարկումը Տաֆլիս (Տփղիս) մակագրու-  
թյամբ: Ինչ վերաբերում է Դարրանդին, ապա 692—693-ին  
Մուհամմադ իրն Ուկրա զորավարը գրավել էր այն, իսկ ինչ-  
պես տեսանք, 701-ին Մուհամմադ իրն Մարուանը հասավ  
Չողա երկիրը: Թեև արարական տիրապետությունը Դարրան-  
դում գեռ կայուն չէր, այսուհանդեռձ նվաճված էր Համար-  
վում:

Այսպիսով, Արմինիա արարական վարչական միավորը  
(հահանգը) վերջնականապես ձևավորվեց 701 թ. նվաճումից  
հետո: Նրա բաղկացուցիչ մասերն՝ էին՝ Հայաստանը, Վիրքը  
(Ճուրգան), Աղվանքը (Առան), մերձկասպյան շրջանները  
(Հետագայում՝ Շիրվան) և Դարրանդը (Բար ալ-Արուար):

Հենց 701-ին Մուհամմադը նշանակեց Արմինիայի առա-  
ջին կառավարչին (ոստիկանին), որի անվան մասին արար  
և Հայ պատմիչները տարբեր վկայություններ են Հաղորդում:

Մեղ Հայտնի Հնագույն արաբ պատմիչը՝ Խալիֆա իրն Խայ-  
յաթը<sup>1</sup> (մեռ. 854) նշում է, որ Հիջրի 82 (15 փետրվար 701—  
3 փետրվար 702) թվականին Մուհամմադ իրն Մարուանը,  
Հայտնատանը նվաճելոց հետո, կառավարիչ նշանակեց նա-  
րիչ իրն Արդալլահ ալ-Անազիին: Նրանք (Հայերը) դավաճա-  
նեցին ու սպանեցին նրան: Ապա Հիջրի 83 (4 փետրվար  
702—23 Հունվար 703) թվականին կրկնում է, որ Մուհամ-  
մադ իրն Մարուանը նվաճեց Հայտնատանը և կառավարիչ նր-  
շանակեց Աբու Շայխ իրն Արդալլահ ալ-Ղանազիին և Ամրու-  
իրն Սաղա ալ-Ղանազիին, սակայն երկուախն էլ դավաճա-  
նեցին (Հայերը) և սպանեցին<sup>2</sup>: Նրանից ավելի ուշ ապրած  
իրն ալ-Ասիրը<sup>3</sup> (մեռ. 1233) նույնպես Հիջրի 82 թվականին  
Հիշում է. «Այդ տարում Մուհամմադ իրն Մարուանը արշա-  
վեց Հայտնատան, Հաղթեց և (Հայերը) Հաշտություն խրնդ-  
րեցին և նա Հաշտություն կնքեց ու կառավարիչ նշանակեց  
Աբու Շայխ իրն Արդալլահին, սակայն նրանք (Հայերը) դա-  
վաճանեցին ու սպանեցին նրան»<sup>4</sup>: Սակայն ասկում է, որ  
նրան սպանեցին Հիջրի 83 (4 փետրվար 702—23 Հունվար  
703) թվականին: Իրն Խայյաթի Հիշած երեք կառավարիչնե-  
րից միայն մեկին է Հիշում իրն ալ-Ասիրը՝ Աբու Շայխ իրն  
Արդալլահին:

Այսպիսով, կան երկու տարբեր անուններով անձնագույնից պահպանությունը պահպանվում է և անունը պահպանվում է պահպանից:

Արդալլահը կառավարիչ էր, իսկ Արդալլահ իրն Արու Շայ-ի պարագար, որ ուզարկվել էր Հայաստանը Հայտակեց-նելու: Բոլոր դեպքերում այս ամենը մնում են որպես վար-կածներ:

Բանն այն է, որ Հայաստանի և Հարակից երկրների նր-վաճումը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ արդեն բավա-կան ամրապնդվել էր Արարական խալիֆայությունը: Երկու քաղաքական ծանր ճգնաժամերից (Ալիի օրոք՝ 656—661 և Մուավիայի մահից՝ 680—692 թթ.) հետո Արդ ալ-Մալիքը Հիմնագրեց Օմայան պետությունը՝ դիմելով ամենախիստ մի-ջոցների: Նա արարացրեց ու մահմեդականացրեց Խալիֆա-յությունը: Մինչ այդ օգտագործվող Հունարենի ու պահակա-րենի փոխարեն պետական բոլոր գրասենյակներում արարե-րենը պարտագիր գարձրեց Հարկամատյաններում: 695-ին Թողարկեց առաջին արարատառ դրամները, իսկ մինչ այդ օգտագործվում էին բյուզանդականը (և պահակատառը): ու-րոշ տարբերանշաններով: Արդ ալ-Մալիքը վարչական ոլոր-տից հեռացրեց տեղացիներին, փոխարենը նշանակելով մահ-մեդականների (արարաների): Նրա օրոք էլ ավելի ծանրացավ Հարկային լուծը ոչ մահմեդական ժողովուրդների հանգեպ, քանզի զիսահարկի (շիզիա) նկատմամբ խստապահանչ էին:

Պետք է բնդգծել, որ է գարում ոչ միայն Հայաստանում (որը գեռ նվաճված չէր), այլև նվաճված երկրներում պահ-պանվում էր ներքին ինքնավարությունը, որը սակայն վե-րացվեց Արդ ալ-Մալիքի օրոք:

Միքայել Ասորին հիշում է, որ Վերին Միջագետքում, որի ազգարնակշությունը Հիմնականում ասորիներ էին, մինչ Արդ ալ-Մալիքը բոլոր վարչական գործերը (պաշտոնները) քաղաքներում և գաղափոններում (գյուղներում) վարում էին քրիստոնյա պետերը (պաշտոնյաները)<sup>8</sup>: Սակայն Արդ ալ-Մալիքի օրոք, երբ փոխարքա նշանակվեց Մուհամմադ իրն Մարտանը, ասորիներին հեռացրեց վարչական պաշտոննե-րից: Նա սպանել տվից եղեսիայի կառավարիչ Անդրեասի-որդի Անաստասիոսին և նրա «տունը կողոպտեց», այսինքն՝ ունեցվածքը բռնագրավեց<sup>9</sup>:

Կեղծ Գիոնիսիոսը վկայում է, որ հունաց 1003 (691—692) թվականին Աբդ ալ-Մալիքը հրամայեց, որ ամեն ասուրի գնա իր ծննդավայրը և այնտեղ գրանցվի<sup>10</sup>: Այսպիսով ծանրացավ գլխահարկի լուծը, քանզի մինչ այդ միայն Հոդահարկ էին վերցնում և սկսվեց քրիստոնյա ասորիների սարկությունը: Դա առաջին աշխարհագիրն էր, որ կիրառեցին արաբները: Բացի այդ, ըստ Բալազուրիի, Հիշրի 81 (26 փետրվար 700—14 փետրվար 701) թվականից Ասորիքում հունարենի փոխարեն սկսեցին օգտագործել (գրասենյակներում) արաբերենը<sup>11</sup>:

Նման գրության մեջ էր նաև Եգիպտոսը: Է դարում զբարիները նշանակվում էին գավառների կառավարիչներ և ապահովությունը օգտագործվում էր վարչական գործերում, սակայն Աբդ ալ-Մալիքի օրոք վարչական պաշտոնների նշակալվում էին միայն մաշնեղականներ և արաբերենը դարձավ գրասենյակային միակ լեզուն:

Ինչ վերաբերում է Հյուսիսային Աֆրիկային (Մազրիք), ապա Է դարում այն ևս Հայաստանի նման կոլխանձոր էր Խալիֆայության ու Բյուզանդիայի միջև և վերջնականացնապես նվաճվեց միայն Աբդ ալ-Մալիքի օրոք:

Փարսկաստանում ևս գրությունը ծանրացավ Աբդ ալ-Մալիքի օրոք: Է դարում պարսիկները գեռևա հույս ունեին Վեհրականգնելու իրենց պետականությունը: 661-ին Թոփավեհրականները իրենց պետականները (Հողատեր ազնվականներ) որստանի (Բալխ) գեհկանները (Հողատեր ազնվականներ) Զինաստանի օգնությամբ Պարսից արքա Հայտարարեցին Հազկերտ Գ-ի որդի Պերոզին: Սակայն 674-ին արաբները Հազկերտ Գ-ի որդի Պերոզին նրան, և Պերոզը ապաստան գտավ Զինաստան մղեցին նրան, և Պերոզը ապաստան գտավ Զինաստանը Հետագայում (680-ական թվականներին) Պերոզի որոնում: Հետագայում (680-ական թվականներին) Պերոզի որոնումը վերադարձավ Թոփարիստան և ապստամբությունը դի Ներսեցը վերադարձավ Թոփարիստան և ապստամբությունը դի Ներսեցը վերադարձավ պիտի սակայն, երբ 707-ին Բալիքը ասկսեց Խալիֆայության դիմ, սակայն, սակայն, երբ 707-ին Բալիքը արաբների կողմից վերջնականապես նվաճվեց, Ներսեցը արաբների կողմից վերջնականապես նվաճվեց, Ներսեցը շինական պաստանեց Զինաստանում: Պերոզը և Ներսեցը շինական պատրունիքում պաշտոնապես ճանաշված էին որպես Պարարբունիքում պաշտոնապես ճանաշված էին որպես Պարարբունիքում պատրունիքում պատրաստանում լիակատար կաստանի արքաներ: Է դարում Պարսկաստանում լիակատար

անկախ միավորներ էին Գիլան-Դալլամը, Թաքարիստանը՝ Կորկանը (Զուրչան):

Արդ ալ-Մալիքի և նրա հաջորդների օրոք արար կառավարիչները առավել անհանդուրժող էին զրադաշտական պարսիկների նկատմամբ և վերջիններս սկսեցին գաղթել Հնդկաստանի Գուշարաթ նահանգը: Արևելքի փոխարքան Հաջաջը թշնամություն ուներ մահմեդական պարսիկների նկատմամբ, քանի որ, ինչպես կտեսնենք, նրանք մեծ հոսնդով մասնակցեցին Արդ ալ-Ռաշիման իրն ալ-Աշասի ապրատամբությանը: Պարսիկ մառլանները (գերված, բայց մահմեդականությունն ընդունելով՝ ազատազրվածներ) համակրանք ունեին շիհների նկատմամբ, որոնք պայքարում էին Օմայանների դեմ, մանավանդ որ, ինչպես կարծվում է, Ալիի որդի Հուսայնը ամուսնացել էր Սասանյան տռումից մի իշխանություն հետո:

Պարսկաստանում մինչեւ է դարի վերջը պահակավերենը դեռ գրասենյակային լեզուն էր, սակայն Արդ ալ-Մալիքի հրամանով սկսեցին օգտագործել արարերենը:

Հայաստանում, Հենց նվաճումից հետո, կիրառվեցին խստություններ. առաջինը հարկային լուծն էր՝ ծանր զլխարկը: Այս ոլորտում բռնություններն այն աստիճանի հասան, որ Մուհամմադ իրն Մարուանը արգելեց ձկնորսությունը Վանա լճում, մինչդեռ նախապես դա թույլատրվում էր: Այդ մասին վկայում է Թ դարի աշխարհագիր Իրն ալ-Ֆակիհը. «Ինչ վերաբերում է տարեխի (թիոփի) լճին, ապա միշտ էլ նրանում թույլատրված է եղել (ձկնորսությունը), մինչեւ որ Մուհամմադ իրն Մարուան իրն ալ-Հաքամը, զառնալով Զազիրայի ու Հայաստանի կառավարիչ, արգելեց ձկնորսությունը»<sup>12:</sup> Նույնը կրկնում է իրն ալ-Ասիրը, ավելացնելով, որ Մուհամմադը Հատուկ պաշտոնյա նշանակեց, որը վերցնում էր Ճոկկը (տառեխը) և վաճառում<sup>13:</sup> Ապա արտահայտում է իր վերաբերմունքը այդ մասին. «Թանզի ով որ վատ օրինք սահմանի, ինքն է պատասխանատու դրա համար, ինչպես նաև այն մարդկանց համար, որոնք շարու-

նակում են այն պահպանել, մինչև վերջին հարության օրը,  
իսկ նրանց պատասխանատվությունը ոչ մի բանով չի կա-  
րելի պակասեցնել»<sup>14</sup>: Եթե մահմեդական պատմիչն այսպիս-  
դատապարտում է այս շարագործությունը, ապա ինչպիսի՞-  
զայրույթ պիտք է առաջացրած լիներ այդ արարքը վանա-  
լիք շրջակաւորի համականների մոտ:

Նոր նշանակված սատիկանը ստոնձգություններ էր ծրագրում հայ նախարարների զեմ՝ նրանց ոչնչացնելու և սիրուցիքները բռնագրավելու նպատակով։ Ղեռղը վկայում է. «Որոյ խորհուրդ վաս ի մէջ առեալ բառնալ զազատախումբ տուժմն յաշխարհէս Հայոց հանդերձ նոցին հեծելովք»։ Բայտ Հովհաննես Դրասիանակերացու, սատիկանը. «և կալանաւոր կապանօր շարշարէր զիշխանս և զազատս աշխարհիս Հայոց է ասաւոի առնուր ոնառասի և զատացուածս բազմաց»<sup>15</sup>.

Համարի առողջ զպարար և շայց իշխան  
Հատկապես զայրույթ էր առաջացրել Հայոց գործադրություն  
Սմբատ Բագրատունու և Սահակ կաթողիկոս Զորոփորեցու  
կապանքներով Դամակակոս տարպելը:

Աշա այս ամենը պատճառ դարձավ, որ ոտքի ելնես չաց ժողովրդի բոլոր խավերը՝ նախարարները, եկեղեցականները և շինականները:

2 703 թվականի սպառմանը ՅՈՒՆԻ

Արմինիայի առաջին ոստիկանը Հայ պատմիչների մոտ որակվում է ամենավատ մակնիշներով։ Հովհաննես Դրաս- խանակերտցին<sup>16</sup> նրան կոչում է «այր ժանտ, ժպիք և ա- պարասան» (անգլակ, լիրք և անողոք)<sup>17</sup>, վահան Գողթնա-

յու վարքում այսպիս է բնորոշված. «և առաջնորդ զօրուն որ  
ի Հայս Արգլայ անուն, դառն և շարաբարոյ»<sup>18</sup>, ինչպիս տե-  
սանք, նա ամեն տեսակ խստություններ և հալածանքներ  
կիրառեց և ծրագրում էր բնաջնջել նախարարական տներն  
ու այրուձին, իսկ Հայոց իշխան Սմբատ Բագրատունին և  
Սահակ կաթողիկոսը գերի էին տարիվել Գամասկոս։ Այս ա-  
մենը, բնականաբար, մեծ զայրույթ առաջացրեց Հայաստա-  
նի նախարարների, եկեղեցականների և շինականների մոտ։

Թեև 702-ին, ըստ Թիոփաննեսի<sup>19</sup> և Յակուբիի<sup>20</sup>, Արդ ալ-  
Մալիքի որդի Արդալլահը նվաճեց Մամեստիան, քերդ կա-  
ռուցեց և կայազոր նշանակեց, իսկ նույն տարում Զորրորդ  
Հայրի իշխան Վահան Հեպտագեմոնը (Յոթկյան) հպա-  
տակվեց Խալիֆայությունը, այսուհետեւ 702-ին ծանր  
դրության մեջ Հայտնվեց այդ պետությունը։

700 թվականին Արենելքի փոխարքա Հաջջաջը որոշեց, որ  
մահմեդականությունն ընդունած օտարները չպետք է ազատ-  
վեն զլխաչարկից, որի հետևանքով մեծ զժո՞նություն ա-  
ռաջացավ և մառանների (ազատազրված նորահավատ ըստ-  
րուկների) մի հոծ բազմություն միացավ այդ ժամանակ  
ապստամբած Արդ ալ-Ռահման իրն ալ-Աշասախին, որը դա-  
շի նկատմամբ հավակնություններ ուներ։ Վերջինս 701 թ-  
փետրվարին հաղթեց Օմայան զորքին, սակայն մարտին  
Բասրայի մոտ պարտվեց։ Համենայնդեպս ապստամբը դեռ  
շատ կողմնակիցներ ուներ, և Արդ ալ-Մալիքը փորձեց նրան  
սիրաշահել՝ պաշտոններ խոստանալով, սակայն զորքի ճընշ-  
ման տակ նա չհամաձայնվեց։ 702-ին Գայր ալ-Զամազի-  
մի ճակատամարտում Արդ ալ-Ռահմանը կրկին հաղթվեց  
Մուհամմադ իրն Մարտանից։ Նա մի քանի հազարանոց  
զորքով հեռացավ Հերատի կողմերը և միայն 704-ին վերջ-  
նականապիս պարտվեց Յաղիդ իրն Մուհամմարից ու սպան-  
վեց։

Այսպիսով Հայաստանում մոտավորապիս 702 թ. վեր-  
ջին շիկացած մթնոլորտ ստեղծվեց։ Հավանաբար այդ տա-  
րում, երբ Խալիֆայությունը գահի հավակնորդ Արդ ալ-

Խաջմանի սպատամբության հետևանքով խառը իրագործական մեջ էր, դամակությունը մի կերպ վերագրածան Սմբատ Բագրատունին և Սահակ կաթողիկոսը։ Հավանաբար տարբերական վեցին սպանվեց Արքինիայի ոստիկանը (Կառավարիչը)։

Զարդանալի է, որ ոչ մի հայ պատմիշ չի հիշում սամբկանի սպանությունը, մինչդեռ երկու արար պատմիչներ (Խալիֆա իրն Խաջջաթ<sup>21</sup> և իրն ալ-Ասիր<sup>22</sup>) պարզ վկայում են այդ փաստը, իսկ մեկը ակնարկում է (Քուֆի)<sup>23</sup>: Թեթևակի ակնարկում է նաև Թեսոփանները՝ գրելով. «Հայոց նախարարները սարակինուսների դեմ ապստամքեցին և Հայաստանում եղած սարակինուսներին կոտորեցին»<sup>24</sup>: Բայց Խալիֆա իրն Խաջջաթի, Հայերը սպանեցին երեք կառավարիշների<sup>25</sup>, իրն Խաջջաթի, Հայերը սպանեցին երեք կառավարիշների<sup>26</sup>: Իրն ալ-Անշուշտ գրանցից մեկը կառավարիշ Արու Շայխ իրն Արականցն էր, իսկ մյուս երկուսը՝ տեղակալները: Իրն ալ-Աղալացն էր, իսկ մյուս երկուսը՝ ապանեցին Արու Շայխ իրն Արականցն էր, որ Հայերը սպանեցին Արու Շայխ իրն Արականցն էր: Քուֆին այսպիսում է ակնարկում այդ փաստը. «Երբ Արդարաց իրն Արու Շայխը իր զորքով եկավ Հայաստան, նրա ժողովուրդը Համախմբվեց մեծ բազմությամբ տան, նրա ժողովուրդը Համախմբվեց»<sup>27</sup>: (զորքով) և կոտորեց բոլորին այնպես, որ ոչ-ոք-չփրկվեց:

բաց ժողով գումարեցին։ Սմբատը թեև նախկինում անցել էր Խալիֆայության կողմը և պատերազմել Բյուզանդիայի դեմ, սակայն արդեն բմբոնել էր Արդ ալ-Մալիքի քաղաքացիան նենգությունը նա իր մոտ (Հավանաբար՝ Դարսույնը) հրավիրեց Աշոտ իշխանի որդի Սմբատին, Թիոդորոս Բշտունու որդի Վարդին, իր եղբայր Աշոտին և այլ նախարարների՝ խորհրդակցելու, թե ի՞նչ կարելի էր անել։ Նըրանք եկան այն եղբակացության, որ պետք է Հեռանան Հայկական Տայք նահանգը, որը մասամբ մեկուսացված էր Շատնվիլով Բյուզանդիայի ազդեցության տակ) և այնտեղից Հետագայում կրկին կարող էին մտնել Հայաստանի ներքին նահանգները<sup>29</sup>:

Թեև նախարարաց ժողովը որոշեց շապստամբել և Հեռանալ, բայց Վասպուրականի նախարարներից ոմանքը բաժանվելով, գնացին Առեստակողմ կոչված վայրը, որտեղ մի սուրբ միայնակյաց էր ապրում և Հարցրեցին նրա կարծիքը՝ նա խորհուրդ տվեց զգույշ մնալ, և նախարարները որոշեցին Հեռանալ։ Եթե նախարարները հաստատ որոշել էին Հեռանալ, ապա ի՞նչ կարիք կար զիմելու միայնակյացին։ Գուցեց նպատակ ունեին նրա միջոցով եկեղեցու և անուղղակիուրեն նաև Սահակ կաթողիկոսի կարծիքն իմանալ։ Սահակ կաթողիկոսը, ըստ երեսությին, դեմ էր ապստամբության գաղափարին, քանի որ Հետագայում, ապստամբությունից հետո, Հայ նախարարները հենց նրան ուղարկեցին Համոզելու Հայաստան արշավող արար զորքի հրամանատարին, որ Հրաժարվի արյունահեղությունից<sup>30</sup>։

Ի վերջո Հայ նախարարները իրենց գնդերով շրջանցելով Մասիս սարք, հասան Ակոսի մեծ ավանը։ Սակայն նախաձավանի հինգ հազարից (այլ ձեռագրում՝ ութ հազարից) ավելի արարական կայազորն անմիջապես հետապնդեց նըրանց։ Նախարարների զորքը, կանգ առնելով Արարսի ձախափին գտնվող Վարդանակերտ ավանում, պատգամ Հղեց արարական զորքին, թե՝ մենք ապստամբության հետամուտ չենք և կամենում ենք լոկ Հեռանալ, ձեզ թողնելով մեր ընակա-

վայրերը, այգիները, անտառներն ու անգաստանները: Սակայն թշնամին չուզեց բանակցել, քանզի ութ հազարի (ըստ Վարդանի՝ 50 հազար) դիմաց կանգնած էր հայոց երկու հազարիդ էլ ատակաս զորամասը<sup>31</sup>:

Հայ զորականները ավանի փողոցներում պահպասխ  
կարգեցին, իսկ արարները նրանց գիմաց էին՝ սպասելով  
այգարացին: Սակայն ձմեռային սառնամանիքին անսովոր  
անապատի որդիները մինչև առավոտ սառել էին, և հայոց  
զորքը գրոհելով ջախջախեց նրանց: Սրից մազապուրծ ա-  
պառը արարներն ընկան Արաքս (Երասխ) գետը, սակայն  
սառուսո օտառմին և նորանք խեղգիցին:

Միայն 300 արաբներ, հազիվ փրկվելով, ապաստան ցին Շուշան տիկնոջ (Հավանարար՝ Կամսարական) մոտ, որը խղճական այդ խլյակներին, պատսպարեց նրանց։ Արանց իր զորքով հետապնդեց Աշոտի որդի Սմբատը, կամենալով սրի անցկացնել, սակայն ընդդառաջելով տիկին Շուշանի նորանքին, խնայից նրանց։ Բայ Ղեռնդի, վեհանձն հայուններին, նրանց վերքերը կապելով ու հանդերձներ տալով, իր հրամանութեան վերաբեր ուղարկեց խալիքացի մոտ<sup>32</sup>։

Ակներորեն վարդանակերտի հաղթական մարտին է վերաբերում Քոփիի հետևյալ տեղեկությունները: Նշանաւում է, որ Մուհամմադ իրն Մարուանը Զագիրայի, Հայաստանի (Արմինիա) և Աստրապատականի փոխարքա դառնալուցուց հետո, «զորքով գուրս եկավ Ասորիք (Եամ)» իր հետ ունենալով Մասլամա իրն Արդ ալ-Մալիք իրն Մարուանին, մինչև որ հասավ Զագիրայի հոգը: Հետո կանչեցին զինակից մերից մեկին, որը կոչվում էր Արդաւահ իրն Արու Շայխ ալ-Աբրից մեկին, որը կոչվում էր Արդաւահ իրն Արու Շայխ ալ-Ասուիջ և Ասորիքի զորքից նրան տաս հազար ուսազմիկներ Առաջ մասնել Հայաստան երկիրը, կռվելու այնտեղով՝ հրամացեց մասնել Հայաստան երկիրը, կռվելու այնտեղով գտնվող խազարների ու տարրեր անհավատների մեջ: Արդաւահ իրն Արու Շայխն իր զորքով հղեմ:

կամ ու մտավ Հայաստան երկիրը և նրա ժողովությունը, իմանալով այդ մասին, մահմեղականների՝ զեմ համախմբվեց մեծ բազմությամբ (զորքով), որը հարցուր հաղարից ավելի էր (այդ զորքը). բոլորին այնպես կոտորեց, որ ոչ-ոք շփրկվեց, ապա վերցրեց նրանց ունեցվածքը և զենքերը, վերցրեց այն ամենը, ինչ-որ կար նրանց մոտ»<sup>34</sup>:

Այս տողերից կարելի է եզրակացնել, թե զորավարը (որը, բնականաբար, կառավարիչ էր նշանակվել) սպանվեց բոլորի հետ, իսկ ինչ վերաբերում է ավարին, ապա իրոք, երբ հայ նախարարները Վարդանակերտի հակատամարտից հետո հեռանում էին գեղի արևմուտք, արաբական ընտիր երիվարներ ուղարկեցին Տիրերիոս Գ (Ապսիմարոս) կայսրին, ընծաներով: Կայսրը փոխադարձաբար կուրապաղատ տիտղոսը շնորհեց Սմբատ Բագրատունուն, որն իր զորքով նախարարների հետ հաստատվեց Տայքի Թուխմարք ամրոցում, զգուշանալով արաբներից: Հետաքրքրական է, որ զեռեց 698-ին Տիրերիոսի զորքի դիմ կովող Սմբատը քաղաքական նոր իրադրության մեջ միայն նրանից ստացավ կուրապաղատ տիտղոսը:

Թեև նախարարների վերոհիշյալ խումբը շուգեց զենքի դիմել և հարկադրաբար դիմեց միայն ու հաղթելուց հետո էլ հեռացավ, այսուհանդերձ Վարդանակերտի հաղթանակից ներշնչված, Հայաստանի տարբեր վայրերում զինված ապօստամբություններ սկսվեցին: Դեռնոյն վկայում է, որ ապարառու թշնամին, ըստ երեւյթին ստանալով նոր ուժեր, հարձակվեց Վասպուրականի վրա: Նա և Հայոց զորքը իրար հանդիպեցին Ռշտունյաց գավառի Գուկանք գյուղի մոտ: Թեսպիտ Հայերը սակավաթիվ էին, բայց մեծ զրոհով սրի քաշեցին նրանց: Միայն 280 հոգի փախուստի դիմելով ապաստանեց մի եկեղեցում: Հայ ուղմիկները, այլ միջոց շունենալով, մտածեցին Հրկիզել եկեղեցին, սակայն Վասպուրականի իշխան Սմբատը, Աշոտի որդին (արդյո՞ք Վարդանակերտի նույնանուն մասնակիցն էր) չթողեց գործել այդ սըր-

բապղծությունը (ապիրատութիւն). ի վերջո կարողացան նը-  
լանց գուրս բերել և բոլորին կոտորել<sup>35</sup>:

Վանանդ գավառում արաբական մի զորամաս, Օկրա-  
զորավարի գլխավորությամբ, հանգիպից Կամսարական իշ-  
խանին և ճակատամարտում բոլոր արաբները սպանվեցին.  
Միայն Օկրան մազապուրծ փրկվեց ու փախավ Ասորիք՝ ա-  
ղետի գույժը հազորդելու ամիրագետին:

Երբ Արդ ալ-Մալիքը լսեց կատարվածը, իր մոտ կան-  
չեց եղբօրք՝ Մուշամմադ իրն Մարուանին, ու հրամայեց մեծ  
զորքով հարձակվել Հայաստանի վրա և արյան մեջ խեղդել  
ապստամբությունը<sup>36</sup>: Հավանաբար զորքի հետ էր նաև Օկ-  
րան, քանզի, ըստ Հովհաննես Թրասխանակերտցու, նա էր  
հրամանատարը, որը քիչ է հավանական<sup>37</sup>: Հայ նախարար-  
ները հարմար գտան ուղարկել Սահակ կաթողիկոսին՝ բա-  
նակցելու հաշտության մասին և կանխելու աղետը: Թեև  
Հովհաննես Թրասխանակերտցին վկայում է, թե նա Գամաս-  
կոսում էր և այնտեղից զնաց Խառան<sup>38</sup>, սակայն ամելի հա-  
վաստի ենք համարում Ղեոնդի վկայությունը, որ նա 703-ին  
արդեն Հայաստանում էր և այստեղից զնաց: Սահակ կաթո-  
ղիկոսը մի քանի եպիսկոպոսների հետ Խառան հասնելով  
վարին գրավոր շարադրեց ու պատվիրեց իր մահվանից հե-  
տո նրան հանձնել: Հայրապետն իրոք վախճանվեց<sup>39</sup>:

Սահակ կաթողիկոսի գրավոր խնդրանքը, որը նա շեշ-  
տում էր, թե հայ ազգը պատրաստ է հպատակվելու և որա-  
տիուարեն խնդրում էր հրաժարվել արյունահեղությունից և  
կրօնական հանգուրծողականություն ցուցաբերել, հանձնվեց  
Մուշամմադ իրն Մարուանին, որը ինչ-ինչ նկատառումնե-  
րով ընդառաջեց կաթողիկոսի խնդրանքին և գրավոր երգի-  
նագիր տվեց հանգուցյալ կաթողիկոսին ընկերակցող եպիս-  
կոպոսներին, որոնք այն բերեցին Հայաստան Հայրապետի  
կոպոսներին, որոնք այն բերեցին Հայաստան Հայրապետի  
միակի հետ միասին<sup>40</sup>: Այս երդման գիրը ակներևորեն մի  
դիակի հետ միասին քրիստոնեացին էր միայն քրիս-  
տոնացանացիր էր, որով երաշխավորվում էր միայն քրիս-

տոնեական հավատքի հանդուժելիությունը, բայց ոչ նա-  
խարարների հոգատիրական ժառանգական իրավունքները:

Պետք է ընդգծել, որ այս զիջումը բոլորովին էլ բարյա-  
ցակամության հետեանք չէր: Բանն այն է, որ գեռ լրիվ չէր  
ճնշվել 701-ին ծագած Արդար-Ռազման իրն ալ-Աշասի  
Հումկու ապստամբությունը, որին միացել էին Իրաքի զոր-  
քը և արարների ու պարսիկ մասւաների (ազատագրված  
ստրուկների) մի հոծ զանգված: 702 թ. պարտությունից հե-  
տո ապստամբության ղեկավարը իր մնացած զորքով մնում  
էր Հերատում և որևէ պատեհ առիթով կարող էր կրկին բռ-  
պառնալ Օմայան խալիֆայությանը: Միայն 704-ին Յա-  
զիդ իրն Մուհամմարը վերջնականապես հաղթեց նրան ու  
սպանեց:

Բացի այդ, գեռ անորոշ էր Բյուզանդիայի հետ գոտե-  
մարտի ելքը: Շուտով, Հիջրի 85(14 Հունվար 704—1 Հունվար  
705) թվականին, այսինքն 704-ին, Արդ ալ-Մալիքի որդի  
Արդարական զորամաս, սակայն Հոռոմները հաղթեցին  
նրան: Խոկ Մայմոն ալ-Զուրջանմանին հազար հոգով սպան-  
վեց Տիանայի մոտ<sup>41</sup>: Այս պարտության մասին վկայում է  
նաև Թեոփանեսը՝ նրան Մայումա կոչելով: Ըստ Թեոփանե-  
սի, մոտավորապես 704-ին արարները ևս մի պարտություն  
կրեցին Կիլիկիայում: Նրանց զորքը Տիբերիոս Գ Ապահմարոս  
կայսեր եղբոր կողմից պարտվեց, և տասներկու հազար ա-  
րար կոտորվեց<sup>42</sup>:

Համենայնդեպս Մուհամմադ իրն Մարուանը եկավ Հա-  
յաստան, ինչպես վկայում են Ղեռնղը<sup>43</sup> և Խալիֆա իրն Խայ-  
յաթը<sup>44</sup> (սակայն թաքուն հետեւում է Հայ նախարարների  
գործունեությանը), և ամառն ու ձմեռն այստեղ անցկաց-  
րեց: Վարդանակերտի խայտառակ պարտության տպավորու-  
թյունն այնքան ուժեղ էր արարների մոտ, որ ասում էին,  
«Վարդանակերտ առիւ մի յիշեսցի մեզ» (Վարդանակերտը  
մեզ մոտ թող շհիշեն):<sup>45</sup>

Դեռ ավելին. 705-ին մեռած Արդ ալ-Մալիքի հաջորդ  
Վալիոր (705—715) իր իշխանության հենց սկզբին այսպես

Էր տրամաբանում Հայերի վերաբերյալ. «Նրանք միշտ խո-  
րնդութ և գայթակղություն կլինեն մեր իշխանությանը»<sup>46</sup>.  
Ուստի խալիքայտկան իշխանությունները շարիթ էին ծրա-  
պրում Հայ նախարարների գեմ այն քենի պատճառով, որ ու-  
նեին Ամրատ Բագրատունու գեմ: Նրանք հարմար առիթի էին  
սպասում և առիթը ներկայացագավ:

Այդ ժամանակ արսորից վերադարձավ Հուստինիանոս Բ-ը և 705-ի ամռանը կրկին տիրեց գաջին: Եվ ահա Սմբատ Բագրատունին դիմեց կայսրին (Ղեռնդի մոտ<sup>47</sup> պարզէ՝ իմանալով արարների գավերը, թե՛ լսելով Հուստինիանոսի վերադարձը կամ գուցե Հուստինիանոսը դրդեց Սմբատին Հարծակվել) և օգնական զորք խնդրեց, պայքարելու ամենի գայթական դիմ: Վերջինս համաձայնեց և մի զորավահալիքայության դիմ: Վերջինս համաձայնեց նրան: Սմբատը և ին Հրամանատարությամբ զորք ուղարկեց Կորսիկա և այդ զորավարը իրենց գնդերով մտան Վանանդ գավառը և կանգ առան Դրաշտպետ գյուղի մոտ, հավանաբար 705-ի աշնանը<sup>48</sup>:

Հասավ հոռոմներն ու հայերը մեծ բազմությամբ նրան դեմ  
դուրս եկան և Մուհամմադի իրն Մարուանը կատաղի կոփի  
մղեց նրանց գեմ այնքան, որ վախսեցավ, թէ կպարտ-  
վի և կխայտառակվի, քանզի անհավատները մեծ թր-  
վով էին հավաքվել նրա գեմ»<sup>50</sup>: Սակայն արաբները հաղ-  
թեցին՝ կոտորելով ու գերեվարելով, և գրավեցին նրանց եր-  
կիրն ու ունեցվածքը:

Այստեղ երկու կարեռ հանգամանք կա. նախ Քուֆին  
առաջինն է, որ հիշում է հայկական զորքի բյուզանդականի  
կողքին գտնվելը և ապա պարզվում է, որ արաբները հաղիպ  
են փրկվել խայտառակ պարտությունից<sup>51</sup>:

Արարական իշխանություններն արդեն առիթը բաց չեն.  
դեցին վրեժխնդիր լինելու թէ՝ 703-ի ապստամբության, թէ՝  
Ամբատ Բագրատունու՝ բյուզանդական և հայկական զորքի  
բով հարձակվելու համար:

Մուհամմադի իրն Մարուանը, հրաման ստանալով Վալիք  
խալիքայից՝ ոչնչացնելու հայ նախարարներին, կարգադրեց  
ոմն Կասիմի, որը հրամանատար էր նախճավանի կողմե-  
րում, իր մոտ կանչել Հայաստանի նախարարներին, պատ-  
ճառաբանելով, թէ իբր արքունի մարդահամարով պետք է  
անցնեն՝ հեծյալների համար հոռոգ (ռոճիկ) ստանալու և վե-  
րադառնան: Նախարարները շկասկածելով, ժամանեցին: Երբ  
հավաքվեցին, Կասիմը հրամայեց նրանց երկու մասի բա-  
ժանել. ոմանց հավաքեցին նախճավանի եկեղեցում, իսկ  
այլոց՝ Խրամի և, գոները փակելով, ողջակիպեցին:  
Փայտակերտ ծածկը, վառվող գերաններն ու շիկացած կրդ-  
մինդրը թափվել էին նրանց գլխին և ողջակիպել<sup>52</sup>: Բատ Մով-  
սիս Կաղանկատվացու, Նախճավանում զո՞վել էր 800 հո-  
գի, իսկ Խրամում՝ 400<sup>53</sup>: Դեռնդը<sup>54</sup> և Հովհաննես Գրասիա-  
նակերտցին<sup>55</sup> թվեր չեն հիշում:

Իսկ մեծ նախարարներին կապանքների մեջ խոշտան-  
դելով, պահանջեցին ոսկի ու արծաթ, խոստանալով գրանք-  
տալու գեպքում ազատ արձակել: Սակայն կողոպատելով, նը-  
րանց կախաղան հանեցին:

Ղեռնը բազում զոհվածներից հիշում է Բագրատունի տոհմից Արքատին, Արձրունի տոհմից՝ Գրիգորին ու Կորյունին, Ամատունի տոհմից՝ Վարագ Շապուհին ու Եղբորը: Հրկիզալների բնոտանիքներին քշեցին Դիլին, ապա գերեզմանից համասկոս, իսկ նրանց կալվածքները կողակտեցին<sup>56</sup>:

